ՍՈՑԻԱԼԱԿԱՆ[1] ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0052, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 9/16
Հեռ. (+37410) 550831
Էլ. փոստ՝ fca@fca.am,
Ինտերնետային կայք՝ www.fca.am

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0002, ք.Երևան, Բուզանդի 87, 85 տարածք
Հեռ. (+374 10) 59 23 23
Էլ. փոստ՝ info@araratbank.am,
Ինտերնետային կայք՝ www.araratbank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի դասը՝	Անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	Մինչև 30,000 (երեսուն հազար) հատ
Արժեկտրոնային եկամտաբերություն՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված
Արժեթղթերի թողարկման արժույթը՝	ՀՀ դրամ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	Մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ, որից մի մասը՝ կանոնադրական կապիտալի չափով, առանց ապահովվածության, մնացած մասը՝ ապահովվածությամբ

[1] Սոցիալական պարտատոմսերի թողարկումն իրականացվում է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International capital market association - ICMA) կողմից հրապարակված սոցիալական պարտատոմսերի սկզբունքների (Social bond principles) համաձայն: ՀՀ-ում սոցիալական պարտատոմսերի թողարկման տաքսոնոմիա առկա չէ, դրա ընդունվելու դեպքում հնարավոր են թողարկված պարտատոմսերը սոցիալական որակելու սկզբունքների տարբերություններ ICMA-ի կողմից սահմանված դրույթների հետ:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

«Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 3

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 4

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ 5
1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 12
1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 16
1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ 18
1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը 18
1.6. Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները 17
1.7. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը 18
1.8. Այլ էական տեղեկություններ 19
1.9. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները 19

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24

2.1. Ռիսկային գործոններ 24
2.2. Հիմնական տեղեկատվություն 27
2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ 29
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները 37
2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 42
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն 36

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 36

3.1. Անկախ աուդիտորները 36
3.2. Ռիսկային գործոններ 37
3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին 42
3.4. Բիզնեսի նկարագիրը 45
3.5. Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը 49
3.6. Հիմնական միջոցները 50
3.7. Զարգացման վերջին միտումները 51
3.8. Շահույթի կանխատեսումը 53
3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 56
3.10. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը 61
3.11. Հսկող անձինք 70
3.12. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 70
3.13. Լրացուցիչ տեղեկատվություն 71
3.14. Էական պայմանագրերը 71
3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 71
3.16. Այլ տեղեկատվություն 72

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Սերյոժա Հայրապետյան	**Դիտորդ խորհրդի նախագահ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտավազդ Խաչատրյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռաֆիկ Օհանյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռոլանդ Սուսունյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Ստեփանյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Էդվարդ Պետրոսյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

«Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

Քնարիկ Պետրոսյան	**Դիտորդ Խորհրդի անկախ անդամ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Զաքոյան	**Դիտորդ խորհրդի անկախ անդամ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Գաբրիելյան	**Գլխավոր, Գործադիր տնօրեն/նախագահ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մուշեղ Պետրոսյան	**Գլխավոր, Գործադիր տնօրենի տեղակալ/Գործառնական տնօրեն**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անի Սարգսյան	**Գլխավոր, Գործադիր տնօրենի տեղակալ/Ֆինանսական տնօրեն**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հրանտ Եղիազարյան	**Գլխավոր, Գործադիր տնօրենի տեղակալ/Վարկային տնօրեն**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Արսեն Լոբյան	**Գլխավոր, Գործադիր տնօրենի տեղակալ/Տարածքային զարգացման գծով տնօրեն**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հրաչուհի Հովհաննիսյան	**Գլխավոր հաշվապահ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մեսրոբ Ավագյան	**Ներքին աուդիտի բաժնի պետ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վախթանգ Աբրահամյան	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության նախագահ Գործադիր տնօրեն**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունների իսկությունը հաստատում եմ

Արմեն Գաբրիելյան	**Գլխավոր Գործադիր տնօրեն/նախագահ**		23.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ «ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ առևտրային կոոպերատիվ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԹՈՂԱՐԿՈՂ ԿԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԱԶԴԱԳԻՐ) ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ (INTERNATIONAL CAPITAL MARKET ASSOCIATION - ICMA) ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ (SOCIAL BOND PRINCIPLES) ՀԱՄԱՁԱՅՆ: ՀՀ-ՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԱՔՍՈՆՈՄԻԱ ԱՌԿԱ ՉԷ, ԴՐԱ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՆ ՈՐՈՇԱԿԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ICMA -Ի ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով Թողարկողի և/կամ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) ինտերնետային կայքերում՝ www.fca.am, www.araratbank.am:

2024 - 2025 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրն են հանդիսանում Ընկերության աուդիտ արված տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Սույն ազդագրում ներկայացված տեղեկատվությունը, բացառությամբ տարեկան ֆինանսական հաշվետվությունների, անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ առևտրային կոոպերատիվ,

ռուսերեն՝ «Фарм Кредит Армения» универсальная кредитная организация коммерческий кооператив

անգլերեն՝ «Farm Credit Armenia» universal credit organisation commercial cooperative

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ» ՈՒՎԿ ԱԿ,

ռուսերեն՝ «Фарм Кредит» УКО КК,

անգլերեն՝ «Farm Credit» UCO CC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16, գրանցման համարը՝ 43:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 55 08 31, (+374 10) 55-07-41

էլ. փոստ՝ fca@fca.am,

ինտերնետային կայք՝ www.fca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ Ֆինանսական տնօրեն Անի Սարգսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+37410) 550831, էլ. փոստ՝ anis@fca.am:

1.1.1. Կազմակերպության համառոտ նկարագիրը

Կազմակերպությունն իրավաբանական գրանցում է ստացել 2007թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ Կենտրոնական բանկում (լիցենզիա թիվ 20): Կազմակերպությունը հանդիսանում է առաջին կոոպերատիվ վարկային կազմակերպությունը և միակն է իր տեսակի մեջ Հայաստանում:

Կազմակերպության Հիմնադիր ժողովը տեղի ունեցավ 57 ֆերմերների, փոքր ու միջին ձեռնարկատերերի և ԱՄՆ Ֆարմ Կրեդիտ Համակարգի Վիրջինիայի Ասոցիացիայի Խնամառու Հիմնադրամի մասնակցությամբ: Ընտրվեց դիտորդ խորհուրդ՝ բաղկացած 5 անդամներից (մարզերի ներկայացուցիչներից) և արտաքին անդամից: Դիտորդ Խորհրդի նախագահ ընտրվեց Սերյոժա Հայրապետյանը, Գլխավոր գործադիր տնօրեն՝ Արմեն Գաբրիելյանը:

Կազմակերպության առաքելությունն է բարելավել կյանքի որակը Հայաստանի Հանրապետության գյուղերում՝ մատուցելով կոոպերատիվ սկզբունքների վրա հիմնված մատչելի ֆինանսավարկային ծառայություններ:

Կազմակերպության տեսլականն է՝ ՀՀ-ում գյուղատնտեսական վարկային ներդրումներով լինել առաջատարը վարկային կազմակերպությունների մեջ՝ հաճախորդներին մատուցելով նախընտրելի ծառայություններ:

Կազմակերպության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իրավունք ունի իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպության գործունեություն՝ ՀՀ ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության լիցենզիա ստանալու օրվանից:

Կազմակերպությունը, վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները և կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը Ազդագիրը ՀՀ ԿԲ ներկայացնելու պահին կազմում է 1,554,730,332.5 ՀՀ դրամ[2], իսկ անդամ փայատերերի թիվը կազմում է 11,827:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 1,525,623 հազ. դրամ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,525,623 հազ. դրամ): 2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը ունի 11,279 անդամ, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ունի 11,279 անդամ (2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,839 անդամ):

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կանոնադրական կապիտալի 561,252 հազ. դրամը կամ 36.79%-ը կազմում է «Գյուղ Կոոպ աջակցության» հիմնադրամի փայմասնակցությունը: Մյուս անդամների յուրաքանչյուրի փայմասնակցության չափը չի գերազանցում 1%-ը:

Կազմակերպության յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ ունեցած փայմասնակցության (փայերի քանակի) չափից:

2026թ. հունիսի 30-ի, 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված փայմասնակցություններ չեն եղել:

2026թ., 2025թ. և 2024թ. փայատերերի ժողովի ընթացքում Կազմակերպությունը շահաբաժիններ չի հայտարարել:

[2] Կազմակերպության փայատերերի տարեկան ընդհանուր ժողովի 2026թ.-ի մայիսի 14-ի որոշմամբ կազմակերպության կանոնադրական կապիտալը համալրվել է 29,107,000 (քսանինը միլիոն հարյուր յոթ հազար) ՀՀ դրամի չափով: Սույն փոփոխությունը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 08.07.2026թ.-ին:

1.1.2. **Բիզնեսի համառոտ նկարագիրը**

Կազմակերպությունը տրամադրում է հիմնականում **ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ**, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Ընդ որում, Կազմակերպությունը սպասարկում է առավելապես **գյուղացիական տնտեսություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց**, որոնց չափանիշները սահմանվում են Կազմակերպության Դիտորդ Խորհրդի որոշմամբ:

Կազմակերպությունը վարկեր է տրամադրում և այլ ֆինանսական ծառայություններ է մատուցում առավելապես Հայաստանի Հանրապետության մարզերում՝

ա) գյուղմթերք արտադրողներին, վերամշակողներին,

բ) գյուղացիական տնտեսությունների գործառնական կարիքների բավարարմանն ուղղված և դրանց ուղղակիորեն առնչվող ծառայություններ մատուցողներին (կոոպերատիվներ, ընկերություններ, անհատ ձեռնարկատերեր),

գ) Հայաստանի Հանրապետության մարզերում մշտապես բնակվող և գյուղացիական տնտեսություն վարող անձանց,

դ) ագրոպարենային ոլորտում գործող ցանկացած այլ տնտեսվարող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

Կազմակերպությունը տրամադրում է վարկեր Կազմակերպության անդամ ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին: Կազմակերպության անդամ փայատեր կարող են դառնալ այն քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք զբաղվում են գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ, վերամշակմամբ և հարակից այլ գործունեությամբ, առևտրային, արտադրական կամ ձեռնարկատիրական այլ գործունեությամբ:

Կազմակերպության անդամագրության կարգը հասանելի է Կազմակերպության կայքում՝ www.fca.am:

Ելնելով «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ հետագա աճի և զարգացման անհրաժեշտությունից՝ նպատակ ունենալով ընդլայնել ֆինանսական կապիտալ և ներդրողներ ներգրավվելու հնարավորությունները, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ փայատերերի ընդհանուր ժողովը որոշել է վերակազմակերպվել փակ բաժնետիրական ընկերության:

ՓԲԸ-ի բաժնետերեր են լինելու «ԳյուղԿոոպ աջակցության» հիմնադրամը և նոր ստեղծվող «Ֆարմ Կրեդիտ Կոոպ» ոչ առևտրային կոոպերատիվը, որի փայատերեր են լինելու «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ մնացած բոլոր 11,825 փայատերերը իրենց ունեցած փայամասնակցությունների չափով:

Կազմակերպության Դիտորդ խորհուրդը հաստատել է ճանապարհային քարտեզ համաձայն որի առաջիկա տարում կիրականացվի վերակազամկերպումը:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկերի ծավալը կազմել է մոտ 18.1 մլրդ ՀՀ դրամ:

Կազմակերպությունն ունի 11 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Մասնաճյուղերի ցանկը, հասցեներով ներկայացված է 3.3.1 մասում:

1.1.3. Ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը

2026 թվականի I կիսամյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով՝ կազմակերպության ակտիվների շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը ընդհանուր ակտիվների միջին մեծություն) կազմել է 1.3%[3], իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը) նույն ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է՝ 9.1%[4]:

2024թ. և 2025թ. տարեկան անկախ աուդիտորական ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով կազմակերպության ակտիվների շահութաբերությունը կազմել է համապատասխանաբար՝ 1.06% և 0.86%, իսկ կապիտալի շահութաբերությունը համապատասխանաբար՝ 7.10% և 6.00%:

Լևերիջի գործակիցը (ընդհանուր ակտիվների մեծության հարաբերությունն ընդհանուր կապիտալի մեծությանը) 2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ՝ կազմել է 6.83:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազ. ՀՀ դրամ

	30.06.2026թ.[5]	2025թ.	2024թ.
Ակտիվներ, այդ թվում	*20,948,124*	*20,399,721*	*18,644,618*
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում	*19,149,502*	*19,029,435*	*17,229,598*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17,946,655	17,798,315	15,901,513
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	419,642	-	-
Ներդրումային արժեթղթեր	1202847	1,231,120	1,328,085
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում	*91.4%*	*93.28%*	*92.41%*

Հաճախորդներին տրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում	*85.67%*	*87.24%*	*85.28%*

2026թ.-ի հունիսի 30-ի աուդիտ չանցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով կազմակերպության համախառն վարկային պորտֆելը կազմել է 18.1 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ թողարկողի վարկային պորտֆելում (ՖՀՄՄ) 90 օր և ավել

[3] Տարեկանացված

[4] Տարեկանացված

[5] 2026թ. տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն:


ժամկետանցություն ունեցող վարկերի մասնաբաժինը կազմել է 0.10%:

Թողարկողը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

1.1.4 Կազմակերպության կազմակերպչական կառուցվածքը

Կազմակերպությունը որևէ խմբի անդամ չէ:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը.



1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի և պարտատոմսերի հետ կապված ռիսկերի հետ:

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Կազմակերպությունը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գործընկերոջ (Counterparty Risk), գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը:

Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով Թողարկողը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը: Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար ներդրողները կարող են օգտվել Թողարկողի ինտերնետային կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից՝ www.fca.am:

Թողարկողի կողմից որպես առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Վարկային ռիսկը Կազմակերպության ֆինանսական վնաս կրելու ռիսկը, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները ընկերության նկատմամբ: Սա ազդում է վերջինիս գործունեության վրա, առաջացնում լրացուցիչ ծախսեր և բացասական անդրադառնում շահույթի վրա:

Իրացվելիության ռիսկը, ռիսկ, որ Կազմակերպույթունը չի ունենա բավարար իրացվելիություն սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունների դիմաց վճարում կատարելու համար:

Տոկոսադրույքի ռիսկը, այս ռիսկը տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխման արդյունքում ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է:

Արտարժութային ռիսկը, այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ: Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ միջբանկային գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների՝ մայր գումարի կորստի ռիսկ, փոխարինման ռիսկ, առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ, թողարկողի ռիսկ:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես՝ վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

Գործառնական ռիսկը, աշխատակիցների գործողությունների սխալների, տեխնիկական անսարքության և խարդախությունների հետևանքով ընկերության մոտ առաջացող միջոցների կորստի հավանականությունն է:

Առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ: Հաճախ իմաստ ունի տարանջատել այս երկու կատեգորիաները, քանի որ որոշ գործառնությունների գծով գործընկերոջ ռիսկը տարբեր է գործարքի կյանքի ընթացքում: Այն գործարքների դեպքում, երբ կողմերից երկուսն էլ փոխանակում են դրամական հոսքեր, ռիսկն ավելի բարձր է գործարքով նախատեսվող վճարումների իրականացման օրը (երբ Ընկերությունն իրականացնում է վճարումն առանց ստանալու հաստատումը, որ գործընկերոջ հանդիպակաց վճարումը հաշվեգրված է), քան վճարումների օրվան նախորդող ժամանակաշրջանում, երբ Ընկերությունը հնարավորություն ունի զերծ մնալ իր վճարումների կատարումից, եթե ակնհայտ է, որ գործընկերը չի կատարելու իր վճարումը:

Համաճարակների ռիսկ: Գյուղատնտեսության որոշ ենթաճյուղերում առկա է համաճարակային բռնկումների ռիսկը, որը կարող է հանգեցնել ֆերմերային տնտեսության մասամբ կամ ամբողջովին կորստին: Այս ռիսկը առկա է հատկապես անասնապահության մասով՝ խոզաբուծություն, թռչնաբուծություն, ձկնաբուծություն: Ֆարմ Կրեդիտը ցուցաբերում է զգուշավոր մոտեցում այս հարցում: Նշված բարձր ռիսկային ոլորտներում կազմակերպությունը չի իրականացնում վարկավորում, կամ իրականացնում է միայն այն դեպքում, երբ ֆերմերային տնտեսությունը ինքը արդեն դիվերսիֆիկացված է: Այսինքն, տվյալ ռիսկային ոլորտը ֆերմերի ընդհանուր տնտեսության մեջ կազմում է 50 տոկոսից պակաս: Այնուամենայնիվ, այս ռիսկի բարձր

զգայունություն ունեցող ճյուղերում ներդրումները կազմակերպության վարկային պորտֆելում կազմում են 1-2 տոկոս:

Ինչպես արդեն վերևում նշեցինք կազմակերպությունը չափազանց կարևորում է ինչպես սեփական վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան ըստ տնտեսության (այս դեպքում գյուղատնտեսության) ճյուղերի, այնպես էլ յուրաքանչյուր ֆերմերային տնտեսության ներքին դիվերսիֆիկացիան ըստ ոլորտների, ըստ մատակարարների կամ մթերողների, և այլն:

Կան նաև գլոբալ ռիսկեր, որոնք կարող են իրենց ազդեցությունը ունենալ գյուղատնտեսության և հատկապես վարկավորման վրա: Այս առումով իրավական ռիսկը առաջանում է պայմանավորված օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների հետևանքով: Մասնավորապես, հարկային դրույքաչափերի փոփոխությունը կամ նոր հարկատեսակի կիրառումը, առանձին ոլորտներում գործունեություն ծավալելու մասով սահմանափակումների կիրառումը կամ նոր կանոնների սահմանումը, միջպետական համաձայնագրերի կնքումը կամ կասեցումը, միջազգային համագործակցության հարթակներում տարբեր սանկցիաների կիրառումը կամ կասեցումը, և այլ իրավական փոփոխությունները կարող են առաջացնել ռիսկեր իրենց կարճաժամկետ կամ երկարաժամկետ ազդեցություններով:

1.2.2. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման

հետևանքով, այդ թվում՝ Պարտատոմսերի Շուկա ստեղծողի ծառայություններ մատուցող անձի (անձանց) բացակայության հետևանքով:: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Շուկայական ռիսկ: Շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Այն կարող է ի հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության դեպքում:

Իրացվելիության ռիսկ. Սա կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռքբերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Ներգրաված միջոցների օգտագործում: Պետք է դիտարկել Ազդագրի 2.2. Հիմնական տեղեկատվություն բաժնում նշված տեղեկատվությունը և ինքնուրույն որոշել այդ տեղեկատվության կարևորությունը պարտատոմսերում ներդրում անելու հարցում:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, որոնք թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտներին առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Ներդրողները նաև իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը պարտատոմսերի վաղաժամկետ մարման դեպքում (համաձայն Ազդագրի 2.3.4 կետի), որը պայմանավորված է վաղաժամկետ մարման գումարը առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Սոցիալական պարտատոմսերի թողարկումն իրականացվում է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International capital market association - ICMA) կողմից հրապարակված սոցիալական պարտատոմսերի սկզբունքների (Social bond principles) համաձայն: ՀՀ-ում սոցիալական պարտատոմսերի թողարկումը կարգավորող տաքսոնոմիա առկա չէ, դրա ընդունվելու դեպքում հնարավոր են որոշակի տարբերություններ ICMA -ի դրույթների հետ:

1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է որդեգրած ռազմավարությանը համաձայն: Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության Դիտորդ խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա վերջի համեմատ աճել են 2.69%ով կամ 548.4մլն ՀՀ դրամով՝ կազմելով 20.95 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2025թ. վերջի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա նկատմամբ աճել էին 1,755 մլն ՀՀ դրամով կամ 9.41%ով՝ կազմելով՝ 20.4 մլրդ ՀՀ դրամ:

Դիտարկվող ժամանակաշրջանի վերջում Կազմակերպության պարտավորությունների ծավալը կազմել է 17.9 մլրդ ՀՀ դրամ՝ 2025թ. վերջի համեմատ աճելով 2.35%-ով կամ 410.6 մլն ՀՀ դրամով: 2025թ. վերջի դրությամբ պարտավորությունների ծավալը կազմել է 17.5 մլրդ ՀՀ դրամ՝ 2024թ. դեկտեմբերի 31–ի համեմատ աճելով 1.5 մլրդ ՀՀ դրամով կամ 9.51 %-ով:

Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2026թ. հունիսի 30-ի դրությամբ նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 137.8 մլն ՀՀ դրամով կամ 4.71 %-ով և կազմել 3.06 մլրդ ՀՀ դրամ: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2025թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ 2024թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 238.2մլն դրամով կամ 8.86%-ով՝ կազմելով 2.9 մլրդ ՀՀ դրամ:

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունն ունեցել է 137.8 մլն զուտ շահույթ: Կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշները 2026 թվականի հունիսի 30-ին կազմել են համապատասխանաբար 9.20% և 1.33%[6], իսկ 2025 թվականին կազմել են համապատասխանաբար՝ 6.00% և 0.86%:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը Ազդագիրը ՀՀ ԿԲ ներկայացնելու պահին կազմում է 1,554,730,332.5 ՀՀ դրամ: Կազմակերպության կանոնադրական կապիտալը 2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1,525,623 հազար ՀՀ դրամ:

[6] 2026 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշները տարեկանացված են

2026թ. հունիսի 30-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Կազմակերպության դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ Կազմակերպության զարգացման հեռանկարների վրա:

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	30.06.2026 (աուդիտ չանցած)	2025 (աուդիտ անցած)	2024 (աուդիտ անցած)
Ակտիվներ	20,948,124	20,399,721	18,644,618
Պարտավորություններ	17,882,225	17,471,630	15,954,734
Կապիտալ	3,065,899	2,928,091	2,689,884

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	30.06.2026 (աուդիտ չանցած)	2025 (աուդիտ անցած)	2024 (աուդիտ անցած)
Զուտ տոկոսային եկամուտ	823,038	1,501,259	1,278,914
Զուտ գործառնական եկամուտ	777,022	1,325,162	1,217,049
Զուտ շահույթ/վնաս	137,808	168,441	181,463

Հիմնական տնտեսական նորմատիվներ 30/06/2026**թ. դրությամբ**

Նորմատիվներ (հազ. դրամ)	Փաստացի մեծությունը	ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	1,525,623	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	3,494,903	150,000	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	18.9%	12.0%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	5.8%	25.0%	Խախտում առկա չէ

Ն51 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը		10%	Խախտում առկա չէ
Ն52 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը		5.1%	Խախտում առկա չէ

1.4. **Թողարկողի աուդիտն իրականացնող անձ**

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի իր ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկելու նպատակով հրավիրում է արտաքին աուդիտ: Աուդիտորական կազմակերպությանն ընտրությունն իրականացվում է մրցույթի հայտարարման միջոցով, ինչի արդյունքում էլ նկատելի հանգամանք է վերջինիս փոփոխությունը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական կազմակերպության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

Կազմակերության 2024-2025**թթ.** Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ**-ն, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9-րդ շենք («Երևան Պլազա» բիզնես-կենտրոնի շենքում), հեռ. (+374)10 500 964, ինտերնետային կայք՝ www.grantthornton.am, կազմակերպության տնօրեն՝ Արմեն Հովհաննիսյան: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ:

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ -ի՝ 2024-2025թթ. եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5. **Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը**

Թողարկողի կանոնադրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

- **Փայատերերի ընդհանուր ժողով (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով)**, որը կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է,
- **Դիտորդ խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, որն ընտրվում է կազմակերպության Ընդհանուր Ժողովում,
- **Գլխավոր գործադիր տնօրեն:**

Կազմակերպության Դիտորդ խորհուրդը բաղկացած է վեց անդամից և երկու անկախ անդամից.

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1.	Սերյոժա Հայրապետյան	Դիտորդ խորհրդի նախագահ	ավելի քան 20 տարի
2.	Արտավազդ Խաչատրյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 14 տարի
3.	Ռաֆիկ Օհանյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 19 տարի
4.	Ռոլանդ Սուսունյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 8 տարի
5.	Արմեն Ստեփանյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 8 տարի
6.	Էդվարդ Պետրոսյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 13 տարի
7.	Հարություն Զաքոյան	Դիտորդ խորհրդի անկախ անդամ	ավելի քան 28 տարի
8.	Քնարիկ Պետրոսյան	Դիտորդ խորհրդի անկախ անդամ	ավելի քան 10 տարի

Թողարկողի կառավարմանը մասնակցող անձինք են.

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1.	Արմեն Գաբրիելյան	Գլխավոր Գործադիր Տնօրեն/Նախագահ	ավելի քան 32 տարի
2.	Մուշեղ Պետրոսյան	Գլխավոր Գործադիր Տնօրենի Տեղակալ/Գործառնական տնօրեն	ավելի քան 27 տարի
3.	Անի Սարգսյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ Ֆինանսական տնօրեն	ավելի քան 22 տարի
4.	Հրանտ Եղիազարյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ Վարկային տնօրեն	ավելի քան 25 տարի
5.	Արսեն Լոբյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Տարածքային զարգացման գծով տնօրեն	ավելի քան 18 տարի
6.	Հրաչուհի Հովհաննիսյան	Գլխավոր հաշվապահ	ավելի քան 26 տարի
7.	Մեսրոբ Ավագյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	ավելի քան 28 տարի

Կազմակերպության աշխատակիցների թիվը 2026 թվականի հունիսի 30-ի վերջի դրությամբ կազմել է 100 աշխատող, 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների միջին թվաքանակը՝ 100 աշխատող (2024թ.՝ 92):

2026թ. հունիսի 30-ի դրությամբ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ կանոնադրական կապիտալի 561,252 հազ. դրամը կամ 36.79%-ը կազմում է «Գյուղ Կոոպ աջակցության» հիմնադրամի փայմասնակցությունը: Մյուս անդամների յուրաքանչյուրի փայմասնակցության չափը

չի գերազանցում 1%-ը:

Կազմակերպության յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ ունեցած փայմասնակցության (փայերի քանակի) չափից:

2026թ. հունիսի 30-ի և 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված փայմասնակցություններ չեն եղել:

1.6. Թողարկողի կողմից առաջարկվող սոցիալական պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները

Պարտատոմսերի տեսակը՝	անվանական արժեկտրոնային
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	եռամսյակային
Պարտատոմսերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի
Պարտատոմսերի թողարկման արժույթը՝	ՀՀ դրամ
Պարտատոմսերի թողարկման ծավալը՝	Մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը՝	30,000 (երեսուն հազար) հատ
Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի տոկոսադրույքը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի շրջանառության ձևը՝	Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում: Ազդագիրը ԿԲ

	գրանցման ներկայացնելու պահի դրությամբ Պարտատոմսերի երկրորդային շուկայում իրացվելիություն ապահովելու (շուկա ստեղծող հանդիսանալու) մասով պարտավորություն ունեցող անձինք բացակայում են:
Պարտատոմսերի ապահովվածությունը	Պարտատոմսերը կարող են լինել առանց ապահովման կամ երրորդ անձի երաշխավորությամբ ապահովված: Առանց ապահովվածության կարող է լինել կանոնադրական կապիտալի չափով թողարկված մասը, իսկ մնացած մասը՝ ամբողջությամբ ապահովվածությամբ համաձայն գործող օրենսդրության:
Այլ	Յուրաքանչյուր տրանշի համար կազմակերպության Դիտորդ խորհուրդը կարող է սահմանել լրացուցիչ ֆինանսական նորմատիվների ցուցանիշներ, որոնք պետք է պահպանվեն տվյալ տրանշի ամբողջ ընթացքում:

Կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն օգտագործվելու են գյուղական տնտեսությունների, ֆերմերների, կին ձեռնարկատերերի և ՓՄՁ-ների ֆինանսավորման համար (Ազդագրի 2.2. Հիմնական տեղեկատվություն կետին համաձայն):

1.6.1. *Վերջնական պայմանների հրապարակման ձևը*

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ենթակա են որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Դիտորդ Խորհրդի կողմից, յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման պայմանները ենթակա են հրապարակման հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Թողարկման պայմանները հրապարակվելու են Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fca.am , www.araratbank.am:

1.7. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝

Բորսա) տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման պայմանները տեղաբաշխման օրվանից առնվազն 2 աշխատանքային օր առաջ հրապարակվելու են Թողարկողի, ինչպես նաև Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ համապատասխանաբար՝ www.fca.am, www.araratbank.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Թողարկողը տասը աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Պարտատոմսերի թողարկմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

1.8. Այլ էական տեղեկություններ

Թողարկողի ֆինանսական հաշվետվությունները հասանելի են Թողարկողի պաշտոնական կայքում՝ www.fca.am , ինչպես նաև Ազդագրին կից Հավելվածներում:

1.9. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30.06.2026 (աուդիտ չանցած)	2025 (աուդիտ անցած)	2024 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	137,808	168,441	181,463
Սեփական կապիտալի միջին մեծություն	2,996,995	2,808,988	2,556,405
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	9.10%	6.00%	7.10%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	137,808	168,441	181,463
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	20,673,923	19,522,170	17,147,702
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.30%	0.86%	1.06%

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	137,808	168,441	181,463
Գործառնական եկամուտ	794,960	1,501,259	1,278,914
Զուտ շահույթի մարժա (NPM), %	17.34%	11.22%	14.19%
Գործառնական եկամուտ	794,960	1,501,259	1,278,914
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	20,673,923	19,522,170	17,147,702
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	7.69%	7.69%	7.46%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	20,673,923	19,522,170	17,147,702
Սեփական կապիտալի միջին մեծություն	2,996,995	2,808,988	2,556,405
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.90	6.95	6.71
Զուտ տոկոսային եկամուտ	823,038	1,501,259	1,278,914
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,299,290	18,129,517	15,781,793
Զուտ տոկոսային մարժա (NIM)	8.5%	8.28%	8.10%
Տոկոսային և կոմիսիոն եկամուտ	1,482,214	2,784,449	2,373,409
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,299,290	18,129,517	15,781,793
Եկամտբեր ակտիվների եկամտաբերություն, %	15.36%	15.35%	15.03%
Տոկոսային ծախսեր	659,176	1,283,190	1,094,495
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	17,749,536	17,325,801	15,833,466
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	7.42%	7.41%	6.91%
Տոկոսային և կոմիսիոն եկամուտ	1,482,214	2,784,449	2,373,409
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,299,290	18,129,517	15,781,793
Տոկոսային ծախսեր	659,176	1,283,190	1,094,495
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	17,542,820	17,134,373	15,600,807
ՍՊՐԵԴ	7.85%	7.87%	8.02%

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Թողարկողի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

2.1.1. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանը՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Պարտատոմսերին առնչվող հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել հետևյալները.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է, այդ թվում՝ Պարտատոմսերի Շուկա ստեղծողի ծառայություններ մատուցող անձի (անձանց) բացակայության հետևանքով: Վերջինս կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռքբերման գինը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկ կարող են կրել այն ներդրողները, ովքեր իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստիպված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից ՀՀ դրամի:

Տոկոսադրույքի ռիսկը: Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, որոնք թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտներին առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Ներդրողները նաև իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը պարտատոմսերի վաղաժամկետ մարման դեպքում (համաձայն Ազդագրի 2.3.4 կետի), որը պայմանավորված է վաղաժամկետ մարման գումարը առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Ներգրաված միջոցների օգտագործում: Հիմք ընդունելով Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International Capital Market Association - ICMA) կողմից հրապարակված Սոցիալական պարտատոմսերի սկզբունքները (Social Bond Principles)՝ պարտատոմսերի տեղաբաշխումից ներգրավված միջոցներն ուղղվելու են Թողարկողի Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգով (Social Bond Framework) սահմանված հետևյալ սոցիալական և

կայուն զարգացման նպատակային ուղղությունների ֆինանսավորմանն ու վերաֆինանսավորմանը.

1. Գյուղատնտեսական վարկերի տրամադրում փոքր չափի ֆերմերային տնտեսություններին,
2. Գյուղական ՓՄՁ և ագրոբիզնեսի ֆինանսավորում,
3. Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ:

Թողարկողների համապատասխանությունը սոցիալական պարտատոմսերի սկզբունքների հիմնական պահանջներին հաստատելու նպատակով, վերջիններս պետք է ենթարկվեն արտաքին անկախ վերանայման: Թողարկողի պահանջով 2026թ. հոկտեմբերին Fitch Ratings ընկերությունը հրապարակել է «Արտաքին կողմի կարծիք» (Second Party Opinion) Թողարկողի Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգի վերաբերյալ: Արտաքին կողմի կարծիքը և Հայեցակարգը հրապարակված են Թողարկողի պաշտոնական կայքի «Պարտատոմսեր» բաժնում:

Արտաքին կողմի կարծիքը ներառված չէ Ազդագրում և չի կազմում դրա մաս: Թողարկողը չի տրամադրում որևէ հավաստում Արտաքին կողմի կարծիքի համապատասխանության վերաբերյալ:

Արտաքին կողմի կարծիքը ենթակա չէ որևէ հատուկ կարգավորման կամ այլ ռեժիմի կամ վերահսկողության, չի հանդիսանում արժեթղթերի գնելու, վաճառելու կամ պահելու առաջարկ և ուժի մեջ է մտնում Պարտատոմսերի թողարկման տրամադրման օրվանից: Արտաքին կողմի կարծիքի հետ կանչելը կարող է ազդել Պարտատոմսերի արժեքի վրա և/կամ հետևանքներ ունենալ ներդրումային քաղաքականությամբ սոցիալական ակտիվներում ներդրումներ կատարելու հանձնառություն ունեցող որոշ ներդրողների համար:

Թողարկողը պարտավորվել է պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները օգտագործել որոշակի նպատակներով և ներկայացնել հաշվետվություններ, ինչպես ներկայացված է Ազդագրի 2.2. Հիմնական տեղեկատվություն բաժնում:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Թողարկողի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող ընդհանուր իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Սոցիալական պարտատոմսերի թողարկումն իրականացվում է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International capital market association - ICMA) կողմից հրապարակված սոցիալական պարտատոմսերի սկզբունքների (Social bond principles) համաձայն: ՀՀ-ում սոցիալական պարտատոմսերի թողարկումը կարգավորող տաքսոնոմիա առկա չէ, դրա ընդունվելու դեպքում հնարավոր են որոշակի տարբերություններ ICMA -ի դրույթների հետ:

2.2. Հիմնական տեղեկատվություն

2.2.1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Ընկերության սոցիալական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են վարկային պորտֆելի աճի ֆինանսավորմանը, մասնավորապես՝ գյուղատնտեսական վարկերի տրամադրմանը, կին ձեռներեցների, երկրորդ սերնդի և երիտասարդ ֆերմերների, ինչպես նաև ՓՄՁ-ների ֆինանսավորմանը:

Պարտատոմսերը թողարկվելու են Թողարկողի Սոցիալական պարտատոմսի հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) ներքո:

Հայեցակարգի շրջանակներում սոցիալական պարտատոմսերի թողարկումը նպատակ ունի.

- դիվերսիֆիկացնել Ֆարմ Կրեդիտ-ի ֆինանսավորման աղբյուրները Հայաստանի կապիտալի շուկայի միջոցով.
- բարձրացնել տեղական արժույթով երկարաժամկետ ֆինանսավորման հասանելիությունը «Որակավորված սոցիալական ծրագրերի» համար (ESP);
- ընդլայնել գյուղական տնտեսությունների, ֆերմերների, կին ձեռնարկատերերի և գյուղական ՓՄՁ-ների ֆինանսավորումը.
- ֆինանսական միջոցների տեղաբաշխման և ազդեցության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման միջոցով բարձրացնել թափանցիկությունը ՝ ԿՇՄԱ (ICMA) Սոցիալական Պարտատոմսերի Սկզբունքների (2025) համապատասխան.
- ընդլայնել Ֆարմ Կրեդիտ-ի հասանելիությունը ESG ուղղվածություն ունեցող և ազդեցությանն ուղղված ներդրողների շրջանում:

Հետևաբար, սոցիալական պարտատոմսերի թողարկումը Ֆարմ Կրեդիտ-ի գործող բիզնես մոդելի և ֆինանսավորման ռազմավարության բնական շարունակությունն է, որը հնարավորություն է տալիս կոոպերատիվին հետագայում ընդլայնել իր սոցիալական ազդեցությունը՝ դիվերսիֆիկացնելով ֆինանսավորման աղբյուրները Հայաստանի կապիտալի ներքին շուկայի միջոցով: Հայեցակարգի ներքո թողարկված Սոցիալական պարտատոմսերի միջոցները կհատկացվեն բացառապես Հայեցակարգի «Որակավորված սոցիալական» ծրագրերին:

Հայեցակարգի շրջանակներում Որակավորված սոցիալական ծրագրերի կատեգորիաներն են՝

1. **Գյուղատնտեսական վարկերի տրամադրում փոքր չափի ֆերմերային տնտեսություններին**
   ICMA **Կատեգորիաներ**. *Սոցիալ-տնտեսական առաջընթաց և հզորացում; Պարենային անվտանգություն*
2. **Գյուղական ՓՄՁ և ագրոբիզնեսի ֆինանսավորում**
   ICMA **Կատեգորիաներ**. *Զբաղվածության ստեղծում; Պարենային անվտանգություն*
3. **Կանանց տնտեսական հզորացում**
   ICMA **Կատեգորիաներ**. *Պարենային անվտանգություն*

Սոցիալական պարտատոմսերի միջոցները հատուկ ուղղվելու են փոքր և ընտանեկան ֆերմերներին, կին վարկառուներին/կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններին, երիտասարդներին / երիտասարդ, սկսնակ, փոքր ֆերմերներին, ագրոբիզնեսի արժեշղթային, գյուղական ՓՄՁ-ներ-ին:

Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգը հասանելի է Թողարկողի կայքում հետևյալ հղումով՝ https://www.fca.am/images/FCA_Social_Bond_Framework_2026_ARM.pdf:

Fitch Ratings-ի կողմից պատրաստված Արտաքին կողմի կարծիքը (Second Party Opinion) հասանելի է Թողարկողի կայքի Պարտատոմսեր բաժնում:

Թողարկողը սոցիալական պարտատոմսերի շրջանառության ժամկետի ողջ ընթացքում հրապարակելու է տարեկան հաշվետվություն պարտատոմսերի միջոցների բաշխման և պորտֆելի սոցիալական ազդեցության վերաբերյալ: Հաշվետվությունները հանրությանը հասանելի կլինեն Թողարկողի պաշտոնական կայքում: Հաշվետվողականության շրջանակներում Թողարկողը կհրապարակի Տեղաբաշխման վերաբերյալ հաշվետվություն, որը ներառելու է՝

Բացահայտման կետ	Մանրամասներ
Հավաքագրված ընդհանուր զուտ միջոցները	Ըստ պարտատոմսերի շարքի և արժույթի
ESP պորտֆելին հատկացված ընդհանուր գումարը	Բացարձակ մեծությամբ և միջոցների տոկոսով
Չտեղաբաշխված գումարներ	Օգտագործված գումարը և ժամանակավոր ներդրումային գործիքները
Բաշխում ըստ ESP կատեգորիայի	Յուրաքանչյուր կատեգորիայի համար հատկացված գումարը և վարկերի քանակը
Բաշխում ըստ թիրախային բնակչության	կին վարկառուներ %, Երիտասարդ, սկսնակ, փոքր ֆերմերներ %, գյուղական ՓՄՁ-ներ %
Աշխարհագրական բաշխում	Տեղաբաշխում ըստ մարզերի
Նախկինում տրամադրված վարկերի բաշխում (Look-back)	Վերաֆինանսավորմանը հատկացված միջոցների գումարը և տոկոսը
Բաշխում ըստ արժույթի	ՀՀ դրամ VS ԱՄՆ դոլար տեղաբաշխում

Ֆինանսական միջոցների տեղաբաշխման հաշվետվության հետ մեկտեղ (կամ դրա կազմում) Թողարկողը կհրապարակի նաև Ազդեցության հաշվետվություն՝ բացահայտելով ESP-ի պորտֆելի կողմից ձեռք բերված սոցիալական արդյունքներն ու ցուցանիշները: Ազդեցության հաշվետվության հիմնական չափորոշիչները ներկայացված են Հայեցակարգում:

Ո՛չ Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգը, ո՛չ Արտաքին կողմի կարծիքը ներառված չեն սույն Ազդագրում, չեն կազմում դրա մաս և չեն հանդիսանում պարտատոմսերը գնելու, վաճառելու կամ պահելու առաջարկ:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնում ենք, որ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ պարտատոմսերն անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.5 և 7.6 կետերի պահանջները «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ն 2026թ. օգոստոսի 18-ին դիմում է ներկայացրել ՀՀ ԿԲ՝ ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու համար բավարարում ստանալու նպատակով:

Ընկերության կողմից ներկայացված դիմումի ուսումնասիրության արդյունքներով և հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.14 կետը 2026թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ Կենտրոնական բանկը տեղեկացրել է, որ Ընկերության կողմից մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու վերաբերյալ առարկություն չունի:Ընդ որում թողարկման ծավալի մի մասը՝ կանոնադրական կապիտալի չափով, լինելու է առանց ապահովվածությամբ, իսկ մնացած մասը՝ ապահովվածությամբ:Թողարկումը նախատեսվում է իրականացնել մի քանի տրանշերով: Ապահովված պարտատոմսերի թողարկման մանրամասները, ներառյալ ապահովվածություն տրամադրող անձի վերաբերյալ տեղեկատվությունը և բոլոր էական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի խորհրդի կողմից, որի տեղաբաշխումը կիրականացվի ազդագրի լրացման միջոցով՝ ՀՀ ԿԲ հաստատումից հետո:

2.3.1. Սոցիալական պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	Անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի
Պարտատոմսերի թողարկման արժույթը	ՀՀ դրամ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100,000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	Մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	30,000 (երեսուն հազար) հատ
Թողարկման և տեղաբաշխման օրը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Տեղաբաշխման ձևը	Չերաշխավորված
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնի եկամտաբերությունը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից:
Պարտատոմսերի ապահովվածությունը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Տեղաբաշխող	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ, համաձայն Թողարկողի և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ միջև 03.08.2026թ. կնքված Համագործակցության պայմանագրի և չերաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագրի:
Շուկա Ստեղծող	Կազմակերպությունը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով: Աճուրդի

	տևողության, ինչպես նաև աճուրդի անցկացման այլ մանրամասները յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվեն «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
Թողարկումը	Համաձայն պարտատոմսերի թողարկման վերաբերյալ Թողարկողի Դիտորդ Խորհրդի կողմից 20.07.2026թ.-ին ընդունված թիվ 05 որոշման:
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	եռամսյակային (4 անգամ օրացուցային տարվա մեջ)
Արժեկտրոնների հաշվարկման օրերը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Օրերի հաշվարկման պայմանականությունը	փաստացի/փաստացի DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է. D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Արժեկտրոնի կուտակումը	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$ որտեղ AI - կուտակված տոկոս, FV - պարտատոմսերի անվանական արժեք, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,

Պարտատոմսերի գինը	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով $$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ որտեղ՝ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում N -հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը y - մինչև մարում եկամտաբերություն, i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, FV- պարտատոմսի անվանական արժեք:
Պարտատոմսերի եկամտաբերությունը	Պարտատոմսերի եկամտաբերությունը հաշվարկվում է նախորդ կետում ներկայացված բանաձևի միջոցով
Պարտատոմսերի մարման օրը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումը	ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով: Արժեկտրոնի հաշվարկման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 18:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Թողարկողը արժեկտրոնի վճարման/

	պարտատոմսերի մարման կատարման օրը հանձնարարական է տալիս իր սպասարկող բանկին՝ համապատասխան վճարումները փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ): Թողարկողը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Թողարկողը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:
Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում	Պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում: Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են: Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են:
Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում	Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում:
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

2.3.2. **Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն**

Կազմակերպության առաջարկվող պարտատոմսերի մարումների և Կազմակերպության կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Կազմակերպությունը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ: Կազմակերպության սնանկության դեպքում Կազմակերպության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգի:

Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

2.3.3. **Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ**

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- ✓ ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,
- ✓ իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ,
- ✓ թողարկման օրվանից հաշված արժեկտրոնների վճարման պարբերականությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- ✓ պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

✓ Թողարկողի կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:
✓ օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:
✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՄԲ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունենալ սեփական (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռքբերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Կազմակերպության պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ ուղղակիորեն կամ վերջինիս հաշվի օպերատորների միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Թողարկողի անվանական պարտատոմսերի թողարկման մասին վերջինիս խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

2.3.4. Իրավասու մարմնի որոշումը նոր թողարկման մասին

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ անվանական պարտատոմսերը թողարկվելու են համաձայն Կազմակերպության Դիտորդ խորհրդի 2026թ. հուլիսի 20-ի «Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին» որոշման, վերջինով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր: Թողարկվող դրամային պարտատոմսերի անվանական արժեքը սահմանվել է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Միաժամանակ, սահմանվել է, որ տեղաբաշխումը պետք է իրականացվի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:

Թողարկված պարտատոմսերի միջոցով ձեռք բերված միջոցները տեղաբաշխվելու են համաձայն Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգի, որն էլ իր հերթին գնահատվել է Fitch Ratings-ի կողմից ստանալով անկախ կողմի երկրորդ կարծիքի հավաստում: Սա թույլ կտա սույն ազդագրով թողարկված պարտատոմսերը որակել որպես սոցիալական պարտատոմսեր:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ի կողմից առանձին տրանշերի գծով հնարավոր է նախատեսվեն պարտատոմսերի հետգնում և վաղաժամկետ մարում (թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ (քոլ օպցիոն, փութ օպցիոն)), որոնց մանրամասները ենթակա են որոշման Թողարկման առանձին որոշումներով և պայմաններով տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Բացի այդ, առանձին տրանշերի գծով հնարավոր է նախատեսվեն հատուկ ֆինանսական պայմաններ (կովենանտներ), որոնց խախտումը կհամարվի պարտավորությունների չկատարման դեպք, ինչի արդյունքում պարտատոմսերի սեփականատերերը կարող են ստանալ պարտատոմսերի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնելու իրավունք:

Հարկ է նշել, որ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կողմից մերժման դեպքում, տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և պարտատոմսերի դիմաց վճարված, ինչպես նաև հաշվեգրված արժեկտորնների գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

2.3.5. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Կարևոր ծանուցում

Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ իր կողմից թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարելիս ներդրողները արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման վերաբերյալ սույն բաժնում ներկայացված տեղեկատվությունը չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և հիմնվեն վերջինիս վրա, ուստի խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման կամ փոփոխության արդյունքում ներդրողների ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- ✓ **Շահութահարկ** (Իրավաբանական անձանց դեպքում),
- ✓ **Եկամտային հարկ** (Ֆիզիկական անձանց դեպքում):

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը),
2. Կապիտալի հավելաճ (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն):

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում ՀՀ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Այս պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025թ.-ի հունվարի 1-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտներից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութարկի վճարումից:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Այս պահին եկամտային հարկի դրույքաչափը 10 տոկոս է: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025թ.-ի հունվարի 1-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

- Ազդագրի շրջանակում առաջարկը կարող է իրականացվել Ազդագրի հրապարակմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում՝ պայմանով, որ առկա է ՀՀ ԿԲ թույլտվությունը:
- Ազդագրի շրջանակում Կազմակերպությունը նախատեսում է թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ

անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր:

- Թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:
- Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման օրը/օրերը, կսահմանվեն Կազմակերպության Խորհրդի առանձին որոշումներով: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 2 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.fca.am, www.araratbank.am:
- Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով: Ընդ որում՝ տեղաբաշխման աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:
- Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.amx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:
- Բորսայի տարբեր մասնակիցներ կարող են սահմանել աճուրդին մասնակցելու (առաջարկից օգտվելու) տարբեր գործընթացներ, պարտատոմսերի դիմաց վճարումներ կատարելու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերը ստանալու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերի վերաբերյալ քաղվածք ստանալու ձևեր, ներդրողների հայտերի բավարարման արդյունքների մասին իրազեկման կարգեր և ձևեր, ինչպես նաև սահմանել տարբեր սակագներ: Այդ իսկ պատճառով, Կազմակերպությունը չի կարող սպառիչ տեղեկություններ հրապարակել նշված հարցերի վերաբերյալ և հորդորում է Բորսայի անդամ չհանդիսացող պոտենցիալ ներդրողներին ուսումնասիրել Բորսայի անդամների կողմից առաջարկվող պայմանները իրենց համար լավագույն տարբերակ գտնելու համար:
- Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը, իսկ մի քանի օր լինելու դեպքում տեղաբաշխման սկզբի և ավարտի օրերը, Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով:
- Տեղաբաշխման օրվանից/տեղաբաշխումը մի քանի օր լինելու դեպքում՝ տեղաբաշխման սկզբից/ առնվազն 2 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունը նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով:
- Գնորդները պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ՝ տեղաբաշխման օրվա/օրերի/ ժամը 11^{00}-ից մինչև 13^{30}-ը: Գնորդներն իրավունք ունեն հետ կանչել կամ փոփոխել իրենց կողմից ներկայացված հայտերը և նոր հայտեր մուտքագրել մինչև 13^{30}-ը: Տեղաբաշխողի կողմից աճուրդի

անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առքուվաճառքի գործարքների կնքման գործընթացը, տևում է մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15^{00}-ն:

- Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
- Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդն իրականացվելու է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով: Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում: Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և ըստ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված ընթացակարգերի:
- Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակում չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը:
- Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և դեպքերում:
- Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:
- Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններին» համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումն իր պաշտոնական կայքում:
- Թողարկողն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fca.am, տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացնելով առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը) և այլն:
- Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներիի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4.2. Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 1 (մեկ) ժամվա ընթացքում Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ին համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները և ուղարկում Բորսայի համապատասխան անդամին: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

2.4.3. Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից տեղաբաշխման համակարգ են մուտքագրում պարտատոմսերի գնման հայտերը:

Պարտատոմսերի լրիվ գինը տեղաբաշխման առաջին օրվանից սկսած, հաշվարկվում է 2.3 կետում նշված բանաձևի հիման վրա: Ներդրողները աճուրդը կազմակերպողին ներկայացվող հայտում նշում են ձեռք բերվող պարտատոմսերի պահանջվող եկամտաբերությունը/գինը և պարտատոմսերի այն ծավալը, որը ներդրողը պատրաստ է ձեռք բերել հայտում ներկայացված եկամտաբերությամբ/գնով: Հայտերի բավարարման կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար կներառվի պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հրապարակվող համապատասխան տրանշով թողարկվող պարտատոմսերի վերջնական պայմանների և հայտարարության մեջ:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում (www.amx.am):

Արժեթղթերի հաշիվները բացվում և սպասարկվում են ՀԿԴ հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է ՀԿԴ պաշտոնական ինտերնետային կայքում (www.cda.am):

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի Սակագների մասին կանոններով սահմանված չափերով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են

տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

2.4.4. Տեղաբաշխումը

2.4.4.1. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Ազդագրի հրապարակման պահին Թողարկողը որևէ տեղաբաշխողի հետ երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու վերաբերյալ կնքված պայմանագիր չունի: Սակայն, տեղաբաշխման առանձին թողարկումների համար Թողարկողը կարող է ներգրավել երաշխավորված տեղաբաշխում իրականացնողների: Այդ պարագայում, տեղաբաշխողներին վերաբերող տեղեկատվությունը (այդ թվում՝ անվանումները, գտնվելու վայրերը, երաշխավորված ծավալը և այլն) ենթակա է ներկայացման Թողարկման վերջնական պայմաններով:

2.4.4.2. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը չերաշխավորված տեղաբաշխումն իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից՝ համաձայն 03 օգոստոսի 2026թ. վերջիններիս միջև կնքված Համագործակցության պայմանագրի և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրի:

Տեղաբաշխողի՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք,85-րդ տարածք, գրանցման համարը՝ 4, հեռ.՝ +(374 10) 59 23 23, ֆաքս՝ +(374 10) 54 78 94, էլ. փոստ՝ info@araratbank.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի դեպքում պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (երաշխավորված կամ չերաշխավորված), պարտատոմսերի ծավալը, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի իրավունքներն ու պարտականությունները, Տեղաբաշխողին վճարման ենթակա գումարի չափն ու կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի պատասխանատվությունը կսահմանվեն վերջիններիս միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրերով:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.amx.am: Տեղաբաշխումից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի առքուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կա՛մ ներդրումային ընկերություններին, կա՛մ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ (www.cda.am):

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև որևէ բանկում իր անվամբ բացել դրամային բանկային հաշիվ, և այդ հաշվի վերաբերյալ տվյալները ներկայացնել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին՝ պարտատոմսերում կատարված ներդրումների մարման և արժեկտրոնային եկամուտների ստացման համար:

2.4.4.3. Տեղաբաշխման պայմանները

Համաձայն Թողարկողի և Տեղաբաշխողի միջև կնքված համագործակցության պայմանագրի և Չերաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել՝ տեղաբաշխման փաթեթի պատրաստման և ազդագրի կազմման վճար՝ 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ միանվագ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Թողարկողը Տեղաբաշխողին է վճարում Արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների վճար փաստացի տեղաբաշխված արժեթղթերի անվանական ծավալի 0.4%-ի չափով (առանց ավելացված արժեքի հարկի):

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը սահմանված կարգով դիմում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթ արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Թողարկողը տասը աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Պարտատոմսերի թողարկմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Կազմակերպությունը պարտատոմսի թողարկումներն իրականացնում է՝ ցանկացած պահի դրությամբ պահպանելով ՀՀ ԿԲ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 6-րդ կետի պահանջները:

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար որպես խորհրդատու հանդես է եկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Ներկայացված տեղեկատվությունն անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

2025 թվականին կազմակերպությունը իտալական վարկանշավորող MFR ընկերության կողմից ստացել է Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկացում Ոսկե մակարդակ (CPC Gold level certificate), որը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով: Վերջինս վկայում է Ֆարմ Կրեդիտ-ի պատասխանատու վարկավորման, թափանցիկ գնագոյացման, արդար վերաբերմունքի և հաճախորդների պաշտպանության գործելակերպի մասին: Նույն ժամանակ կազմակերպությունը ստացել է նաև sBB+ սոցիալական և բնապահպանական վարկանիշ (2025): Հաստատում է սոցիալական պատասխանատվության և բնապահպանական ռիսկերի կառավարման ամուր պրակտիկան՝ համաձայն սոցիալական կատարողականի կառավարման համընդհանուր ստանդարտների (SPTF/CERISE):

Կազմակերպության կողմից սույն ազդագրով տեղաբաշխվող պարտատոմսերը Fitch Ratings-ի կողմից ստացել է Սոցիալական պարտատոմսեր թողարկելու Երկրորդ կողմի եզրակացություն (անկախ): Վերջինս հրապարակված է Թողարկողի կայքի Պարտատոմսեր բաժնում:

Կազմակերպությանը վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Անկախ աուդիտորները

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի իր ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկելու նպատակով հրավիրում է արտաքին աուդիտ: Աուդիտորական կազմակերպությանն ընտրությունն իրականացվում է մրցույթի հայտարարման միջոցով, ինչի արդյունքում էլ նկատելի հանգամանք է վերջինիս փոփոխությունը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին:

Կազմակերության 2024-2025թթ. Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ**-ն, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9-րդ շենք («Երևան Պլազա» բիզնես-կենտրոնի շենքում), հեռ. (+374)10 500 964, ինտերնետային կայք՝ www.grantthornton.am, կազմակերպության տնօրեն՝ Արմեն Հովհաննիսյան: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի՝ 2024-2025թթ. եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործառնությունների, ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Թողարկողը ձեռնպահ է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

Վարկային ռիսկ: Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք կարող են հանգեցնել Կազմակերպության շահույթի և/կամ

կապիտալի նվազմանը: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ և ներդրումային գործունեության (պարտքային արժեթղթեր) հետ:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Թողարկողը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում, սահմանաչափեր կիրառում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, ինչպես օրինակ, տնտեսության ճյուղերի, վարկատեսակների, արժույթների, առանձին փոխառուների և նրանց հետ փոխկապակցված խմբերի նկատմամբ: Վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը:

ՖՀՄՍ համաձայն հաշվարկված վարկերի և լիզինգի հաշվեկշռային պորտֆելը 30.06.2026թ-ի դրությամբ կազմում է 17.9 մլրդ ՀՀ դրամ, որի կազմում 90 օր և ավել ժամկետանցություն ունեցող վարկերի կշիռը կազմում է 0.1%: Կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշների գծով Կազմակերպությունը գտնվում է նվազագույն սահմանաչափից բարձր դիրքերում՝ 30.06.2026թ-ի դրությամբ Ընդհանուր կապիտալ/ՌԿԱ հարաբերակցությունը՝ 18.9%:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնասներ կրելու ռիսկը:

Կազմակերպության իրացվելիությունը գտնվում է տնօրինության ուշադրության կենտրոնում, մասնավորապես՝ Կազմակերպությունում գործում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որը վերահսկում է Կազմակերպության իրացվելիության ռիսկերը ժամկետայնության վերլուծության միջոցով, իրացվելիության սահմանաչափերի և գործակիցների պահպանման և վաղ զգուշացման ցուցիչների վերահսկողության միջոցով:

Կազմակերպության իրացվելության աղբյուրները դիվերսիֆիկացված են և իրենց մեջ ներառում են դրամական միջոցների կարճաժամկետ ներգրավումներ ՀՀ բանկերից, այդ թվում դրամական շուկայի գործիքների միջոցով (ռեպո, սվոփ): Կազմակերպությունը իր իրացվելության գործիքակազմում ունի նաև վերականգնվող վարկային գծեր, որոնք ոչ միայն հանդիսանում են իրացվելության ստացման արագ աղբյուր, այլև հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ և առավել քիչ ծախսերով կառավարել ընթացիկ իրացվելությունը:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» Ունիվերսալ վարկային կազմակերպության իրացվելիության ռիսկը գտնվում է ընդունելի մակարդակում: Ստորև ներկայացվում են իրացվելիության հիմնական նորմատիվների մասով Ընկերության ցուցանիշները 30.06.2026թ-ի դրությամբ.

Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն	7.01 %
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն	218.38 %

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որն էլ իր հերթին կարող է ազդել Կազմակերպության զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Կազմակերպության ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև այն նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Կազմակերպությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիթորինգ, գնահատում է Կազմակերպության իրական արժեքով տոկոսադրույքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունը Կազմակերպության շահութաբերության վրա:

Կազմակերպության ռիսկերի կառավարման սկզբունքներից ելնելով սահմանափակվում են տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ ճեղքվածքի մեծությունը, արժեթղթերի պորտֆելի մեծությունը, կենտրոնացվածությունը և ժամկետայնությունը:

30.06.2026թ. և 31.12.2025թ. դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Ստորև ներկայացվում է արտարժութային դիրքերը 30.06.2026թ-ի դրությամբ.

Արժույթ	Արտարժութային դիրք
USD	41.7 %
EUR	0%
RUB	0%
Այլ	0%

Գործընկերոջ ռիսկ: Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է կրել: Կազմակերպությունը գործընկերոջ ռիսկը կառավարում է Կազմակերպության Ռիսկերի կառավարման քաղաքականության համաձայն՝ սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ: Սահմանաչափերի ցանկացած փոփոխություն հաստատվում է Կազմակերպության Խորհրդի կողմից:
Կազմակերպությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

- սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով,
- կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը,
- սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ միջբանկային գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների.
Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է, որի նպատակն է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն էլ իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպությունների ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Այստեղ հնարավոր են փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:
Կազմակերպությունը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում:
Առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ: Հաճախ իմաստ ունի տարանջատել այս երկու կատեգորիաները, քանի որ որոշ գործառնությունների գծով գործընկերոջ ռիսկը տարբեր է գործարքի կյանքի ընթացքում: Այն գործարքների դեպքում, երբ կողմերից երկուսն էլ փոխանակում են դրամական հոսքեր, ռիսկն ավելի բարձր է գործարքով նախատեսվող վճարումների իրականացման օրը (երբ Ընկերությունն իրականացնում է վճարումն առանց ստանալու հաստատումը, որ գործընկերոջ հանդիպակաց վճարումը հաշվեգրված է), քան վճարումների օրվան նախորդող ժամանակաշրջանում, երբ Ընկերությունը հնարավորություն ունի զերծ մնալ իր վճարումների կատարումից, եթե ակնհայտ է, որ գործընկերը չի կատարելու իր վճարումը:
Կլիմայական ռիսկ: Բնական աղետները՝ ջրհեղեղ, կայծակ և հրդեհ, պտտահողմ, ինչպես նաև կլիմայով պայմանավորված երևույթները՝ երաշտը, ցրտահարությունը, կարկտահարությունը գյուղատնտեսության բնագավառին բնորոշ հիմնական ռիսկերից են:
2019թ.-ից ՀՀ-ում մեկնարկել է գյուղատնտեսության ապահովագրության ծրագիրը, որը թև մասամբ, բայց բավականին մեծ ծածկույթով փակում է որոշակի մշակաբույսերի մշակման հետ կապված կլիմայական ռիսկերը: Ֆարմ Կրեդիտը աշխատում է ֆերմերային տնտեսությունների

հետ, որպեսզի վերջիններս համապատասխան գործունեություն ծավալելու դեպքում ձեռք բերեն ապահովագրական պոլիսներ:

Կազմակերպության վարկային պորտֆելի ավելի քան 65 տոկոսը տեղաբաշխված է Արարատյան դաշտավայրում, որտեղ ձևավորված է հակակարկտային կայանների ցանց, այդ թվում՝ անհատ ֆերմերների կողմից: Տեղաբաշխած պորտֆելի ավելի քան 70 տոկոսը ուղղված է գյուղատնտեսության ֆինանսավորմանը, ինչը ենթադրում է ինչպես առաջնային կարիքների համար վարկերի տրամադրումը, այնպես էլ ենթակառուցվածքների զարգացման ֆինանսավորումը վարկերի և լիզինգի միջոցով: Զգալի ավելացել են ֆերմերային տնտեսությունների քանակը, որոնք կիրառում են ժամանակակից կաթիլային ոռոգման համակարգեր, կարկտապաշտպան ցանցեր, կուտակիչ ջրամբարներ:

Հարկ է նշել, որ 18 տարիների ընթացքում պարբերաբար ստեղծվել են իրավիճակներ, երբ բնակլիմայական աղետների պատճառով մեր կողմից ֆինանսավորված տնտեսությունները կրել են վնասներ: Սակայն կազմակերպության վարկավորման ճիշտ քաղաքականության և նաև տուժած տնտեսությունների հետ անհատական մոտեցմամբ աշխատելու արդյունքում, կարող ենք փաստել, որ վնասներ գրեթե չենք կրել:

Արտադրանքի իրացվելիության ռիսկ: ՀՀ-ում գյուղատնտեսության բնագավառին բնորոշ ռիսկերից է նաև գյուղատնտեսական արտադրանքի իրացման ռիսկը, որը առավելապես պայմանավորված է ՀՀ-ից արտաքին շուկաներ դուրս գալու սահմանափակ հնարավորությամբ, ինչպես նաև ՀՀ ներմուծվող գյուղմթերքների ծավալների և գնի հետ:

ՀՀ կառավարության համապատասխան ծրագրով սուբսիդավորվում են գյուղմթերքի մթերման նպատակով մթերող ընկերություններին տրամադրվող վարկերի տոկոսները:

Գյուղմթերք արտադրող անհատները և ֆերմերային տնտեսությունները նախորոք պայմանագրեր են կնքում տեղական մթերող ընկերությունների հետ՝ ապահովագրելով իրենց արտադրանքի իրացումը: Մեր կողմից ֆինանսավորվող տնտեսությունները գյուղմթերքի հիմնական մասը իրացնում են տեղական շուկայում, իսկ 30-40 տոկոսի չափով ունեն արտահանում արտաքին շուկաներ, որից մինչև 10 տոկոսը ուղիղ: Արտաքին շուկաների մեջ էական նշանակություն ուներ ռուսական շուկան, որը վերջին տարիներին ունի դինամիկ նվազման միտում: Ներկայիս պատժամիջոցների և սահմանափակումների ֆոնին ռուսական շուկայի արտահանման ավելի քան 80 տոկոսը փոխարինվել է վրացական, ղազախական (ծաղիկներ, բանջարեղեն), արաբական (ձկնամթերք) և ամերիկյան (վերամշակված գյուղմթերք) շուկաներով: ԵՄ արտահանման մասով կան լայն հնարավորություններ, սակայն անհրաժեշտ են մի շարք նախապայմաններ (սերտիֆիկացում, ստանդարտացում), որոնց մասով Ֆարմ Կրեդիտը աշխատում է եվրոպական գործընկերների հետ տեխնիկական աջակցություն ցուցաբերելով ֆերմերներին:

Այստեղ պետք է նշել կազմակերպության կարևոր դերը որպես վարկավորող կոոպերատիվ կառույց, իր անդամ ֆերմերների հետ տարվող աշխատանքում կարևորում է երկարաժամկետ իրացման պայմանագրերի կնքումը, հուսալի մատակարարների և մթերողների հետ համագործակցությունը, լոգիստիկայի արդյունավետ կազմակերպումը:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին

միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառույթները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Կազմակերպության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգող հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների:

Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով:

Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Կազմակերպությունում գործառնական ռիսկը կառավարվում է Կազմակերպության Վերստուգողի կողմից: Գործառնական ռիսկերի կառավարման համար մշակված են և պարբերաբար վերանայվում են բազում հսկողական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ գործընթացների մշակման, գրանցման և հաստատման գործառույթների բաժանումը տարբեր աշխատակիցների միջև, ամենամսյա այցելությունները մասնաճյուղեր:

Ընկերությունում գործում է Խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողով, որին Ընկերության խորհուրդը պատվիրակել է ռիսկերի հետ կապված հարցերի, այդ թվում Ընկերությանը ներհատուկ ռիսկերի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգերի (բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի) նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթը, և Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որի նպատակն է Ընկերության ակտիվների ու պարտավորությունների վերահսկումը և կառավարումը, Ընկերության միջոցների տեղաբաշխումը ու համապատասխան վճարունակության պահպանումը, իրացվելիության և շուկայական ռիսկի կառավարումը:

Ռիսկերի կառավարման վերահսկման գործառույթներում ընդգրկված է նաև Ընկերության վերստուգողը, ով գործում է իր կողմից ներկայացված և Խորհրդի կողմից հաստատված ծրագրով, պարբերաբար ներկայացնում է ընկերության գործունեության մասին հաշվետվություններ և հաղորդումներ, Խորհրդի հանձնարարությամբ իրականացնում է առանձին թեմատիկ նպատակային ուսումնասիրություններ:

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ առևտրային կոոպերատիվ,

ռուսերեն՝ «Фарм Кредит Армения» универсальная кредитная организация коммерческий кооператив

անգլերեն՝ «Farm Credit Armenia» universal credit organisation commercial cooperative

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ» ՈՒՎԿ ԱԿ,

ռուսերեն՝ «Фарм Кредит» УКО КК,

անգլերեն՝ «Farm Credit» UCO CC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16, գրանցման համարը՝ 43:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 55 08 31, (+374 10) 55-07-41

էլ. փոստ՝ fca@fca.am,

ինտերնետային կայք՝ www.fca.am:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ Ֆինանսական տնօրեն Անի Սարգսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+37410) 550831, էլ.փոստ՝ anis@fca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ 2007թ.-ին: Կազմակերպությունը գրանցվել է 2007թ. Սեպտեմբերի 18-ին ՀՀ ԿԲ կողմից N 20 արտոնագրային համարով:

Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

30.06.2026թ. դրությամբ Կազմակերպությունն ունի 11 մասնաճյուղ, որոնց ցանկը և գործունեության հասցեները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	**Գլխամասային գրասենյակ**	ՀՀ. ք. Երևան, Թբիլիսյան խճղ, 9/16
2.	**Արմավիր մասնաճյուղ**	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Երևանյան փող., շենք 21/5
3.	**Մասիս մասնաճյուղ**	ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Արարատյան փող. 3/2
4.	**Կոտայք մասնաճյուղ**	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Հանրապետության պողոտա 4/2
5.	**Էջմիածին մասնաճյուղ**	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Սպանդարյան - Մ.Մաշտոց 73/66 տաղավար
6.	**Արտաշատ մասնաճյուղ**	ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող., շենք 97
7.	**Վայոց Ձոր մասնաճյուղ**	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի փող. 6/12
8.	**Սիսիան մասնաճյուղ**	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսականի փ. 29
9.	**Աշտարակ մասնաճյուղ**	ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու 86
10.	**Մյասնիկյան մասնաճյուղ**	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Մյասնիկյան, Երևանյան փողոց 5/4
11.	**Վեդի մասնաճյուղ**	ՀՀ, Արարատի մարզ 0601, համայնք Վեդի, ք. Վեդի, Արարատյան փողոց 41/3

Կազմակերպությունը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

3.3.2. Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագրի ներկայացման պահը կազմակերպության կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

Կազմակերպության կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

3.4. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Կազմակերպությունը տրամադրում է առավելապես գյուղատնտեսական և ձեռնարկատիրական վարկեր, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Ընդ որում, Կազմակերպությունը սպասարկում է գյուղացիական տնտեսություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց, որոնց չափանիշները սահմանվում են Կազմակերպության Խորհրդի որոշմամբ:

Կազմակերպությունը տրամադրում է վարկեր Կազմակերպության անդամ ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին: Կազմակերպության անդամ-փայատեր կարող են դառնալ այն քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք զբաղվում են գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ, վերամշակմամբ և հարակից այլ գործունեությամբ, առևտրային, արտադրական կամ ձեռնարկատիրական այլ գործունեությամբ:

Կազմակերպության անդամագրության կարգը հասանելի է Կազմակերպության կայքում www.fca.am:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից տրամադրվում են գյուղատնտեսական վարկեր, փոքր և միջին ձեռնարկությունների վարկեր, բնակարանի/բնակելի տան վերանորոգման վարկեր: Կազմակերպությունը մատուցում է նաև լիզինգային ծառայություն, որից կարող են օգտվել իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնց գործունեությունն ընդգրկում է գյուղատնտեսության, ագրոբիզնեսի և այլ ոլորտներ:

Առանձին դեպքերում՝ Կազմակերպության վարկային կոմիտեի որոշմամբ, լիզինգային գործարք կարող է կնքվել Կազմակերպության ոչ անդամների հետ:

Վերը նշված բոլոր պրոդուկտների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Կազմակերպության ինտերնետային կայքում՝ www.fca.am:


2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկերը կազմել են մոտ 18.1 մլրդ ՀՀ դրամ:

Ստորև ներկայացված է Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկերի դինամիկան՝ 2020 թվականից մինչև 2026թ. հունիսի 30-ը:

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ծավալների դինամիկան ներկայացվում է ստորև.

Հաճախորդներին տրված վարկերի դինամիկան 2020-2026թթ.[7][8]

Հազ. ՀՀ դրամ




Կազմակերպությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ ֆինանսական գործառնություններ:

Ֆինանսական գործառնությունները Կազմակերպության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ անկանխիկ եղանակներով:

Կազմակերպության հաշվեկշռի կառուցվածքի դինամիկան ներկայացվում է ստորև.

[7] 2026 թվականի տվյալները վերցված են աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվություններից:
[8] Ներառում է հաճախորդներին տրված վարկերը և ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը



3.4.2. Հիմնական շուկաները

Կազմակերպությունը վարկեր է տրամադրում և այլ ֆինանսական ծառայություններ է մատուցում առավելապես Հայաստանի Հանրապետության մարզերում՝

ա) գյուղմթերք արտադրողներին, վերամշակողներին,

բ) գյուղացիական տնտեսությունների գործառնական կարիքների բավարարմանն ուղղված և դրանց ուղղակիորեն առնչվող ծառայություններ մատուցողներին (կոոպերատիվներ, ընկերություններ, անհատ ձեռնարկատերեր),

գ) Հայաստանի Հանրապետության մարզերում մշտապես բնակվող և գյուղացիական տնտեսություն վարող անձանց,

դ) ագրոպարենային ոլորտում գործող ցանկացած այլ տնտեսվարող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ վարկատեսակների հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ

	30.06.2026	31.12.2025	31.12.2024
Գյուղատնտեսական վարկեր			
Բուսաբուծություն	5,559,872	5,485,903	4,059,132
Անասնապահություն	4,772,207	4,765,465	4,589,908
Ձկնաբուծություն	114,697	99,932	68,005
	10,446,776	10,351,300	8,717,045
Այլ վարկեր			
Առևտուր	1,573,314	1,449,564	1,422,073
Արդյունաբերություն	142,386	197,657	109,926
Սպառողական	3,491,647	3,518,340	3,551,171
Ֆինանսական հատված	0	397	117,206
Այլ	475,545	408,180	328,508
	5,682,892	5,574,138	5,528,884
Ընդամենը վարկային պորտֆել	16,129,668	15,925,438	14,245,929
Լիզինգ	1,816,987	1,872,877	1,655,584
Ընդամենը պորտֆել	17,946,655	17,798,315	15,901,513

Վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկային ներդրումներում Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը 2023-2026թթ[9].-ին հետևյալն է.

Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը

Հազ. ՀՀ դրամ

	30.06.2026	31.12.2025	31.12.2024
Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկեր[10]	447,968,993	418,951,221	352,307,606
Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկեր	17,946,655	17,798,315	15,901,513
Թողարկողի մասնաբաժինը (%)	4.01%	4.25 %	4.51 %

[9] 2026 թվականի տվյալները վերցված են աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվություններից :

[10] ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակվող ամսական տվյալներ, http://www.cba.am

Թողարկողի դիրքը վարկային կազմակերպությունների շուկայում 30.06.2026 թվականի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ[11]


Ցուցանիշ	Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ	Դիրքը վարկային կազմակերպությունների շուկայում
Ընդհանուր ակտիվներ	20,948,124	10
Հաճախորդներին տրված վարկեր	17,946,655	10
Ընդհանուր պարտավորություններ	17,882,225	7
Ընդհանուր կապիտալ	3,065,899	16
Կանոնադրական կապիտալ	1,525,623	17
Զուտ շահույթ	137,808	21

[11] Հաշվարկների հիմքում ընկած են ՀՀ վարկային կազմակերպությունների՝ 30.06.2026 թվականի դրությամբ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների (աուդիտ չանցած) տվյալները:

3.5. Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

Կազմակերպությունը որևէ խմբի անդամ չէ:
Ստորև ներկայացվում է Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը:



3.6. Հիմնական միջոցները

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: 30.06.2026[12] թվականի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 950.4 մլն ՀՀ դրամ ՀՀ դրամ:

Կազմակերպության ոչ նյութական ակտիվների կազմը և կառուցվածքը 30.06.2026**թ դրությամբ**.

հազ. ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր
Սկզբնական արժեք	44,790
Կուտակված մաշվածություն	36,799
Զուտ Հաշվեկշռային արժեք	7,991

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ առկա չեն:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը.

Կազմակերպության հիմնական միջոցների կազմը և կառուցվածքը 30.06.2026**թ. դրությամբ**

հազ. ՀՀ դրամ

	Շենքեր, շինություններ	Համակարգչային սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	1,007,810	325,478	68,935	202,190	59,981	1,664,394
Կուտակված մաշվածություն	264,718	249,328	51,011	118,067	38,898	722,022
Զուտ Հաշվեկշռային արժեք	743,092	76,150	17,924	84,123	21,083	942,372

[12] 2025 թվականի տվյալները վերցված են ընկերության միջանկյալ եռամսյակային հաշվետվություններից, և աուդիտի կողմից ստուգված չեն

Կազմակերպությունը մոտ ապագայում էական մեծություն կազմող հիմնական միջոցների ձեռքբերում չի պլանավորում:

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ չկան:

3.7. Զարգացման վերջին միտումները


2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա վերջի համեմատ աճել են 2.69%ով կամ 548.4մլն ՀՀ դրամով՝ կազմելով 20.95 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2025թ. վերջի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա նկատմամբ աճել էին 1,755 մլն ՀՀ դրամով կամ 9.41%ով՝ կազմելով՝ 20.4 մլրդ ՀՀ դրամ:

Դիտարկվող ժամանակաշրջանի վերջում Կազմակերպության պարտավորությունների ծավալը կազմել է 17.9 մլրդ ՀՀ դրամ՝ 2025թ. վերջի համեմատ աճելով 2.35%-ով կամ 410.6 մլն ՀՀ դրամով: 2025թ. վերջի դրությամբ պարտավորությունների ծավալը կազմել է 17.5 մլրդ ՀՀ դրամ՝ 2024թ. դեկտեմբերի 31–ի համեմատ աճելով 1.5 մլրդ ՀՀ դրամով կամ 9.51 %-ով:


Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2026թ. հունիսի 30-ի դրությամբ նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 137.8 մլն ՀՀ դրամով կամ 4.71 %-ով և կազմել 3.06 մլրդ ՀՀ դրամ: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2025թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ 2024թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 238.2մլն դրամով կամ 8.86%-ով՝ կազմելով 2.9մլրդ ՀՀ դրամ:

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունն ունեցել է 137.8 մլն զուտ շահույթ: Կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշները 2026 թվականի հունիսի 30-ին կազմել են համապատասխանաբար 9.20% և 1.33%, իսկ 2025 թվականին կազմել են համապատասխանաբար՝ 6.00% և 0.86%:

Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի դինամիկան 2020–2026թթ. ընթացքում ներկայացված է ստորև.



Ստորև ներկայացված են Կազմակերպության տոկոսային եկամուտների, տոկոսային ծախսերի և զուտ տոկոսային եկամուտների դինամիկաները 2020–2026թթ. ժամանակահատվածում:



Կազմակերպության գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Կազմակերպության տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.fca.am «Հաշվետվություններ» բաժնում:

3.8. Շահույթի կանխատեսումը

Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Կազմակերպությունը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ✓ Կազմակերպության գործունեությունը միտված է կոոպերատիվի անդամ-փայատերերին առավել հարմարավետ և համալիր ծառայությունների մատուցմանը՝ բալանսավորելով անդամ-փայատիրոջ շահը և Կազմակերպության շահութաբերությունը,
- ✓ Որպես սոցիալապես պատասխանատու վարկավորող՝ Կազմակերպության ռեսուրսները տեղաբաշխելիս առաջնորդվել հաշվի առնելով ռիսկերի և եկամտաբերության ընդունելի մակարդակները՝ պահպանելով վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- ✓ ապահովել Կազմակերպության դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացում,
- ✓ ապահովել Կազմակերպության զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- ✓ Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր:

Ստորև ներկայացված են առաջիկա տարիների համար Կազմակերպության զուտ շահույթի կանխատեսված ցուցանիշները.

Անվանումը	2026	2027	2028	2029
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,912,837	3,612,284	3,995,301	3,882,751
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(1,469,600)	(1,763,843)	(1,966,243)	(1,870,700)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ/ծախս	1,443,237	1,848,441,	2,029,058	2,012,051
Այլ եկամուտներ	7,000	7,000	7,000	8,050
Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման ծախս	(47,000)	(81,800)	(95,001)	(90,518)
Անձնակազմի գծով ծախսեր	(824,200)	(928,000)	(1,028,000)	(1,130,800)

Այլ ծախսեր	(399,400)	(467,000)	(467,000)	(535,000)
Շահույթ մինչև հարկվելը	179,637	378,641	446,057	263,783
Շահութահարկի գծով ծախս	(42,000)	(83,301)	(98,132)	(58,032)
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս) հարկումից հետո	137,637	295,340	347,925	205,751
Ընդամենը ժամանակաշրջանի Համապարփակ ֆինանսական արդյունք	137,637	295,340	347,925	205,751

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ գործոնների վրա.

- Կազմակերպության կողմից ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալներ և տոկոսներ,
- Կազմակերպության համար ընդունելի ռիսկերի սահմանաչափերի և ռիսկայնության մակարդակի սահմանում,
- Կազմակերպության տեխնիկատեղեկատվական հագեցվածության ապահովման ուղղությամբ կատարվող ծախսեր,
- Կազմակերպության անձնակազմի վարձատրության, վերապատրաստման, ինչպես նաև Կազմակերպության պահպանման հետ կապված ծախսեր:

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն չունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ գործոնների վրա.

- Հիմնական շուկայական տոկոսադրույքների վարքագծի փոփոխություններ,
- Տնտեսության զարգացման բացասական միտումներ և դրանից բխող վարկերի առաջարկի և պահանջարկի նվազում,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կազմակերպության բնականոն գործունեությունը:

3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները


3.9.1. Կառավարման մարմինների կառուցվածքը, իրավասություններն ու պարտականությունները

Կազմակերպության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները.

- ✓ **Փայատերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով),**
- ✓ **Դիտորդ խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ),**
- ✓ **Գլխավոր գործադիր տնօրենը:**

Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը նրա փայատերերի ընդհանուր ժողովն է: Կազմակերպությունում ստեղծվում է Դիտորդ խորհուրդ, որն իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ դիտորդ խորհրդին վերապահված իրավասություններ: Դիտորդ խորհրդի անդամներն իրավունք չունեն գործել Կազմակերպության անունից: Կազմակերպության գործադիր մարմինն է Գլխավոր գործադիր տնօրենը: Գլխավոր գործադիր տնօրենը ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը և հաշվետու է դիտորդ խորհրդին ու Կազմակերպության փայատերերի ընդհանուր ժողովին: Կազմակերպության կառավարման մարմինների իրավասությունը և նրանց որոշումների ընդունման կարգը սահմանվում են օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ: Ընդհանուր ժողովում որոշումներ ընդունելիս Կազմակերպության անդամն ունի մեկ ձայնի իրավունք: Կազմակերպությունն ունի գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ստորաբաժանում: Ընդհանուր Ժողովն ընտրում է նաև Անվանակարգային հանձնաժողով, որի իրավասությունները սահմանվում են Կազմակերպության կանոնադրությամբ:

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Կազմակերպության կանոնադրությամբ Կազմակերպության կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

Փայատերերի ընդհանուր ժողով (Ընդհանուր Ժողով)

Կազմակերպության Ընդհանուր Ժողովը Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինն է, որին մասնակցելու և որոշումներ ընդունելու իրավունք ունեն Կազմակերպության փայատերերը: Փայատերերն Ընդհանուր ժողովին մասնակցում են անձամբ կամ լիազոր ներկայացուցիչների միջոցով: Կազմակերպության ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ) Կազմակերպության վերակազմակերպումը,

գ) Կազմակերպության լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե) անվանակարգային հանձնաժողովի ներկայացմամբ դիտորդ խորհրդի քանակական կազմի հաստատումը, դիտորդ խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

զ) Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,

է) Ընդհանուր ժողովի գումարման կանոնակարգի հաստատումը,

ը) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը (անհրաժեշտության դեպքում),

թ) ֆինանսական տարվա ընթացքում նախատեսվող Կազմակերպության կողմից կանոնադրական կապիտալի ավելացման սահմանաչափի որոշումը և դրա արդյունքում Կազմակերպության փայատերեր (կոոպերատիվի անդամներ) ներգրավվելու վերաբերյալ որոշման ընդունումը: Սույն ենթակետով նախատեսված կանոնադրական կապիտալի ավելացման և դրա արդյունքում փայատերերի ներգրավման ընթացիկ գործընթացն իրականացնում է Խորհուրդը Կազմակերպության կանոնադրությամբ և Ժողովի որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

ժ) Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դիտորդ խորհրդի ընդունած որոշման հաստատումը:

Կազմակերպության Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենին: Կազմակերպության ընդհանուր Ժողովը չի կարող քննարկել և որոշում ընդունել իր իրավասությանը չվերաբերող հարցերի վերաբերյալ:

Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Կազմակերպության փայատերերը՝ անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով,

բ) Կազմակերպության դիտորդ խորհրդի անդամները, Գլխավոր գործադիր տնօրենը, գլխավոր հաշվապահը և ժողովին նախապես հրավիրված այլ անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

գ) Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր Ժողովի օրակարգի հարցերում),

դ) այլ անձինք, անհրաժեշտության դեպքում:

Ընդհանուր ժողովները նախագահում է Կազմակերպության դիտորդ խորհրդի նախագահը: Եթե խորհրդի նախագահը բացակայում է, ապա նրան փոխարինում է խորհրդի կողմից նշանակված խորհրդի անդամը: Քվեարկությունների ժամանակ յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք անկախ կանոնադրական հիմնադրամում իր փայամասնակցության չափից:

Դիտորդ խորհուրդը (խորհուրդը)

Կազմակերպության Խորհուրդն իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ Կազմակերպության կանոնադրությամբ և Ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնակարգով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Կազմակերպության Խորհուրդը կազմված է մինչև ութ (8) անդամից՝ ներառյալ ոչ պակաս քան (1) մեկ և ոչ ավելի քան (2) երկու հրավիրված անդամից: Խորհրդի անդամներն ընտրվում են (4) չորս տարի ժամկետով, իսկ հրավիրված անդամները՝ (2) երկու տարի ժամկետով: Կազմակերպության Խորհրդի անդամներն ընտրվում են քվեարկության իրավունք ունեցող փայատերերի կողմից, իսկ հրավիրված անդամները նշանակվում են Խորհրդի կողմից:

Ընդհանուր Ժողովին Կազմակերպության Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Անվանակարգային հանձնաժողովը՝ Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: Կազմակերպության գործունեության տարածքը Խորհրդի կողմից բաժանվում է տարածաշրջանների՝ Խորհրդում համամասնական ներկայացուցչականությունն ապահովելու համար: Խորհրդի անդամությունից խորհրդի անդամի հրաժարվելու կամ վերջինիս լիազորություններն իրականացնելու անհնարինության (Խորհրդի անդամի բացակայություն, առողջական վիճակի վատթարացում, մահ) դեպքում վերջինիս լիազորությունները դադարեցված է համարվում Խորհրդի որոշման հիման վրա: Խորհրդի նոր անդամ ընտրվում է արտահերթ ընդհանուր ժողովի կողմից՝ ժողովին մասնակից ընտրողների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման այլ դեպքերը կարգավորվում են Կազմակերպության Կանոնադրության 7.2 կետի «ե» ենթակետով: Կազմակերպության Խորհրդի անդամներին՝ Խորհրդի նիստերին մասնակցելու համար տրվում է փոխհատուցում: Փոխհատուցման կարգը սահմանում է Խորհուրդը: Կազմակերպությունը կարող է ողջամիտ սահմաններում փոխհատուցումներ նշանակել Խորհրդի անդամներին՝ Խորհրդի նիստերին մասնակցելու կամ հատուկ հանձնարարություններ կատարելու համար: Կազմակերպության Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամների կազմից՝ երկու տարի ժամկետով:

Կազմակերպության Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը,

գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) նախագահում է Կազմակերպության Ընդհանուր ժողովում,

ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը, եթե այդպիսիք կան,

զ) իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

Կազմակերպության խորհրդի իրավասություններն են՝

ա) Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Կազմակերպության հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

դ) Կազմակերպությունում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը,

ե) Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
զ) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը,

է) Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր Ժողովին ներկայացումը,

ը) Ընդհանուր ժողովի հաստատմանը Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձի թեկնածության ներկայացումը,

թ) Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը, թա) Կազմակերպությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

թբ) Կազմակերպության կողմից ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

թգ) Կազմակերպության տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Կազմակերպության ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

թդ) Կազմակերպության պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը,

թե) Կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

թզ) Կազմակերպության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը, թէ) Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը, թը) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, թթ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,

ժ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը, ժա) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,

ժբ) Կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված այն խոշոր գործարքների կնքումը, որոնց արժեքը՝ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ, կազմում է Կազմակերպության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը (խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Կազմակերպության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Կազմակերպության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը

կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Կազմակերպության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը):

ժգ) Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի վարձատրության պայմանների հաստատումը, ժդ) Կազմակերպության գործունեության կանոնակարգի հաստատումը:

Կազմակերպության Խորհուրդն իր աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար կարող է ստեղծել կից հանձնաժողովներ, որոնցում կարող են ընդգրկվել ինչպես Խորհրդի անդամները, այնպես էլ Կազմակերպության այլ ղեկավարները և աշխատակիցները: Այդ հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

Կազմակերպության խորհրդի նիստերը գումարում է Կազմակերպության Խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի, Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև Կազմակերպության փայատերերի հինգ կամ ավելի տոկոսի գրավոր պահանջով: Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Սակայն Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի ընտրության և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Խորհրդի ամբողջ կազմի կողմից միաձայն: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է: Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով Ընդհանուր ժողովն ընտրում է Խորհրդի անդամներ (բացառությամբ Խորհրդի հրավիրված անդամի)՝ պաշտոնավարման ժամկետը լրացած կամ այլ հիմքով ազատված անդամների թափուր պաշտոնը լրացնելու համար: Խորհրդի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է կոնկրետ տարածաշրջան՝ ըստ փայատերերի բնակության կամ գործունեության կենտրոնացման վայրի: Տարածաշրջանները սահմանվում են Խորհրդի կողմից:

Անվանակարգային հանձնաժողովի հիմնական գործառույթը վարկային կազմակերպության Խորհրդի անդամների թեկնածություններ առաջադրելն է:

Թեկնածուների ցանկը կազմելիս՝ Անվանակարգային հանձնաժողովը պետք է հնարավորության սահմաններում ապահովի Խորհրդի անդամների այնպիսի թեկնածություններ, որոնք կներկայացնեն Կազմակերպության գործունեության բոլոր տարածաշրջանները

(տարածաշրջանները սահմանվում են Խորհրդի որոշմամբ): Անվանակարգային հանձնաժողովը աշխատանքային հարցերի քննարկման համար քվորում ունի, եթե ներկա են անդամների երկու երրորդը: Հանձնաժողովը պարտավոր է կազմել քննարկումների արձանագրություններ, որոնք հանձնվում են Խորհրդի նախագահին և պահպանվում են Կազմակերպության փաստաթղթաշրջանառության ընթացակարգերին համապատասխան: Անվանակարգային հանձնաժողովի՝ Կազմակերպության կանոնադրությամբ չնախատեսված իրավասությունները և գործունեության կարգը սահմանվում են Ընդհանուր ժողովի հաստատած Անվանակարգային հանձնաժողովի կանոնակարգով: Յուրաքանչյուր տարեկան Ընդհանուր ժողովին ընտրվում է նոր Անվանակարգային հանձնաժողով: Անվանակարգային հանձնաժողովն ընտրվում է Կազմակերպության գործունեության տարածաշրջանները, ոլորտները և ներգրավված փայատերերի բազմազանությունը լավագույն կերպով ներկայացնելու սկզբունքով: Պահպանելով այդ սկզբունքը Կազմակերպության գործունեության յուրաքանչյուր տարածաշրջանից ընտրվում է մեկ անդամ՝ մեկ տարի ժամկետով:

Անվանակարգային հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել Կազմակերպության Խորհրդի անդամները, վարձու ղեկավարները և այլ աշխատակիցները: Եթե տարեկան Ընդհանուր ժողովին Անվանակարգային հանձնաժողովի նոր կազմ չի ընտրվում, ապա Անվանակարգային հանձնաժողովի նախկին կազմը համարվում է վերընտրված: Անվանակարգային հանձնաժողովը ծառայում է մինչև նոր Անվանակարգային հանձնաժողովի ընտրությունը և լիազորությունների ստանձնումը: Անվանակարգային հանձնաժողովի անդամները չեն կարող առաջադրել իրենց թեկնածությունները որպես խորհրդի անդամ:

Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը

Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե հանդիսանում է կոոպերատիվի նախագահ: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենն ընտրվում է Խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Կազմակերպության անունից կնքում է գործարքներ, գործում է Կազմակերպության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը `

ա) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը,

բ) նախօրոք քննարկում է Ընդհանուր Ժողովի կամ Խորհրդի կողմից քննարկման ենթակա բոլոր հարցերը, որի համար պատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը, կազմակերպում Ընդհանուր Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
գ) տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
դ) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, լուծում է աշխատակիցների ընտրության, տեղաբաշխման, ուսուցման և վերապատրաստման հարցերը,
ե) Կազմակերպության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
զ) կատարում է Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի ենթակաների միջև պարտականությունների բաշխումը,
է) իրականացնում է Կազմակերպության կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:
Գլխավոր գործադիր տնօրենի որոշումները, որպես կանոն, իրագործվում են նրա հրամանների և կարգադրությունների հիման վրա: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվությունների, ֆինանսական, վիճակագրական և այլ հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկ և պետական այլ մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Կազմակերպության փայատերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Կազմակերպության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին Կազմակերպության կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:

Գլխավոր գործադիր տնօրենը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան կիսամյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Կազմակերպության կառավարման այլ մարմինների, Կազմակերպության գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ, եթե Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան

փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին: Գլխավոր գործադիր տնօրենը պաշտոնավարում է անժամկետ: Գլխավոր գործադիր տնօրենի աշխատանքները գնահատվում են խորհրդի կողմից ամեն տարի: Խորհրդի կողմից Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝ ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Կազմակերպության գործադիր տնօրեն (Վարկային կազմակերպության ղեկավար), գ) օրենքով սահմանված կարգով որակավորումից զրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից: Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների դադարեցման խորհրդի որոշումը պետք է հաստատվի ընդհանուր ժողովի կողմից:

Կազմակերպության գլխավոր հաշվապահը և գլխավոր ֆինանսական մասնագետը

Կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները: Կազմակերպության գլխավոր հաշվապահը նշանակվում է Գլխավոր գործադիր տնօրենի կողմից: Կազմակերպության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր Ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին: Կազմակերպության գլխավոր հաշվապահն առնվազն կիսամյակը մեկ անգամ Կազմակերպության Խորհրդին է ներկայացնում հաշվետվություն կազմակերպության ֆինանսական վիճակի և ցուցանիշների մասին:

Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Կազմակերպության փայատերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Կազմակերպության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Կազմակերպության Գլխավոր ֆինանսական մասնագետն իրականացնում է Կազմակերպության ակտիվների կառավարման գործունեության ընդհանուր ղեկավարումը: Գլխավոր ֆինանսական մասնագետը պատասխանատվություն է կրում Կազմակերպության կողմից Կենտրոնական բանկի

սահմանած հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման համար: Կազմակերպության Գլխավոր ֆինանսական մասնագետին նշանակում և ազատում է Գլխավոր գործադիր տնօրենը:

3.10. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

Դիտորդ Խորհուրդ՝

1. **Խորհրդի նախագահ՝ Սերյոժա Հայրապետյան**

Բնակության վայր	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (հացահատիկային կուլտուրաների մշակություն)

2. **Խորհրդի անդամ՝ Արտավազդ Խաչատրյան**

Բնակության վայր	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (ջերմոցային տնտեսություն)

3. **Խորհրդի անդամ՝ Ռաֆիկ Օհանյան**

Բնակության վայր	ՀՀ, Տավուշի մարզ, գ. Պտղավան
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (այգեգործություն, ջերմոցային տնտեսություն)

4. Խորհրդի անդամ՝ Ռոլանդ Սուսունյան

Բնակության վայր	ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (այգեգործություն)

5. Խորհրդի անդամ՝ Արմեն Ստեփանյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (բանջարաբոստանային կուլտուրաների մշակություն)

6. Խորհրդի անդամ՝ Էդվարդ Պետրոսյան

Բնակության վայր	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (այգեգործություն)

7. Խորհրդի անկախ անդամ՝ Հարություն Զաքոյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	

Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Երևանի «կապի միջոցների» գիտա-հետազոտական ինստիտուտ - պատասխանատու նախագծերի կառավարման գծով, Երևանի պետական համալսարան – դասախոս (դոցենտ)

8. **Խորհրդի անկախ անդամ՝ Քնարիկ Պետրոսյան**

Բնակության վայր	ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ. Արենի
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Գործադիր մարմին՝

1. **Գլխավոր գործադիր տնօրեն՝ Արմեն Գաբրիելյան**

Բնակության վայրը	ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ. Վերնաշեն
Իրավասությունները	• իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը, • տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, • ներկայացնում է ընկերությունը տարբեր՝ այդ թվում միջազգային, պետական և մասնավոր կառույցներում, • գործարքներ է կնքում ընկերության անունից, • տնօրինում է Վարկային կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, • հաստատում է Վարկային կազմակերպության հաստիքացուցակը, աշխատանքի է ընդունում և
Պարտականությունները	

	• աշխատանքից ազատում վարկային կազմակերպության աշխատակիցներին, լուծում է աշխատակիցների ընտրության, տեղաբաշխման, ուսուցման և վերապատրաստման հարցերը
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

2. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Գործառնական տնօրեն՝ Մուշեղ Պետրոսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան
Իրավասությունները Պարտականությունները	• ընկերության գործունեության և դրա հետ կապված գործողությունների՝ անձնակազմի, վարկատեսակների և ընթացակարգերի կարգավորման ամբողջական ցիկլի կազմակերպումն ու ամենօրյա ղեկավարումը: • գործառնական թիմի ձևավորում և ղեկավարում, մասնավորապես անձնակազմի աշխատանքի ընդունում, վարկային ոլորտի աշխատակիցների ղեկավարում, անձնակազմի ուսուցում, աշխատանքային թրեյնինգների իրականացում և այլ ուսուցանող մեթոդների կիրառում, վարկային ոլորտի անձնակազմի մոտիվացում: • վարկատեսակների զարգացում և/կամ փոփոխություն, ինչպես նաև առկա վարկատեսակների արդյունավետ կիրառում: • ղեկավարում է գործառնական ծրագրերի և բյուջեի պատրաստումը, իրականացնել գործառնական • ղեկավարում է ֆինանսական և ինստիտուցիոնալ զարգացման ծրագրերի կառավարումը, ձևավորում և կիրառության մեջ է դնում համապատասխան աշխատանքների հաշվետվություններ:

Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

3. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Ֆինանսական տնօրեն՝ Անի Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	• Պատասխանատու է Կազմակերպության ֆինասական գործողությունների կազմակերպման համար, և ղեկավարում է ֆինանսական ամբողջ անձնակազմը: • Վերահսկում է հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը տարբեր շահառուներին (ՀՀ կենտրոնական բանկ, հարկային մարմիններ, միջազգային վարկառու կազմակերպություններ, ներքին ստորաբաժանումներ): • Ապահովում է արդյունավետ լիկվիդայնության կառավարումը՝ բանակցելով և ներգրավելով ֆինանսական միջոցներ ներքին և արտաքին ներդրողներց: • Ղեկավարում է Ընկերության պլանավորման և բյուտջետավորման գործընթացները: • Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

4. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/վարկային տնօրեն՝ Հրանտ Եղիազարյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	• Կառավարել և վերահսկել Վարկային վերլուծությունների ծառայության գործունեությունը, • Ելնելով Ընկերության ընդհանուր ռազմավարական նպատակներից մշակել վարկային քաղաքականության ռազմավարությունը, • Հաստատել և զարգացնել հարաբերություններ համապատասխան գործընկերների հետ, • Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

5. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Տարածքային զարգացման գծով տնօրեն՝ Արսեն Լոբյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	•Կոորդինացնել Ընկերության մասնաճյուղերի աշխատանքը և զարգացնել վերջիններս որպես վաճառքի կենտրոններ, •Նախաձեռնել Ընկերության սպասարկման բարելավմանն, արդիականացմանն և թվայնացմանն ուղղված նախագծեր, •Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում

	առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

6. Գլխավոր հաշվապահ՝ Հրաչուհի Հովհաննիսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	•կազմակերպում հաշվապահական հաշվառման վարում, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, •ներկայացնում ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններին •Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

7. Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Մեսրոբ Ավագյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	•հսկողություն է իրականացնում Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ, •հսկողություն է իրականացնում Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի, տարածքային և

	կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Վարկային կազմակերպության ներքին ակտերի, Գլխավոր գործադիր տնօրենին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ, •եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Վարկային կազմակերպության խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ: •Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման պահին Կազմակերպության ակտիվների 10 և ավելի տոկոսը կենտրոնացված չէ որևէ մասնաճյուղում:

Կազմակերպության և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման պահին դրությամբ շահերի բախում չկա:

Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը

Կազմակերպության Դիտորդ խորհրդում գործում է աուդիտի հանձնաժողով, որի անդամները ընտրվում են խորհրդի անդամներից: Ազդագրի կազմման պահին հանձնաժողովի անդամներն են Ռոլանդ Սուսունյանը, Էդվարդ Պետրոսյանը և Հարություն Զաքոյանը:

Հանձնաժողովի հիմնական նպատակն է օժանդակել խորհրդին իրականացնելու՝ հաշվետվողականության քաղաքականությանը, ներքին վերահսկողությանը, ֆինանսական հաշվետվություններին, օրենսդրական և կանոնադրական պահանջներին առընչվող իր հսկողական պարտականությունները:

Կազմակերպությունում ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքները համապատասխանում են Հայաստանի Հանրապետությունում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

3.11. Հսկող անձինք

Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքի իմաստով Ընկերությունը գտնվում է ստորև նշված անձի ուղղակի հսկողության տակ՝

- «Գյուղ Կոոպ աջակցության հիմնադրամ Ընկերություն», որը հանդիսանում է Ընկերության 36.79% փայատեր

Կազմակերպությունը չի գտնվում որևէ անձի անուղղակի հսկողության տակ:

3.12. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.12.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2024 և 2025 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով և 2026 թվականի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (աուդիտի չենթարկված) ներառված են Ազդագրին կից հավելվածներում:

Ցանկության դեպքում ներդրողները Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Կազմակերպության գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային տնային էջում՝ www.fca.am:

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2026թ. հունիսի 30-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.12.2. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Կազմակերպությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

3.13. Լրացուցիչ տեղեկատվություն

3.13.1. Կազմակերպության կանոնադրական կապիտալը

1) **Կանոնադրական կապիտալը**

- Կանոնադրական կապիտալի մեծությունը կազմում է 1,554,730,332.5 ՀՀ դրամ:
- Կազմակերպության անդամ - փայատերերի քանակը կազմում է 11,827:
- Մեկ փայի անվանական արժեք չի սահմանվում ըստ Կազմակերպության կանոնադրության:

2) **Կանոնադրությունը**

Թողարկողի նպատակը և գործունեության ոլորտի մասին մանրամասն տեղեկատվությունը նկարագրված է Թողարկողի կանոնադրության էջ 4-ում և 8–ում:

- Թողարկողի նպատակը

Թողարկողի նպատակն է տրամադրել բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Ընդ որում Վարկային կազմակերպությունը սպասարկում է առավելապես գյուղացիական տնտեսություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց, որոնց չափանիշները սահմանվում են Վարկային կազմակերպության Խորհրդի որոշմամբ:

- Թողարկողի գործունեության ոլորտը

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» առևտրային կոոպերատիվ ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը, կորպորատիվ վարկային հաստատություն է, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ օրենսդրական ակտերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, այլ գերատեսչական ակտերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով և սույն

Կանոնադրությամբ:

Վարկային կազմակերպությունը Օրենքով սահմանված լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել հետեյալ գործունեությունը՝

ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ,

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ, գ) տրամադրել երաշխիքներ,

դ) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

ե) կանխիկ և/կամ անկանխիկ ձևով գնել և վաճառել արտարժույթ՝ ինչպես իր կողմից տրամադրված վարկերի մարումը սպասարկելու համար, այնպես էլ վարկերի մարումների սպասարկման հետ չկապված այլ դեպքերում, կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ:

զ) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

է) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ը) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն, թ) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

3.14. Էական պայմանագրերը

Կազմակերպությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Կազմակերպության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Ներկայացվող Ազդագրում պարտատոմսերի թողարկման կազմակերպման վերաբերյալ որպես խորհրդատու հանդես է գալիս՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

3.16. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.fca.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Կազմակերպության գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, 0052, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ ԱԿ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է՝
«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» Ունիվերսալ Վարկային կազմակերպություն Առևտրային Կոոպերատիվի Հիմնադիր ժողովի որոշմամբ
«21» փետրվարի 2007թ.
Արձանագրություն թիվ 1

Digitally signed by Armen Gabrielyan

Գրանցված է՝
ՀՀ Կենտրոնական բանկում

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝

Digitally signed by Martin Galstyan
Date: 2026.07.13 11:15:48 AMT
Reason: Գրանցված է 08.07.2026թ.

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«14» մայիսի 2026թ. Արձանագրություն N01

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«30» հունիսի 2025թ. Արձանագրություն N01

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«28» հունիսի 2024թ. Արձանագրություն N01

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«27» հունիսի 2023թ. Արձանագրություն N01

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«30» հունիսի 2022թ. Արձանագրություն N01

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«09» դեկտեմբեր 2021թ.
Արձանագրություն N02

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«01» հուլիսի 2021թ. Արձանագրություն N01

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«03» հուլիսի 2020թ. Արձանագրություն N01

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«24» հունիսի 2019թ. Արձանագրություն N10

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«19» հունիսի 2018թ. Արձանագրություն N10

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«22» հունիսի 2017թ. Արձանագրություն N10

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«30» հունիսի 2016թ. Արձանագրություն N10

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«19» հունիսի 2015թ. Արձանագրություն N10

Փոփոխված է՝
Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«16» հունիսի 2014թ. Արձանագրություն N01

Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«16» մայիսի 2013թ. Արձանագրություն N01

Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«10» ապրիլի 2012թ. Արձանագրություն N01

Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«16» մարտի 2011թ. Արձանագրություն N01

Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«07» դեկտեմբերի 2009թ. Արձանագրություն
N04

Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«23» հունվարի 2009թ. Արձանագրություն N03

Փայատերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ
«24» հունվարի 2008թ. Արձանագրություն N02

Ընդհանուր Ժողովի նախագահ՝

Սերյոժա Հայրապետյան _____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

“Ֆարմ Կրեդիտ Արմենիա”

Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Առևտրային Կոոպերատիվ

Նոր Խմբագրություն

Երևան 2026թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ
3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
6. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
7. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ԴՐԱ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
9. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ
10. ԱՆՎԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ
11. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ
12. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ
13. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ
14. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
15. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ
16. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ
17. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» առևտրային կոոպերատիվ ունիվերսալ վարկային կազմակերպությունը հիմնադրվել է 21 Փետրվարի 2007թ. կոոպերատիվի նախաձեռնող անդամների հիմնադիր ժողովի որոշմամբ:

1.2. «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» առևտրային կոոպերատիվ ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը (այսուհետ՝ Վարկային Կազմակերպություն), կորպորատիվ վարկային հաստատություն է, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ օրենսդրական ակտերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) նորմատիվ իրավական ակտերով, այլ գերատեսչական ակտերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ:

1.3. Սույն կանոնադրությունը սահմանում է Վարկային կազմակերպության անվանումը, նրա գտնվելու վայրը, Վարկային կազմակերպության անդամների (այսուհետ նաև՝ փայատերերի) կարգավիճակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, փայերի դիմաց վճարելու և Վարկային կազմակերպության փայատեր դառնալու կարգը, Վարկային կազմակերպության կառավարման մարմինների կազմը, դրանց իրավասությունները և որոշումների ընդունման կարգը և օրենքով պահանջվող այլ դրույթներ:
Սույն կանոնադրությունը սահմանում է նաև Վարկային կազմակերպության դիտորդ խորհրդի, հիմնական ղեկավարների, գլխավոր հաշվապահի, գլխավոր ֆինանսական մասնագետի գործառույթները և դիտորդ խորհրդի, անվանակարգային հանձնաժողովի ու ներքին աուդիտի աշխատանքների մեխանիզմների, ինչպես նաև հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների ներկայացման սկզբունքների, արտաքին աուդիտի իրականացման մեխանիզմների վերաբերյալ դրույթներ:

1.4. Վարկային Կազմակերպությունը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիաիրավական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքներին, այլ իրավական ակտերին ու սույն կանոնադրությանը համապատասխան:

1.5. Վարկային Կազմակերպության փայատերերն են՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք:

Վարկային կազմակերպությունը «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձ է, որն իրավունք ունի իրականացնել Օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված գործունեության տեսակները:

Վարկային կազմակերպության գործունեություն է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ ներգրավելը և (կամ) նմանատիպ գործարքներ կնքելը և (կամ) վարկեր տրամադրելը կամ Օրենքով սահմանված այլ ներդրումներ կատարելը: Նմանատիպ գործարքներ հասկացությունը սահմանված է Օրենքով:

Վարկային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կոոպերատիվ իրավաբանական անձ է, որի սեփականության ներքո գտնվող գույքը, սույն կանոնադրությանը համապատասխան, բաժանվում է նրա անդամների փայերի, որոնց համամասնությունը (մեկ փայատիրոջը բաժին ընկնող փայի հարաբերակցությունը) արտահայտվում է Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում: Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը հանդիսանում է կոոպերատիվի անբաժանելի ֆոնդ, որը համալրվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մուծվող անդամների մուտքավճարներից, ուղղակի ներդրումներից և այլ աղբյուրներից:

Վարկային կազմակերպությունն ունի սույն կանոնադրությամբ սահմանված այլ անբաժանելի ֆոնդեր, որոնք օգտագործվում են սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

1.6. Վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու և լիցենզավորվելու պահից:

1.7. Վարկային կազմակերպությունը կարող է իր անունից կնքել պայմանագրեր, որոնք անհրաժեշտ են իր գործունեության իրականացման համար, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում: Վարկային կազմակերպությունը վարում է իր հաշվապահությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

1.8. Վարկային կազմակերպությունը պատասխանատու չէ պետության պարտավորությունների համար, պետությունը պատասխանատու չէ Վարկային կազմակերպության պարտավորությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Վարկային կազմակերպությունը կամ պետությունը ստանձնել են այդպիսիք: Վարկային կազմակերպությունը պատասխանատու չէ իր փայատերերի պարտավորությունների համար: Վարկային կազմակերպության փայատերերը պատասխանատվություն չեն կրում Վարկային կազմակերպության պարտավորությունների համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

1.9. Վարկային կազմակերպության հասցեն է. ք. Երևան, Արաբկիր Թբիլիսյան խճուղի 9/16:
(Խմբագրվել է 09.12.2021թ. N02 որոշմամբ)

1.10. Վարկային կազմակերպությունն ունի կլոր կնիք, այլ կնիքներ, իր ֆիրմային անվանումը և ապրանքային նշանները, որոնք պաշտպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.11. Վարկային կազմակերպությունն ունի իր լրիվ և կրճատ անվանումները՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

1.12. Վարկային կազմակերպության լրիվ անվանումն է՝

- հայերեն՝ « Ֆարմ Կրեդիտ Արմենիա » ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ,
- անգլերեն՝ «Farm Credit Armenia» universal credit organisation commercial cooperative
- ռուսերեն՝ «Фарм Кредит Армения» универсальная кредитная организация коммерческий кооператив

Վարկային կազմակերպության կրճատ անվանումն է՝

- հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ» ՈՒՎԿ ԱԿ
- անգլերեն՝ «Farm Credit» UCO CC
- ռուսերեն «Фарм Кредит» УКО КК

1.13. Վարկային կազմակերպությունը կարող է սույն օրենքով և Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության տարածքում կամ օտարերկրյա պետություններում բացել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք կարող են գործել Կենտրոնական բանկում հաշվառման պահից: Օտարերկրյա պետություններում վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում են տվյալ պետության օրենսդրությանը և (կամ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

Վարկային կազմակերպության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերի, Վարկային կազմակերպության կանոնադրության և այլ ներքին իրավական ակտերի, վարկային կազմակերպության համապատասխան մարմինների և (կամ) պաշտոնատար անձանց հրահանգների և որոշումների, ինչպես նաև համապատասխան մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրությանը համաձայն: Մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները իրավաբանական անձինք չեն:

ԳԼՈՒԽ 2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

2.1. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 1,554,730,332.5 (Մեկ միլիարդ հինգ հարյուր հիսունչորս միլիոն յոթ հարյուր երեսուն հազար երեք հարյուր երեսուներկու դրամ 50 լումա):

2.2. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ձևավորման աղբյուրներն են՝

ա) կանոնադրական կապիտալում Վարկային կազմակերպության փայատերերի ուղղակի ներդրումները, որոնք կատարվում են սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

բ) Վարկային կազմակերպությունից ստացված վարկերի դիմաց փայատերերի սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կատարված վճարները,

գ) Վարկային կազմակերպությանը կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով տրված դրամական միջոցները,

դ) Վարկային կազմակերպությունից ստացված փոխառությունների դիմաց փայատերերի սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կատարված վճարները,

ե) օրենքով չարգելված այլ աղբյուրները:

2.3. Վարկային կազմակերպությունը փայատերերին տրամադրում է համապատասխան փայերի հավաստագրեր, որոնք Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված անվանական արժեքով բաժնային արժեթղթեր են: Վարկային կազմակերպությունը վարում է իր փայատերերի գրանցամատյան:

2.4. Վարկային կազմակերպությունը իր կանոնադրական կապիտալն ավելացնում է ընդհանուր ժողովի և խորհրդի որոշմամբ: Վարկային կազմակերպության Ընդհանուր ժողովը որոշում է ընդունում առաջիկա ֆինանսական տարում Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման ընդհանուր ծավալների վերաբերյալ, որի սահմաններում Վարկային կազմակերպության դիտորդ խորհուրդը ավելացնում է կանոնադրական կապիտալը սույն կետով նախատեսված կարգով: Սույն կետի բ) ենթակետով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում կանոնադրական կապիտալի ավելացման համար ստեղծված կուտակային հաշվին (այսուհետ նաև՝ կանոնադրական կապիտալի ավելացման ֆոնդին) կուտակված միջոցները տարեկան արդյունքներով կապիտալացվում և ուղղվում են կանոնադրական կապիտալ՝ Ընդհանուր ժողովի որոշմամբ, համապատասխանաբար ավելացնելով համապատասխան կուտակում կատարած անձի (փայատիրոջ) փայը կանոնադրական կապիտալում:

Կանոնադրական կապիտալն ավելացվում է հետևյալ կարգով՝

ա) Սույն կանոնադրության 2.2 կետի ա) ենթակետի հիմքով կանոնադրական կապիտալն ավելացնելու դեպքում շահագրգիռ անձը դիմում է ներկայացնում Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի անունով դիմումում շարադրելով վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու և կոոպերատիվի փայատեր դառնալու իր ցանկության մասին, միաժամանակ ներկայացնելով նշված նպատակի համար տրամադրվող դրամական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր: Գլխավոր Գործադիր տնօրենը դիմումը ներկայացնում է Խորհրդի առաջիկա նիստին: Խորհուրդը նիստի արդյունքներով որոշում է կայացնում դիմումը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:

բ) Սույն կանոնադրության 2.2 կետի բ) ենթակետի հիմքով կանոնադրական կապիտալն ավելացնելու դեպքում վարկային կազմակերպության անդամ-փայատերերը խորհրդի կողմից սահմանված չափով փայ են ավելացնում վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով բացված հատուկ հաշվին:

Սույն ենթակետով նախատեսված գյուղացիական վարկերի չափանիշները սահմանվում են խորհրդի որոշմամբ:

գ) սույն կանոնադրության 2.2 կետի գ) ենթակետի հիմքով կանոնադրական կապիտալն ավելացնելու դեպքում շահագրգիռ կազմակերպությունը Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալն ավելացնելու նպատակով Վարկային կազմակերպությանը տրամադրում է դրամաշնորհ, որը չի հանգեցնում Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում փայամասնակցության: Սույն ենթակետով կանոնադրական կապիտալի ավելացման դեպքերում դրամաշնորհ տրամադրած կազմակերպությունը ձեռք չի բերում փայատիրոջ կարգավիճակ և հետագայում չի կարող ազդել Վարկային կազմակերպության կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների վրա, հաշվի առնելով այն, որ Վարկային կազմակերպությունը հանդիսանում է այնպիսի ֆինանսավարկային կազմակերպություն, որն իր սեփական և փոխառու միջոցները կարող է օգտագործել բացառապես «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան:

Սույն ենթակետով նախատեսված կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունը իր մտադրությունների մասին գրավոր տեղեկացնում է Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենին: Առաջարկը քննարկվում է Վարկային կազմակերպության առաջիկա խորհրդի նիստում ինչի արդյունքներով կայացվում է որոշում: Դրամաշնորհ տրամադրող կազմակերպության առաջարկն ընդունվում է, եթե այն համապատասխանում է սույն ենթակետի պահանջներին:

դ) Սույն կանոնադրության 2.2 կետի դ) ենթակետի հիմքով կանոնադրական կապիտալն ավելացնելու դեպքում փոխառություններ ստացած վարկային կազմակերպության փայատերերը խորհրդի կողմից սահմանված չափով մուծում են կատարում վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով ստեղծված հատուկ ֆոնդին:

Սույն ենթակետով նախատեսված փոխառությունների չափանիշները սահմանվում են խորհրդի որոշմամբ:

2.5 Սույն կանոնադրության 2.4 կետով նախատեսված Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման կարգերը գործում են այնքանով, որքանով չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին:

2.6 Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվում Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Վարկային կազմակերպությունը Օրենքով սահմանված լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել հետեւյալ ֆինանսական գործառնությունները՝

ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ,

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

գ) տրամադրել երաշխիքներ,

դ) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

ե) կանխիկ և/կամ անկանխիկ ձևով գնել և վաճառել արտարժույթ՝ ինչպես իր կողմից տրամադրված վարկերի մարումը սպասարկելու համար, այնպես էլ վարկերի մարումների

սպասարկման հետ չկապված այլ դեպքերում, կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ:

զ) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

է) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ը) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

թ) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

Վերջին պարբերությունը ուժը կորցրած է ճանաչվել (22.06.2017թ. N01 որոշմամբ):
(ե) ենթակետը խմբագրվել է 27.06.2023թ. N01 որոշմամբ)

3.2 Վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Ընդ որում Վարկային կազմակերպությունը սպասարկում է առավելապես գյուղացիական տնտեսություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց, որոնց չափանիշները սահմանվում են Վարկային կազմակերպության Խորհրդի որոշմամբ:

3.3 Վարկային կազմակերպությունը փոխառություններ է ներգրավում և (կամ) նմանատիպ գործարքներ է կնքում Օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Վարկային կազմակերպությունն իր կողմից մշակված և որդեգրած ռազմավարությամբ պայմանավորված կարող է հրապարակային օֆերտայի միջոցով ներգրավել միջոցներ:

3.4 Վարկային կազմակերպությանն արգելվում է իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այնպիսի գործունեություն, որը նախատեսված չէ Օրենքով և Կենտրանական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

ԳԼՈՒԽ 4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Վարկային կազմակերպությունը վարկեր է տրամադրում և այլ ֆինանսական ծառայություններ է մատուցում առավելապես Հայաստանի Հանրապետության մարզերում՝

ա) գյուղմթերք արտադրողներին, վերամշակողներին,

բ) գյուղացիական տնտեսությունների գործառնական կարիքների բավարարմանն ուղղված և դրանց ուղղակիորեն առնչվող ծառայություններ մատուցողներին (կոոպերատիվներ, ընկերություններ, անհատ ձեռնարկատերեր),

գ) Հայաստանի Հանրապետության մարզերում մշտապես բնակվող և գյուղացիական տնտեսություն վարող անձանց,

դ) ագրոպարենային ոլորտում գործող ցանկացած այլ տնտեսվարող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

4.2. Վարկային կազմակերպության դիտորդ խորհուրդը սույն կանոնադրության 3-րդ գլխով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման համար սահմանում է կարգեր, որոնք հանդիսանում են Վարկային կազմակերպության ներքին իրավական ակտեր:

ԳԼՈՒԽ 5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Վարկային կազմակերպության փայատեր կարող են դառնալ փայատերերի համապատասխանության չափանիշներին բավարարող քաղաքացիները և իրավաբանական անձինք: Համապատասխանության չափանիշները սահմանում է Խորհուրդը:

5.2. Վարկային կազմակերպության յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ ունեցած փայամասնակցության (փայերի քանակի) չափից:

5.3. Վարկային կազմակերպության Փայատերերն իրավունք ունեն՝

ա) մասնակցել Վարկային կազմակերպության Ընդհանուր Ժողովին և քվեարկության միջոցով որոշում ընդունել Ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող բոլոր հարցերի վերաբերյալ,

բ) մասնակցել Վարկային կազմակերպության կառավարմանը,

գ) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ընդգրկվել Վարկային կազմակերպության խորհրդի կազմում կամ առաջադրել Խորհրդի անդամի թեկնածու՝ բացառությամբ սույն կանոնադրության 9.2 կետում նշված դեպքերի,

դ) ստանալ շահաբաժիններ Վարկային կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով,

ե) ստանալ Վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկատվություն, այդ թվում ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, հեռանկարային զարգացման ծրագրերին և օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված տեղեկատվության,

զ) Փայատերերի Ընդհանուր Ժողովներին իրենց իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

է) հանդես գալ առաջարկություններով Փայատերերի Ընդհանուր Ժողովում և առաջարկություններ ներկայացնել ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկելու համար,

ը) Վարկային կազմակերպության լուծարման դեպքում ստանալ գույքի իրենց հասանելիք մասը,

թ) օտարել իրենց պատկանող փայերը՝ օրենքով սահմանված կարգով:

5.4 Վարկային կազմակերպության փայատերը պարտավոր է՝

ա) չհրապարակել Վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները, որոնց ցանկը սահմանում է Խորհուրդը,

բ) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով և Վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված իրեն վերապահված այլ պարտականություններ,

գ) չիրականացնել այնպիսի գործունեություն կամ չկնքել այնպիսի գործարք, որը կարող է վնասել վարկային կազմակերպության շահերին՝ հանգեցնել կոոպերատիվի ակտիվների, հեղինակության, համբավի, կորստի:

5.5 Վարկային կազմակերպության փայատերերն ունեն օրենքով, այլ իրավական ակտերով և վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

5.6 Վարկային կազմակերպության փայատերերը Կանոնադրությամբ և վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունները չկատարելու համար փայատերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են հեռացվել կոոպերատիվից:

(Խմբագրվել է 28.06.2024թ.-ի թիվ 01 որոշմամբ)

5.7 Վարկային կազմակերպության փայատիրոջ մահվան դեպքում նրա ժառանգորդը կարող է դառնալ կոոպերատիվի անդամ՝ ժառանգել անդամությունը և փայը, եթե բավարարում է փայատերերի համապատասխանության չափանիշներին:

6. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1 Վարկային կազմակերպության կառավարման մարմիններն են՝

ա) Վարկային կազմակերպության փայատերերի ընդհանուր Ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր Ժողովը), որը Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է,

բ) Վարկային կազմակերպության Դիտորդ խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), որն ընտրվում է Վարկային կազմակերպության Ընդհանուր Ժողովում,

գ) Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը:

6.2 Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը նրա փայատերերի ընդհանուր ժողովն է:

6.3 Վարկային կազմակերպությունում ստեղծվում է Դիտորդ խորհուրդ, որն իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ դիտորդ խորհրդին վերապահված իրավասություններ: Դիտորդ խորհրդի անդամներն իրավունք չունեն գործել կոոպերատիվի անունից:

6.4 Վարկային կազմակերպության գործադիր մարմինն է Գլխավոր գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե հանդիսանում է նաև կոոպերատիվի նախագահ: Գլխավոր գործադիր տնօրենը ղեկավարում է Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեությունը և հաշվետու է դիտորդ խորհրդին ու կոոպերատիվի փայատերերի ընդհանուր ժողովին:

6.5 Վարկային կազմակերպության կառավարման մարմինների իրավասությունը և նրանց որոշումների ընդունման կարգը սահմանվում են օրենքով և սույն կանոնադրությամբ:

6.6 Ընդհանուր ժողովում որոշումներ ընդունելիս կոոպերատիվի անդամն ունի մեկ ձայնի իրավունք:

6.7 Վարկային կազմակերպությունն ունի գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ստորաբաժանում:

Վարկային կազմակերպությունն ընտրում է նաև Անվանակարգային հանձնաժողով, որի իրավասությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ:

7. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ԴՐԱ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Վարկային կազմակերպության Ընդհանուր Ժողովը Վարկային կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինն է, որին մասնակցելու և որոշումներ ընդունելու իրավունք ունեն Վարկային կազմակերպության փայատերերը: Փայատերերը Ընդհանուր ժողովին մասնակցում են անձամբ կամ լիազոր ներկայացուցիչների միջոցով:

7.2 Վարկային կազմակերպության ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Վարկային կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ) Վարկային կազմակերպության վերակազմակերպումը,

գ) Վարկային կազմակերպության լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե) անվանակարգային հանձնաժողովի ներկայացմամբ խորհրդի քանակական կազմի հաստատումը, խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

զ) Վարկային կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,

է) Ընդհանուր ժողովի գումարման կանոնակարգի հաստատումը,

ը) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը (անհրաժեշտության դեպքում),

թ) ֆինանսական տարվա ընթացքում նախատեսվող Վարկային կազմակերպության կողմից կանոնադրական կապիտալի ավելացման սահմանաչափի որոշումը և դրա արդյունքում

վարկային կազմակերպության փայատերեր (կոոպերատիվի անդամներ) ներգրավվելու վերաբերյալ որոշման ընդունումը: Սույն ենթակետով նախատեսված կանոնադրական կապիտալի ավելացման և դրա արդյունքում փայատերերի ներգրավման ընթացիկ գործընթացն իրականացնում է Խորհուրդը սույն կանոնադրությամբ և Ժողովի որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

ժ) Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դիտորդ խորհրդի ընդունած որոշման հաստատումը:

7.3. Վարկային կազմակերպության Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենին: Վարկային կազմակերպության ընդհանուր Ժողովը չի կարող քննարկել և որոշում ընդունել իր իրավասությանը չվերաբերող հարցերի վերաբերյալ:

7.4. Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Վարկային կազմակերպության փայատերերը՝ անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով,

բ) Վարկային կազմակերպության խորհրդի անդամները, Գլխավոր գործադիր տնօրենը, գլխավոր հաշվապահը և Ժողովին նախապես հրավիրված այլ անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

գ) Վարկային կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր Ժողովի օրակարգի հարցերում),

դ) այլ անձինք, անհրաժեշտության դեպքում:

7.5. Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Վարկային կազմակերպության փայատերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Վարկային կազմակերպության փայատերերի գրանցամատյանի տվյալների հիման վրա:

7.6. Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Վարկային կազմակերպության փայատերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Վարկային կազմակերպության յուրաքանչյուր փայատիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի վերաբերյալ:

7.7. Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Վարկային կազմակերպության փայատերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Վարկային կազմակերպության այն փայատերերին, որոնք գրանցված են Վարկային կազմակերպության փայատերերի գրանցամատյանում: Ցուցակը կարող է տրամադրվել Վարկային կազմակերպության փայատիրոջը՝ նրա գրավոր դիմումի հիման վրա՝ երեք օրվա ընթացքում: Փայատիրոջ գրավոր պահանջով Վարկային կազմակերպությունը պարտավոր է մեկ օրվա ընթացքում նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող փայատերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

7.8. Ընդհանուր Ժողովը գումարվում է տարին առնվազն մեկ անգամ: Ընդհանուր Ժողովը համարվում է կայացած, եթե նրան մասնակցել են Վարկային կազմակերպության փայատերերի առնվազն երեք տոկոսը: Ընդհանուր ժողովը կարող է գումարվել փայատերերի համատեղ ներկայությամբ կամ առցանց մասնակցությամբ միասնական նիստի կամ տարածաշրջանային գումարման նիստերի ձևով, առանց փայատերերի համատեղ ներկայության՝ հեռակա կարգով:

(Խմբագրվել է 30.06.2022թ. N01 որոշմամբ)
(Խմբագրվել է 27.06.2023թ. N01 որոշմամբ)
(Խմբագրվել է 30.06.2025թ. N01 որոշմամբ)

7.9. Ընդհանուր ժողովը գումարվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված «Ընդհանուր ժողովի գումարման» կանոնակարգի համապատասխան:

7.10. Ընդհանուր Ժողովի նիստերը արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում՝ առնվազն երկու օրինակից: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը, որոնք պատասխանատվություն են կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Արձանագրությունում նշվում են՝

ա) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը, ձևը և օրակարգը,

բ) Ժողովին մասնակցած փայատերերի քանակը,

գ) Ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրած հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ընդունած որոշումները:

Վարկային կազմակերպության փայատերերն իրավունք ունեն ծանոթանալ Ժողովի արձանագրություններին:

7.11. Սույն կանոնադրության 7.2 կետի «ա», «բ», «դ», ենթակետերում նշված հարցերով որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող՝ քվեարկող փայերի սեփականատերերի ձայների 3/4-ով, իսկ «գ» և «ժ» ենթակետերում նշված հարցերով՝ Ժողովին մասնակցող՝ փայատերերի ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող փայատերերի ձայների 2/3-ից:

Մնացած հարցերի գծով Ժողովի որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենքով ձայների ավելի մեծ քանակ սահմանված չէ:

7.12. Ընդհանուր ժողովները նախագահում է Վարկային կազմակերպության խորհրդի նախագահը: Եթե խորհրդի նախագահը բացակայում է, ապա նրան փոխարինում է խորհրդի կողմից նշանակված խորհրդի անդամը:

7.13. Քվեարկությունների ժամանակ յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք անկախ կանոնադրական հիմնադրամում իր փայամասնակցության չափից:

7.14. Վարկային կազմակերպության փայատերերի ընդհանուր Ժողովի հետ կապված այլ հարցերը, այդ թվում՝ Ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը, որոնք չեն նախատեսվել սույն կանոնադրությամբ, կարգավորվում են «Վարկային կազմակերպության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված «Ընդհանուր ժողովի գումարման» կանոնակարգով:

8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

8.1. Վարկային կազմակերպության խորհուրդն իրականացնում է Վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ սույն կանոնադրությամբ և ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնակարգով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

8.2. Վարկային կազմակերպության խորհուրդը կազմված է մինչև ութ (8) անդամից: Խորհրդի կազմում ներառվում են հրավիրված անդամներ: Խորհրդի անդամներն ընտրվում են (4) չորս տարի ժամկետով, իսկ հրավիրված անդամները՝ (2) երկու տարի ժամկետով:

(Խմբագրվել է 30.06.2025թ. N01 որոշմամբ)

(Խմբագրվել է 14.05.2026թ.-ի թիվ 01 որոշմամբ)

8.3. Վարկային կազմակերպության խորհուրդի անդամներն ընտրվում են քվեարկության իրավունք ունեցող փայատերերի կողմից, իսկ հրավիրված անդամները նշանակվում են խորհրդի կողմից:

8.4. Ընդհանուր Ժողովին Վարկային կազմակերպության Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Անվանակարգային հանձնաժողովը՝ սույն կանոնադրությամբ և Վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

(8.5 կետը ուժը կորցրած է ճանաչվել 14.05.2026թ.-ի թիվ 01 որոշմամբ)

8.6. Այն դեպքերում, երբ Խորհրդի անդամը հրաժարվում է իր պաշտոնից կամ անհնար է դառնում իր կողմից խորհրդի անդամի լիազորություններն իրականացնելը (խորհրդի անդամի երկարաժամկետ բացակայություն, առողջական վիճակի վատթարացում, մահ), կամ նոր հանգամանքների ի հայտ գալով պայմանավորված Խորհրդի անդամը չի համապատասխանում ՀՀ օրենքներով և ՀՀ ԿԲ իրավական ակտերով սահմանված ղեկավարների մասնագիտական և/կամ որակավորման համապատասխանության չափանիշներին, կամ Ընդհանուր ժողովի կողմից սահմանված այլ չափանիշներին, ապա նրա լիազորությունները դադարեցված են համարվում խորհրդի որոշման հիման վրա: ***Խորհրդի նոր անդամ ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ ժողովին մասնակից ընտրողների ձայների պարզ մեծամասնությամբ:***

(Խմբագրվել է 28.06.2024թ.-ի թիվ 01 որոշմամբ)

(Խմբագրվել է 14.05.2026թ.-ի թիվ 01 որոշմամբ)

8.7. Վարկային կազմակերպության խորհրդի անդամներին՝ խորհրդի նիստերին մասնակցելու համար տրվում է փոխհատուցում: Փոխհատուցման կարգը սահմանում է խորհուրդը: Վարկային կազմակերպությունը կարող է ողջամիտ սահմաններում փոխհատուցումներ նշանակել խորհրդի անդամներին՝ Խորհրդի նիստերին մասնակցելու կամ հատուկ հանձնարարություններ կատարելու համար:

8.8. Վարկային կազմակերպության Խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների կազմից՝ երկու տարի ժամկետով:
Վարկային կազմակերպության Խորհրդի նախագահը՝
ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,
բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը,
գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
դ) նախագահում է Վարկային կազմակերպության Ընդհանուր ժողովում,
ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը, եթե այդպիսիք կան,
զ) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ և Վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

8.9. Վարկային կազմակերպության խորհրդի իրավասություններն են՝
ա) Վարկային կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Վարկային կազմակերպության հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
բ) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
գ) Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
դ) Վարկային կազմակերպությունում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը,
ե) Վարկային կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
զ) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը,
է) Վարկային կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր Ժողովին ներկայացումը,
ը) Ընդհանուր ժողովի հաստատմանը Վարկային կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձի թեկնածության ներկայացումը,
թ) Վարկային կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

թա) Վարկային կազմակերպությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

թբ) Վարկային կազմակերպության կողմից ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

թգ) Վարկային կազմակերպության տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Վարկային կազմակերպության ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

թդ) Վարկային կազմակերպության պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը,

թե) Վարկային կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

թզ) Վարկային կազմակերպության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,

թէ) Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

թը) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

թթ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,

ժ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,

ժա) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,

ժբ) Վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված այն խոշոր գործարքների կնքմումը, որոնց արժեքը՝ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ, կազմում է Վարկային կազմակերպության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը (խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Վարկային կազմակերպության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Վարկային կազմակերպության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Վարկային կազմակերպության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը):

ժգ) Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի վարձատրության պայմանների հաստատումը,

ժդ) Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգի հաստատումը:

8.10 Վարկային կազմակերպության խորհուրդն իր աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար կարող է ստեղծել կից հանձնաժողովներ, որոնցում կարող են ընդգրկվել ինչպես խորհրդի անդամները, այնպես էլ Վարկային կազմակերպության այլ ղեկավարները և աշխատակիցները: Այդ հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

8.11 Խորհրդի նիստի գումարման մասին անդամները պետք է ծանուցվեն նիստի գումարման օրվանից առնվազն երեք օր առաջ, սակայն հրատապ հարցերի դեպքում Խորհրդի արտահերթ նիստ հրավիրելիս ծանուցման եռօրյա ժամկետը կարող է չպահպանվել: Ծանուցումը կարող է իրականացվել էլ. նամակի, ֆաքսի, պատվիրված նամակի կամ առձեռն հանձնելու միջոցով:

(Խմբագրվել է 24.06.2019թ. N01 որոշմամբ)

(Խմբագրվել է 30.06.2025թ. N01 որոշմամբ)

8.12 Վարկային կազմակերպության խորհրդի նիստերը գումարում է Վարկային կազմակերպության խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի, Վարկային կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև Վարկային կազմակերպության փայատերերի երեք կամ ավելի տոկոսի գրավոր պահանջով:
(Խմբագրվել է 30.06.2025թ. N01 որոշմամբ)

8.13 Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Սակայն 8.9 կետի գ) ենթակետում նշված հարցերի վերաբերյալ որոշումները ընդունվում են Խորհրդի ամբողջ կազմի կողմից միաձայն:

8.14 Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

8.15 Վարկային կազմակերպության խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով: Հեռակա կարգով խորհրդի նիստ անցկացնելու դեպքում, նախապես, առնվազն երեք օր առաջ, խորհրդի յուրաքանչյուր անդամին ուղարկվում է նիստի օրակարգը և օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ստացվում է նրանց կարծիքները:
(Խմբագրվել է 30.06.2025թ. N01 որոշմամբ)

8.16 Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել նաև այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

8.17 Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

8.18 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
բ) նիստին մասնակցած անձինք,
գ) նիստի օրակարգը,
դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի,
ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,
զ) նիստում ընդունված որոշումները:

8.19 Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

8.20 Հեռակա կարգով անցկացվող Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է օրակարգի հարցերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման հիման վրա:

8.21 Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

9. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

9.1 Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով Ընդհանուր ժողովն ընտրում է Խորհրդի անդամներ (բացառությամբ Խորհրդի հրավիրված անդամի)՝ պաշտոնավարման ժամկետը լրացած կամ այլ հիմքով ազատված անդամների թափուր պաշտոնը լրացնելու համար:

(Երկրորդ պարբերությունն ուժը կորցրած է ճանաչվել 14.05.2026թ.-ի թիվ 01 որոշմամբ)

9.2 Խորհրդի կազմում չեն կարող ընդգրկվել Վարկային Կազմակերպության Անվանակարգային հանձնաժողովի անդամները, վարձու ղեկավարները և այլ աշխատակիցները:

9.3 Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, Խորհուրդն ընտրում է Խորհրդի հրավիրված անդամ՝ ժամկետը լրացած հրավիրված խորհրդի անդամի թափուր պաշտոնը լրացնելու նպատակով:

9.4 Հրավիրված խորհրդի անդամը չի կարող միաժամանակ հանդիսանալ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ընդգրկված հաստատություններից որևէ մեկի խորհրդի նախագահ, անդամ կամ գործադիր մարմնի ղեկավար: Նման պաշտոն ստանձնելու կամ կարգավիճակ ստանալու դեպքում, հրավիրված խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են Խորհրդի որոշման հիման վրա:

(Խմբագրվել է 30.06.2025թ. N01 որոշմամբ)

10. ԱՆՎԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

10.1. Անվանակարգային հանձնաժողովի հիմնական գործառույթը վարկային կազմակերպության Խորհրդի անդամների թեկնածություններ առաջադրելն է:

10.2. Թեկնածուներ առաջադրելիս Անվանակարգային հանձնաժողովը պետք է հնարավորության սահմաններում ապահովվի Խորհրդի անդամների բազմազանությունը, ներառյալ՝ ոլորտային մասնագիտացումը, կարողությունները, փորձառությունը, տարիքն ու սեռը:

(Խմբագրվել է 14.05.2026թ. N01 որոշմամբ)

10.3. Անվանակարգային հանձնաժողովը ուսումնասիրում է Վարկային Կազմակերպության Խորհրդի անդամության պահանջներին բավարարող թեկնածուների ցուցակը, հավաստիանում նման թեկնածուների՝ խորհրդում ծառայելու պատրաստակամության վերաբերյալ և կազմում է խորհրդի անդամների ընտրության քվեաթերթիկ, որում ներառված թեկնածուների քանակը պետք է կազմի խորհրդի անդամների անհրաժեշտ քանակի կրկնակին:

10.4. Անվանակարգային հանձնաժողովը աշխատանքային հարցերի քննարկման համար քվորում ունի, եթե ներկա են անդամների երկու երրորդը: Հանձնաժողովը պարտավոր է կազմել քննարկումների արձանագրություններ, որոնք հանձնվում են Խորհրդի նախագահին և պահպանվում են Վարկային կազմակերպության փաստաթղթաշրջանառության ընթացակարգերին համապատասխան:

10.5 Անվանակարգային հանձնաժողովի սույն կանոնադրությամբ չնախատեսված իրավասությունները և գործունեության կարգը սահմանվում են Ընդհանուր ժողովի հաստատած Անվանակարգային հանձնաժողովի կանոնակարգով:

10.6 Յուրաքանչյուր տարեկան Ընդհանուր ժողովին ընտրվում է նոր Անվանակարգային հանձնաժողով: Անվանակարգային հանձնաժողովն ընտրվում է Վարկային կազմակերպության գործունեության ոլորտները և ներգրավված թեկնածուների բազմազանությունը լավագույն կերպով ներկայացնելու սկզբունքով:

(Խմբագրվել է 14.05.2026թ. N01 որոշմամբ)

10.7 Անվանակարգային հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել Վարկային Կազմակերպության Խորհրդի անդամները, վարձու ղեկավարները և այլ աշխատակիցները:

10.8 Եթե տարեկան Ընդհանուր ժողովին Անվանակարգային հանձնաժողովի նոր կազմ չի ընտրվում, ապա Անվանակարգային հանձնաժողովի նախկին կազմը համարվում է վերընտրված: Անվանակարգային հանձնաժողովը ծառայում է մինչև նոր Անվանակարգային հանձնաժողովի ընտրությունը և լիազորությունների ստանձնումը:

10.9 Անվանակարգային հանձնաժողովի անդամները չեն կարող առաջադրել իրենց թեկնածությունները որպես խորհրդի անդամ:

11. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

11.1 Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե հանդիսանում է կոոպերատիվի նախագահ: Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենն ընտրվում է Խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

11.2 Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Վարկային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Վարկային կազմակերպության անունից կնքում է գործարքներ, գործում է Վարկային կազմակերպության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

11.3 Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը ՝

ա) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Վարկային կազմակերպության խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը,

բ) նախօրոք քննարկում է Ընդհանուր Ժողովի կամ Խորհրդի կողմից քննարկման ենթակա բոլոր հարցերը, որի համար պատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը, կազմակերպում Ընդհանուր Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

գ) տնօրինում է Վարկային կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

դ) հաստատում է Վարկային կազմակերպության հաստիքացուցակը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում վարկային կազմակերպության աշխատակիցներին, լուծում է աշխատակիցների ընտրության, տեղաբաշխման, ուսուցման և վերապատրաստման հարցերը,

ե) վարկային կազմակերպության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

զ) կատարում է Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի ենթակաների միջև պարտականությունների բաշխումը,

է) իրականացնում է սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

11.4 Գլխավոր գործադիր տնօրենի որոշումները, որպես կանոն, իրագործվում են նրա հրամանների և կարգադրությունների հիման վրա:

11.5 Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվությունների, ֆինանսական, վիճակագրական և այլ հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկ և պետական այլ մարմիններին ժամանակին

ներկայացնելու, ինչպես նաև Վարկային կազմակերպության փայատերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Վարկային կազմակերպության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին սույն կանոնադրությանը և Վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերին համապատասխան:

11.6 Գլխավոր գործադիր տնօրենը խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ:
(Խմբագրվել է 24.06.2019թ. N01 որոշմամբ)
(Խմբագրվել է 30.06.2025թ. N01 որոշմամբ)

11.7 Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Վարկային կազմակերպության կառավարման այլ մարմինների, Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

11.8 Գլխավոր գործադիր տնօրենը պաշտոնավարում է անժամկետ: Գլխավոր գործադիր տնօրենի աշխատանքները գնահատվում են խորհրդի կողմից ամեն տարի: Խորհրդի կողմից Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (Վարկային կազմակերպության ղեկավար),

գ) օրենքով սահմանված կարգով որակավորումից զրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների դադարեցման խորհրդի որոշումը պետք է հաստատվի ընդհանուր ժողովի կողմից:

12. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԸ

12.1 Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և Վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

12.2 Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը նշանակվում է Գլխավոր գործադիր տնօրենի կողմից:

12.3 Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր Ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին:

12.4 Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Վարկային կազմակերպության խորհրդին է ներկայացնում հաշվետվություն կազմակերպության ֆինանսական վիճակի և ցուցանիշների մասին:
(Խմբագրվել է 24.06.2019թ. N01 որոշմամբ)
(Խմբագրվել է 30.06.2025թ. N01 որոշմամբ)

12.5 Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Վարկային կազմակերպության փայատերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Վարկային կազմակերպության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Վարկային կազմակերպության կանոնադրությանը համապատասխան:

12.6 Վարկային կազմակերպության Գլխավոր ֆինանսական մասնագետն իրականացնում է Վարկային կազմակերպության ակտիվների կառավարման գործունեության ընդհանուր ղեկավարումը: Գլխավոր ֆինանսական մասնագետը պատասխանատվություն է կրում Վարկային կազմակերպության կողմից Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման համար:

12.7 Վարկային կազմակերպության Գլխավոր ֆինանսական մասնագետին նշանակում և ազատում է Գլխավոր գործադիր տնօրենը:

13. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

13.1 Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները նշանակվում են Վարկային կազմակերպության խորհրդի կողմից Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Վարկային կազմակերպության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Վարկային կազմակերպության աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

13.2 Վարկային կազմակերպության ներքին աուդիտը Վարկային կազմակերպության խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

բ) հսկողություն է իրականացնում Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Վարկային կազմակերպության ներքին ակտերի, Գլխավոր գործադիր տնօրենին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Վարկային կազմակերպության խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ: Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Վարկային կազմակերպության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

13.3 Ներքին աուդիտի ղեկավարը խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում հաշվետվություններ խորհրդի սահմանած կարգով:

13.4 Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է եռօրյա ժամկետում դրանք գրավոր ներկայացնել Վարկային կազմակերպության խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին՝ միաժամանակ առաջարկելով խախտումների վերացման և ապագայում նման խախտումների չկրկնման առաջարկներ:

14. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14.1 Վարկային կազմակերպությունը հաշվապահական հաշվառումը վարվում է հաշվապահական հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերի համապատասխան:
Վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված ֆինանսական հաշվետվություններ, ինչպես նաեւ Կենտրոնական բանկի սահմանած այլ հաշվետվություններ:
(Խմբագրվել է 28.06.2024թ.-ի թիվ 01 որոշմամբ)

14.2 Վարկային կազմակերպության գործունեության արդյունքներն արտացոլվում են Կենտրոնական բանկ ներկայացվող ֆինանսական և այլ հաշվետվություններում:

14.3 Ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով հրապարակելուց առաջ, պետք է ստուգվեն, և դրանց հավաստիությունը պետք է հաստատվի Վարկային կազմակերպության և վերջինիս ղեկավարների հետ ընդհանուր գույքային շահեր չունեցող աուդիտն իրականացնող անձի կողմից:
(Խմբագրվել է 28.06.2024թ.-ի թիվ 01 որոշմամբ)

15. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

15.1 Վարկային կազմակերպության շահույթը նրա տնտեսական գործունեության ընթացքում գոյացած բոլոր եկամուտների (համախառն եկամուտ) և հարկային օրենսդրությամբ սահմանված նվազեցումների ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական և համայնքային բյուջեների նկատմամբ պարտավորությունները կատարելուց հետո գոյացած դրական տարբերությունն է:

15.2 Վարկային կազմակերպության շահույթը՝ Վարկային կազմակերպության զարգացման նպատակով կարող է ուղղվել Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալ կամ բաշխվել սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով: Վարկային կազմակերպությունը կարող է շահաբաժիններ վճարել բացառապես տարեկան արդյունքներով:

15.3 Վարկային կազմակերպության տարեկան շահաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունում է Ընդհանուր Ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ, որը սահմանում է վճարման կարգն ու պայմանները:

15.4 Վարկային կազմակերպության փայատերերին շահաբաժիններ վճարելն արգելվում է, եթե դրանց վճարման պահին ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին Վարկային կազմակերպության առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:

15.5 Վարկային կազմակերպությունը ստեղծում է Պահուստային հիմնադրամ և հատուկ պահուստներ համաձայն խորհրդի կողմից հաստատված Կապիտալիզացիայի Պլանի: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է կորուստները ծածկելու համար, եթե Վարկային կազմակերպության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

15.6 Վարկային կազմակերպության շահույթը Վարկային կազմակերպության զարգացման նպատակով մինչև 2035 թվականի հունվարի 1-ն ուղղվելու է Վարկային կազմակերպության կապիտալի համալրմանը:

(Խմբագրվել է 28.06.2024թ.-ի թիվ 01 որոշմամբ)

(Վերահամարակալվել է 14.05.2026թ.-ի թիվ 01 որոշմամբ)

16. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16.1 Վարկային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել բանկի՝ օրենքով սահմանված կարգով:

16.2 Վարկային կազմակերպության վերակազմավորումը (կազմակերպաիրավական ձևի փոփոխությունը) կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

16.3 Վարկային կազմակերպության միացումը կատարվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

16.4 Վարկային կազմակերպության գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կենտրոնական Բանկի կողմից սահմանված կարգին և սույն կանոնադրությանը համապատասխան:

17. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17-րդ գլուխն ուժը կորցրած է ճանաչվել (14.05.2026թ.-ի N01 որոշմամբ)

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈւՎԿ ԱԿ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

«ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ
ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ
Հուլիս 20, 2026թ.
ժամը 11:00
ՈՐՈՇՈՒՄ N05
ՔԱՂՎԱԾՔ

Ֆարմ Կրեդիտ Արմենիա՝ ՈՒՎԿ ԱԿ (այսուհետ՝ ՎԿ) Դիտորդ խորհուրդը, ղեկավարվելով ՎԿ Կանոնադրությամբև ՎԿ Դիտորդ խորհրդի գործունեության կարգով

Որոշեց՝

1. Թողարկել 3,000,000,000 ՀՀ դրամ ծավալով անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր (արժեկտրոնների եռամսյակային վճարման պարբերականությամբ)՝ ՀՀ կենտորնական բանկի կողմից Ծրագրային Ազդագիրը հաստատելուց հետո մեկ տարվա ընթացքում:
2. Սահմանել ՀՀ դրամով թողարկվող յուրաքանչյուր պարտատոմսի անվանական արժեքը 100,000 ՀՀ դրամ:
3. Իրականացնել պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը «Հայաստանի ֆոնդային Բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, և պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացում օգտվել տեղաբաշխողի կողմից մատուցվող ծառայություններից:
4. Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները սահմանել Ընկերության խորհրդի առանձին որոշումներով:
5. Չսահմանել պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի և ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակում՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
6. Հաստատել Ծրագրային ազդագիրը:

Դիտորդ խորհրդի նախագահ՝ Սերյոժա Հայրապետյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ ԱԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 6)
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին
30 Հունիս 2026թ.

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ, ք.Երևան, Թբիլիսյան խճ. 9/16

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը	Հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանը	Նախորդ տարվա սկզբից մինչև նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	745,594	695,937	1,482,214	1,355,572
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(332,660)	(310,678)	(659,176)	(611,232)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ/ծախս	412,934	385,259	823,038	744,340
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/ (վնաս)	(34,466)	(29,154)	(45,953)	(44,077)
Այլ եկամուտներ	13,586	8,280	17,875	10,768
Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման ծախս	(31,650)	(43,722)	(17,938)	14,505
Անձնակազմի գծով ծախսեր	(184,390)	(155,299)	(366,605)	(324,905)
Հիմնական միջոցների մաշվածություն	(17,780)	(16,964)	(35,007)	(32,992)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(579)	(265)	(1,164)	(936)
Այլ ծախսեր	(104,421)	(115,638)	(198,438)	(233,157)
Շահույթ մինչև հարկվելը	53,234	32,497	175,808	133,546
Շահութահարկի գծով ծախս	(15,000)	(13,000)	(38,000)	(30,000)
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս) հարկումից հետո	38,234	19,497	137,808	103,546
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-		
Ընդամենը ժամանակաշրջանի Համապարփակ ֆինանսական արդյունք	38,234	19,497	137,808	103,546

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2026թ

Կ.S.

Վարկային կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն _____ **Ա.Գաբրիելյան**

Գլխավոր հաշվապահ _____ **Հ.Հովհաննիսյան**

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 7)

Ֆինանսական վիճակի մասին

30 Հունիս 2026թ.

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ, ք.Երևան, Թբիլիսյան խճ. 9/16

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	30.06.2026թ. (չստուգված)	31.12.2025թ. (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	264,640	290,762
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	419,642	-
Ներդրումային արժեթղթեր	964,962	1,231,120
Ռեպո համաձայն. վաճառված արժեթղթեր	237,885	-
Հաճախորդներին տրված վարկեր	16,129,668	15,925,438
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,816,987	1,872,877
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	950,363	947,217
Բոնագանձված ակտիվներ	13,963	19,193
Այլ ակտիվներ	150,014	113,114
Ընդամենը՝ ակտիվներ	**20,948,124**	**20,399,721**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	15,181,156	15,021,138
Ստորադաս փոխառություններ	888,084	888,975
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ	250,050	-
Թողարկված տոկոսային պարտատոմսեր	1,223,530	1,224,260
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	34,383	11,194
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն	18,213	28,170
Հետաձգված հարկային պարտավորություն	5,139	5,139
Վարձակալության գծով պարտավորություններ	90,722	105,593
Այլ պարտավորություններ	190,948	187,161
Ընդամենը՝ պարտավորություններ	**17,882,225**	**17,471,630**
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	1,525,623	1,525,623
Չբաշխված շահույթ	1,540,276	1,402,468
Ընդամենը՝ սեփական կապիտալ	**3,065,899**	**2,928,091**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	**20,948,124**	**20,399,721**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2026թ

Կ.Տ.

Վարկային կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն _____ **Ա.Գաբրիելյան**

Գլխավոր հաշվապահ _____ **Հ.Հովհաննիսյան**

Ենթահավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

Ենթահավելված 8

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)

30 Հունիս 2026թ.

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ, ք.Երևան, Թբիլիսյան խճ. 9/16

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ	Դրամական հոսքերի հեջավորման պահուստ	Ոչ ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը	Հսկողություն չսահմանող մասնակցություն	Սեփական կապիտալի ընդամենը
	Սեփական բաժնետոմսեր	Հայտով կապիտալ	Վճարված կապիտալ									
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I եռամսյակ)													
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2025թ. (ստուգված)	1,455,857		1,455,857							1,234,027	2,689,884		2,689,884
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և Լական սխալների ճշգրտումը			0								0		0
2. Վերահաշվարկված մնացորդը	1,455,857		1,455,857							1,234,027	2,689,884		2,689,884
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝													
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ													
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին			0								0		0
4. Համապարփակ եկամուտ			0							103,546	103,546		103,546
5. Շահութաբաժիններ			0								0		0
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝			0								0		0
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում			0								0		0
7. Ներքին շարժեր, այդ թվում՝			0								0		0
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին			0								0		0
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կոտակված վճասի ծածկում			0								0		0
7.3. Լմիսխոռ վճասի ծածկում			0								0		0
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում			0								0		0
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր			0								0		0
16. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2025թ. (ստուգված)	1,455,857		1,455,857							1,337,573	2,793,430		2,793,430
Հաշվետու ժամանակաշրջան (II եռամսյակ)													
9. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2026թ. (ստուգված)	1,525,623		1,525,623							1,402,468	2,928,091		2,928,091
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և Լական սխալների ճշգրտումը			0								0		0
10.Վերահաշվարկված մնացորդը	1,525,623		1,525,623							1,402,468	2,928,091		2,928,091
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝													
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ													
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին			0								0		0
12. Համապարփակ եկամուտ			0							137,808	137,808		137,808
13. Շահութաբաժիններ			0								0		0
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝			0								0		0
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում			0								0		0
15. Ներքին շարժեր, այդ թվում՝			0								0		0
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին			0								0		0
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կոտակված վճասի ծածկում			0								0		0
15.3. Լմիսխոռ վճասի ծածկում			0								0		0
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում			0								0		0
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր			0								0		0
16. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2026թ. (ստուգված)	1,525,623		1,525,623							1,540,276	3,065,899		3,065,899

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2026թ

Վարկային կազմակերպության
գլխավոր գործադիր տնօրեն _____ Ա.Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ _____ Հ.Հովհաննիսյան

Կ.Տ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՁԵ 9)

Դրամական միջոցների հոսքերի մասին

30 Հունիս 2026թ.

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ, ք.Երևան, Թբիլիսյան խճ. 9/16

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	30.06.2026թ. (չստուգված)	31.12.2025թ. (ստուգված)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված տոկոսներ	1,433,625	2,776,492
Վճարված տոկոսներ	(663,407)	(1,426,730)
Այլ ստացված եկամուտներ	17,875	31,476
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(366,605)	(756,658)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(185,214)	(274,565)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր՝ նախքան փոփոխությունները գործառնական ակտիվներում և պարտավորություններում	**236,274**	**350,015**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(419,470)	-
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	(204,509)	(1,841,473)
Ֆինանսական վարձակալության դիմաց ստացվելիք գումարների նվազում (ավելացում)	55,890	(242,427)
Այլ ակտիվներ և պարտավորություններ	(9,741)	60,912
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ նախքան շահութահարկը	**(341,556)**	**(1,672,973)**
Վճարված շահութահարկ	(47,920)	(57,086)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**(389,476)**	**(1,730,059)**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների օտարում (ձեռքբերում)	(49,188)	(46,524)
Ոչ նյութական ակտիվների օտարում (ձեռքբերում)		(4,250)
Արժեթղթի նվազում (ավելացում)	27,782	33,635
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**(21,406)**	**(17,139)**
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	410,129	1,787,844
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	672	45,159
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(22,436)	(44,873)
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**388,365**	**1,788,130**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**(22,517)**	**40,932**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբին	**290,762**	**256,328**
Արտարժույթի փոխարժեքային ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**(3,605)**	**(6,498)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջում	**264,640**	**290,762**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2026թ

Կ.Տ.

Վարկային կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն _____ **Ա.Գաբրիելյան**

Գլխավոր հաշվապահ _____ **Հ.Հովհաննիսյան**

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ**

Ամսաթիվը 01/04/26
30/06/26

(հազար դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծությունը	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	1,525,623	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	3,494,903	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը	18.9%	12.0%	Խախտում առկա չէ
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	5.8%	25.0%	Խախտում առկա չէ
$Ն^5_1$ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը		10.0%	Խախտում առկա չէ
$Ն^5_2$ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը		5.1%	Խախտում առկա չէ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2026թ

Կ.Տ.

Վարկային կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն **Ա.Գաբրիելյան**

Գլխավոր հաշվապահ **Հ.Հովհաննիսյան**

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի փայատերերին և խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի՝ (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի»* (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝

որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 4.6-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ Ծանոթագրություն 32.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Կազմակերպության՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Կազմակերպության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Կազմակերպության՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Կազմակերպության փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Կազմակերպության կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Կազմակերպության ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:

- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Կազմակերպության համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Կազմակերպության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՄԽ կողմից հրապարակված ՖՀՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք

աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Նարինե Աճեմյան է:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նարինե Աճեմյան
Առաջադրանքի պատասխանատու

20 ապրիլի, 2026թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	5	2,531,479	2,163,814
Այլ տոկոսային եկամուտ	5	252,970	209,595
Տոկոսային ծախս	5	(1,283,190)	(1,094,495)
Զուտ տոկոսային եկամուտներ		**1,501,259**	**1,278,914**
Զուտ առևտրային վնաս	6	(42,404)	(11,143)
Շնորհներից եկամուտ	7	-	789
Ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ վնաս		(29,017)	(16,006)
Պարտքային կորուստների գծով ծախս	9	(138,319)	(60,182)
Այլ գործառնական եկամուտ	8	33,643	24,677
Զուտ գործառնական եկամուտ		**1,325,162**	**1,217,049**
Անձնակազմի գծով ծախսեր	10	(744,079)	(614,636)
Այլ ծախսեր	11	(360,097)	(365,678)
Շահույթ մինչև հարկումը		**220,986**	**236,735**
Շահութահարկի գծով ծախս	12	(52,545)	(55,272)
Տարվա շահույթ		**168,441**	**181,463**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**168,441**	**181,463**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 75-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	290,762	256,328
Ներդրումային արժեթղթեր	15	1,231,120	600,749
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	15	-	727,336
Հաճախորդներին տրված վարկեր	16	15,925,438	14,245,929
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	17	1,872,877	1,655,584
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	18	947,217	995,797
Բռնագանձված ակտիվներ	19	19,193	28,985
Այլ ակտիվներ	20	113,114	133,910
Ընդամենը՝ ակտիվներ		**20,399,721**	**18,644,618**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	21	15,021,138	13,488,279
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	1,224,260	1,224,087
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14	11,194	-
Ստորադաս փոխառություն	23	888,975	888,441
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		28,170	26,036
Հետաձգված հարկային պարտավորություն	12	5,139	11,814
Վարձակալության գծով պարտավորություններ	27	105,593	135,188
Այլ պարտավորություններ	24	187,161	180,889
Ընդամենը՝ պարտավորություններ		**17,471,630**	**15,954,734**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	25	1,525,623	1,455,857
Չբաշխված շահույթ		1,402,468	1,234,027
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**2,928,091**	**2,689,884**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**20,399,721**	**18,644,618**

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2026թ-ի ապրիլի 20-ին:

Արմեն Գաբրիելյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Հրաչուհի Հովհաննիսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 75-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,370,362**	**1,052,564**	**2,422,926**
Կանոնադրական կապիտալի ավելացում	85,495	-	85,495
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**85,495**	**-**	**85,495**
Տարվա շահույթ	-	181,463	181,463
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**181,463**	**181,463**
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,455,857**	**1,234,027**	**2,689,884**
Հաշվեկշիռը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,455,857**	**1,234,027**	**2,689,884**
Կանոնադրական կապիտալի ավելացում	69,766	-	69,766
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**69,766**	**-**	**69,766**
Տարվա շահույթ	-	168,441	168,441
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**168,441**	**168,441**
Հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,525,623**	**1,402,468**	**2,928,091**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 75-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	2,776,492	2,340,326
Վճարված տոկոսներ	(1,426,730)	(1,062,029)
Զուտ վճարներ արտարժույթով գործառնություններից	(42,404)	(11,143)
Այլ ստացված եկամուտ	31,476	23,420
Աշխատակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ	(988,819)	(878,248)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**350,015**	**412,326**
(Ավելացում) նվազում գործառնական ակտիվներում		
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	277,020
Հաճախորդներին տրված վարկեր	(1,841,473)	(2,412,642)
Ածանցյալ գործիքներ	11,194	-
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	(242,427)	(467,863)
Այլ ակտիվներ	29,992	42,415
Ավելացում (նվազում) գործառնական պարտավորություններում		
Այլ պարտավորություններ	19,726	8,807
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված՝ մինչև շահութահարկը	**(1,672,973)**	**(2,139,937)**
Վճարված շահութահարկ	(57,086)	(12,957)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(1,730,059)**	**(2,152,894)**

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների առք	(52,941)	(58,857)
Հիմնական միջոցների վաճառք	2,167	3,096
Արժեթղթերի (ձեռքբերում)/մարում	33,635	(356,375)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(17,139)**	**(412,136)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ	16,138,310	14,701,477
Մարված վարկեր և փոխառություններ	(14,350,466)	(13,274,462)
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,200,000
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրման համար	45,159	68,129
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(44,873)	(42,930)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**1,788,130**	**2,652,214**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**40,932**	**87,184**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	256,328	174,018
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(6,498)	(4,874)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (Ծանոթագրություն 13)	**290,762**	**256,328**

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 75-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի գյուղատնտեսական վարկերի տրամադրումն է անհատներին և իրավաբանական անձանց: Վարկային կազմակերպությունը վարկեր է տրամադրում և այլ ֆինանսական ծառայություններ է մատուցում առավելապես ՀՀ մարզերում՝ գյուղացիական տնտեսություններին:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՄ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ 2007թ-ին և գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Կազմակերպությունը գրանցվել է 2007թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N20 արտոնագրային համարով:

Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է ք. Երևանում, իսկ թվով 10 մասնաճյուղերը գտնվում են ՀՀ տարբեր մարզերում: Կազմակերպության իրավաբանական հասցեն է ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16:

Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ.-ին կազմել է՝ 100 մարդ (2024թ.՝ 92):

Համապատասխանություն և անընդհատություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ՖՀՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Կազմակերպությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է բախվել մի շարք ներքին և արտաքին մարտահրավերների՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածությամբ, տարածաշրջանային անվտանգության խնդիրներով և գլոբալ տնտեսության փոփոխվող ռիսկերով: Այնուամենայնիվ, հայկական բիզնեսը աստիճանաբար հարմարվում է նոր պայմաններին՝ դիվերսիֆիկացնելով մատակարարման շղթաները, ընդլայնելով արտահանման շուկաները և կիրառելով առավել ճկուն գործառնական մոդելներ: Ներդրումային միջավայրի բարելավմանն, ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն ու մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված պետական բարեփոխումները ստեղծում են երկարաժամկետ տնտեսական կայունության հիմքեր:

2025թ. Հայաստանի տնտեսության ոլորտային պատկերը հակասական է. մի կողմից շարունակվում է առևտրի, ծառայությունների և շինարարության կայուն աճը, մյուս կողմից դիտվում է արդյունաբերության նկատելի անկում: Աճող ոլորտները մեծապես շահում են ներմուծման ընդլայնումից, սպառողական ակտիվությունից, ինչպես նաև զբոսաշրջության վերականգնումից, որն ավելացնում է ծառայությունների պահանջարկը: Շինարարության աճը պայմանավորված է ինչպես մասնավոր ներդրումներով, այնպես էլ բնակարանաշինության շարունակական բարձր պահանջարկով, ինչը դարձնում է այն տնտեսության ամենաակտիվ ճյուղերից մեկը: Ընդհանուր առմամբ, տնտեսության շարժիչ ուժը շարունակում են մնալ սպառման վրա հիմնված ոլորտները:

2025թ. Հայաստանի ֆինանսական ոլորտը, ընդհանուր առմամբ, մնում է կայուն՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ, իրացվելիության համապատասխան մակարդակներով և ՀՀ Կենտրոնական բանկի շարունակական վերահսկողությամբ պայմանավորված : Չնայած արտաքին ռիսկերի աճին և գլոբալ ֆինանսական անորոշություններին՝ ֆինանսական հաստատությունները շարունակում են առանցքային դեր խաղալ տնտեսական ակտիվության աջակցման գործում՝ իրականացնելով վարկավորման, վճարահաշվարկային ծառայությունների և ռիսկերի կառավարման արդյունավետ գործառույթներ:

2025թ. պետական բյուջեի համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը նախատեսված է 5.1%, իսկ 2026թ,՝ 5.4%:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Կազմակերպության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

2.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Կազմակերպությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ըստ իրացվելիության՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվության համապատասխան հոդվածային տողի ակտիվների/պարտավորությունների մեծ մասը ստանալու/մարելու Կազմակերպության մտադրության և ակնկալվող կարողության վրա: Հաշվետու ամսաթվից (ընթացիկ) հետո 12 ամսվա և հաշվետու ամսաթվից (ոչ ընթացիկ) հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում ակտիվների/պարտավորությունների ստացման կամ մարման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ում:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Կազմակերպությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՖՀՄՄ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՍ 21 *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ»* ստանդարտի փոփոխությունը՝ կապված *«Փոխանակելիության բացակայության»* հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Կազմակերպության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Կազմակերպության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

  2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»* ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական*

հաշվետվությունների ներկայացում» ստանդարտը: Չնայած ՖՀՄՄ 18-ը ներառում է ՀՀՄՄ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՄ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՄ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՄ 8-ը կվերանվանվի *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»*:

Ի հավելումն, ՀՀՄՄ 7 *«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»* ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՄ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՄ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Կազմակերպությունը ներկայում գնահատում է ՀՀՄՄ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- *«Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր»* (ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով: Ֆինանսական գործիքները ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով, ինչպես նաև իրական արժեքով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Կազմակերպությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են կամ ուղղակիորեն շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում կամ շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Յուրաքանչյուր արտարժութային գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը

հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
ՀՀ դրամ/1 Եվրո	449.01	413.89
ՀՀ դրամ/1 Ռուբլի	4.8711	3.71

4.4 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ

ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Կազմակերպությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 4.6 (գ) -ում:

Այլ տոկոսային եկամուտ

Այլ տոկոսային եկամտի հաշվարկում անվանական տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն արժեքի նկատմամբ գծային հիմունքով:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Կազմակերպությունը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

4.5 Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի

լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում Կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.6 Ֆինանսական գործիքներ

ա) Ճանաչում և սկզբնական չափում

Ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Կազմակերպության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

բ) Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Կազմակերպությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է՝

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Կազմակերպության ղեկավարությանը,
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Կազմակերպությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի

ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Կազմակերպությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Կազմակերպությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Կազմակերպության պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Կազմակերպությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

գ) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Կազմակեչպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տե՛ս նաև Ծանոթագրություն 4.6 (գ)) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակայինօգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Կազմակերպության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Կազմակերպությունը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ

բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոփով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Կազմակերպությունը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Կազմակերպությունը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

դ) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Կազմակերպությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս Ծանոթագրություն 4.6 (գ)), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Կազմակերպությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս Ծանոթագրություն 4.6 (զ)), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ե) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի

օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Կազմակերպության առևտրային գործունեության ընթացքում:

գ) Արժեզրկում

Կազմակերպությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- փոխատվության հանձնառություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Կազմակերպությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Կազմակերպությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է Ծանոթագրություն 32.1.2-ում:

Վերոնշյալի հիման վրա՝ Կազմակերպությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Կազմակերպությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև

ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:

- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Կազմակերպությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Կազմակերպությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են Ծանոթագրություն 32.1.2-ում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանսասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ Ծանոթագրություն 4.6(գ)), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսասկան ակտիվից ակնկալվող դրամական միջոցների

պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Կազմակերպության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Կազմակերպությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,
- փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Կազմակերպությունը գնահատում է փոխատվության հանձնառության ամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:

- Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Կազմակերպությունը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին՝ Կազմակերպությունը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և:
- Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Կազմակերպության պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Այդ նպատակով Կազմակերպությունը գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները՝ հիմնվելով ակնկալվող վճարումների ներկա արժեքի վրա՝ պարտատիրոջ կրած պարտքային կորուստները փոխհատուցելու համար: Նվազեցումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Կազմակերպությունը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Կազմակերպության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.6.1 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են բանկերում հաշիվներից և այլ կարճաժամկետ պահանջներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6.2 Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդների տրված վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6.3 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում շահույթում կամ վնասում՝

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և հակադարձում
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս:

4.6.4 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.7 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Կազմակերպությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Կազմակերպությանը,
- Կազմակերպությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Կազմակերպությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Կազմակերպությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Կազմակերպությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Կազմակերպությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Կազմակերպության

կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Կազմակերպությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Կազմակերպությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Կազմակերպությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Կազմակերպության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Կազմակերպությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Կազմակերպությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Կազմակերպությունը որպես վարձատու

Որպես վարձատու՝ Կազմակերպությունը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

Վարձակալության մեկնարկն այն ամսաթիվն է, երբ վարձակալն իրավունք ունի օգտվել վարձակալած ակտիվը օգտագործելու իր իրավունքից: Դա վարձակալության սկզբնական ճանաչման ամսաթիվն է: Ֆինանսական վարձակալության մեկնարկից հետո Կազմակերպությունը ճանաչում է վարձակալության զուտ ներդրումը, որը ստացվելիք նվազագույն վարձավճարն է, որը զեղչվում է վարձակալության ենթադրվող տոկոսադրույքով: Համախառն ներդրման և ներկայիս արժեքի միջև տարբերությունը գրանցվում է որպես ֆինանսական վարձակալության չվաստակված եկամուտ:

Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են զուտ ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ:

Երբ վարձակալման պայմանագրերի դադարեցման արդյունքում Կազմակերպության տիրապետության տակ է անցնում վարձակալության առարկան, այդ ակտիվները չափվում են իրացման զուտ արժեքի և պատմական ամորտիզացված արժեքների նվազագույնով:

4.8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.33
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-8	12.5-100
Տնտեսական գույք	5-8	12.5-20
Փոխադրամիջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.9 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ մինչև 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ: (Համակարգչային ծրագրերի մշակման գծով ծախսերը (օրինակ՝ դիզայն և նոր կամ նորացված ծրագրի թեսթավորում) ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, երբ Կազմակերպությունը կարողանում է ցուցադրել ոչ նյութական ակտիվի ստեղծման տեխնիկական հնարավորությունն այնպես, որ այն հնարավոր լինի վաճառքի կամ օգտագործման, իր մտադրությունը ստեղծելու ոչ նյութական ակտիվ և այն օգտագործելու կամ վաճառելու, իր ունակությունը օգտագործելու կամ վաճառելու ոչ նյութական ակտիվը, այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու հնարավոր տնտեսական օգուտներ, աշխատանքներն ավարտելու բավարար միջոցների առկայություն և դրանց հստակ գնահատում: Ծրագրային ապահովման գծով այլ ծախսերը ճանաչվում են դրանց ծագման պահին:)

4.10 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.11 Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Եկամուտներին վերաբերվող շնորհները պետք է ճանաչվեն շահույթում այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

4.12 Վարկեր, փոխառություններ և թողարկված պարտքային արժեթղթեր

Վարկերը և փոխառությունները, որոնք ներառում են ՀՀ կենտրոնական բանկից և այլ կազմակերպություններից ստացված վարկերը և փոխառությունները, և թողարկված պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.13 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալը բաղկացած է փայատերերի բաժնեմասերից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

4.14 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Կազմակերպության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն

պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4.14.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Կազմակերպությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս Ծանոթագրություն 4.6(բ)):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Կազմակերպությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

4.14.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս Ծանոթագրություն 29):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Կազմակերպությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման

գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս Ծանոթագրություն 32.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ)):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս Ծանոթագրություն 26:

5 Զուտ տոկոսային եկամուտ և ծախս

	2025թ.	2024թ.
Արդյունավետ տոկոադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	2,427,729	2,065,967
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,151	9,229
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	94,284	77,642
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,315	10,976
Ընդամենը արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	**2,531,479**	**2,163,814**
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	252,970	209,595
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտ	**2,784,449**	**2,373,409**
Վարկեր և փոխառություններ	992,998	825,471
Վարձակալության գծով պարտավորություններ	15,130	14,411
Ստորադաս փոխառություն	109,980	109,988
Տոկոսային ծախսեր հետգնման պայմանագրերից	17,908	47,039
Տոկոսային ծախսեր թողարկված տոկոսային արժեթղթերից	147,174	97,586
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախս	**1,283,190**	**1,094,495**
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	**1,501,259**	**1,278,914**

6 Զուտ առևտրային վնաս

	2025թ.	2024թ.
Արտարժույթի առք ու վաճառքից առաջացած զուտ վնաս	(17,455)	(6,196)
Ածանցյալ գործիքներից զուտ վնաս	(24,949)	(4,947)
Ընդամենը զուտ առևտրային վնաս	**(42,404)**	**(11,143)**

7 Շնորհներից եկամուտ

	2025թ.	2024թ.
Ակտիվներին վերաբերող շնորհներ	-	789
Ընդամենը եկամուտ շնորհներից	**-**	**789**

8 Այլ գործառնական եկամուտ

	2025թ.	2024թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	14,823	9,792
Այլ միջնորդավճարներ ապահովագրական ընկերություններից	3,308	3,397
Հիմնական միջոցների վաճառքից զուտ օգուտներ	2,167	1,257
Այլ եկամուտներ	13,345	10,231
Ընդամենը այլ եկամուտներ	**33,643**	**24,677**

9 Պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)

					2025թ.
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր	16	25,525	2,834	95,535	123,894
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	17	4,203	193	10,029	14,425
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս		**29,728**	**3,027**	**105,564**	**138,319**

					2024թ.
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր	16	30,913	2,572	20,901	54,386
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	17	7,884	(2,088)	-	5,796
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս		**38,797**	**484**	**20,901**	**60,182**

10 Անձնակազմի գծով ծախսեր

	2025թ.	2024թ.
Աշխատակիցների հատուցումներ, ներառյալ դրանց վերաբերող հարկերը	739,114	611,557
Անձնակազմի վերապատրաստման ծախսեր	4,965	3,079
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**744,079**	**614,636**

11 Այլ ծախսեր

	2025թ.	2024թ.
Մաշվածություն և ամորտիզացիա	104,010	100,995
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	39,054	48,176
Տնտեսական ապրանքներ և կոմունալ ծառայություններ	20,867	22,919
Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսեր	7,530	9,552
Վարկերի տրամադրման գծով ծախսեր	17,378	20,095
Համակարգչային ծրագրերի գծով ծախսեր	15,836	16,663
Ապահովագրություն	16,083	13,977
Բանկային ծառայությունների վճարներ	3,313	3,299
Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր	12,973	10,962
Կապի և տեղեկատվության ծառայություններ	10,285	11,686
Գործուղման ծախսեր	19,233	13,866
Մասնագիտական ծառայություններ	14,960	10,520
Պահառության գծով ծախսեր	1,176	8,784
Շահութահարկից բացի այլ հարկեր և տուրքեր	12,920	12,395
Գովազդի և հասարակական կապերի գծով ծախսեր	23,516	27,639
Գրասենյակային ծախսեր	2,622	3,157
Անդամավճարներ	4,205	4,177
Ներկայացուցչական ծախսեր	6,194	7,813
Այլ	27,942	19,003
Ընդամենը այլ ծախսեր	**360,097**	**365,678**

12 Շահութահարկի գծով ծախս

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	59,220	46,681
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	-	1,669
Հետաձգված հարկի գծով ծախս	(6,675)	6,922
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**52,545**	**55,272**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2024թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	220,986		236,735	
Շահութահարկ	39,777	18	42,612	18
Չնվազեցվող ծախսեր	7,545	3	8,108	3
Արտարժույթի բացասական փոխարժեքային տարբերություն	5,223	2	2,883	1
Նախորդ տարիների շահութահարկի ճշտում	-	-	1,669	1
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**52,545**	**23**	**55,272**	**23**

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ՝

			2025թ.		
	2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավո-րություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(461)	(60)	(521)	-	(521)
Հաճախորդներին տրված վարկեր	(17,318)	3,467	(13,851)	-	(13,851)
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	4,679	2,596	7,275	7,275	-
Հիմնական միջոցներ	(22,442)	5,615	(16,827)	-	(16,827)
Այլ ակտիվներ	(6,342)	(1,658)	(8,000)	-	(8,000)
Վարկեր և փոխառություններ	(2,062)	-	(2,062)	-	(2,062)
Վարձակալության գծով պարտավորություն	24,334	(5,327)	19,007	19,007	-
Այլ պարտավորություններ	7,798	2,042	9,840	9,840	-
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	**(11,814)**	**6,675**	**(5,139)**	**36,122**	**(41,261)**

	2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	2024թ. Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավո-րություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(824)	363	(461)	-	(461)
Հաճախորդներին տրված վարկեր	(13,748)	(3,570)	(17,318)	-	(17,318)
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	3,635	1,044	4,679	4,679	-
Հիմնական միջոցներ	(8,328)	(14,114)	(22,442)	-	(22,442)
Այլ ակտիվներ	(4,881)	(1,461)	(6,342)	-	(6,342)
Վարկեր և փոխառություններ	3,714	(5,776)	(2,062)	-	(2,062)
Վարձակալության գծով պարտավորություն	9,146	15,188	24,334	24,334	-
Այլ պարտավորություններ	6,394	1,404	7,798	7,798	-
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	**(4,892)**	**(6,922)**	**(11,814)**	**36,811**	**(48,625)**

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Բանկային հաշիվներ	289,683	256,046
Այլ կարճաժամկետ պահանջներ	1,079	282
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**290,762**	**256,328**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 234,696 հազար դրամ գումարով (81%) բանկային հաշիվները տեղաբաշխված են մեկ բանկում, (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 225,215 հազար դրամ (88%) մեկ բանկում):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում:

14 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի սվոփերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Կազմակերպության պարտքային ռիսկը ներկայացնում է սվոփային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

	31 դեկտեմբերի 2025թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	800,856	-	11,194
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	**800,856**	-	11,194

15 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	1,231,120	600,749
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**1,231,120**	**600,749**

Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	-	727,336
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**-**	**727,336**

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ բանկերում, Կազմակերպության պարտազանցման բացակայության դեպքում գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով, բայց գործընկերոջ կողմից պայմանագրի ժամկետի ավարտին արժեթղթերը հետ վերադարձնելու պայմանով: Կազմակերպությունը սահմանել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերն ու հատույցները և հետևաբար, չի ապաճանաչում դրանք: Գրավադրված արժեթղթերի դիմաց հաշվառվող պարտավորությունները ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	3.95	2029	3.95 - 7.15	2025-2029

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Կազմակերպությունը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող:

16 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

	31 դեկտեմբերի 2025թ.			31 դեկտեմբերի 2024թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Պարտքային կորուստների գծով պահուստ	Հաշվեկշռային արժեք
Գյուղատնտեսական վարկեր						
Բուսաբուծություն	5,610,457	(124,554)	5,485,903	4,144,642	(85,510)	4,059,132
Անասնապահություն	4,886,816	(121,351)	4,765,465	4,686,806	(96,898)	4,589,908
Ձկնաբուծություն	101,526	(1,594)	99,932	69,114	(1,109)	68,005
	10,598,799	**(247,499)**	**10,351,300**	**8,900,562**	**(183,517)**	**8,717,045**
Այլ վարկեր						
Առևտուր	1,488,521	(38,957)	1,449,564	1,454,569	(32,496)	1,422,073
Արդյունաբերություն	201,149	(3,492)	197,657	112,687	(2,761)	109,926
Սպառողական	3,594,291	(75,951)	3,518,340	3,600,226	(49,055)	3,551,171
Ֆինանսական հատված	403	(6)	397	119,275	(2,069)	117,206
Այլ	415,657	(7,477)	408,180	334,178	(5,670)	328,508
	5,700,021	**(125,883)**	**5,574,138**	**5,620,935**	**(92,051)**	**5,528,884**
Ընդամենը	**16,298,820**	**(373,382)**	**15,925,438**	**14,521,497**	**(275,568)**	**14,245,929**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավներից ձեռքբերում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի վարկառու (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որին տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

Գյուղատնտեսական և այլ վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2025թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Գյուղատնտեսական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	8,663,368	133,933	103,261	8,900,562
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	8,872,970	59,500	16,687	8,949,157
Մարված ակտիվներ	(7,167,563)	(30,352)	(47,153)	(7,245,068)
- փոխանցում Փուլ 1	56,361	(54,501)	(1,860)	-
- փոխանցում Փուլ 2	(58,932)	62,918	(3,986)	-
- փոխանցում Փուլ 3	(94,981)	(43,293)	138,274	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	62,142	(24,404)	(19,264)	18,474
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(24,326)	(24,326)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,333,365**	**103,801**	**161,633**	**10,598,799**

2025թ.

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Այլ վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	5,595,406	16,226	9,303	5,620,935
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,431,440	8,000	17,700	2,457,140
Մարված ակտիվներ	(2,343,539)	(5,405)	(9,362)	(2,358,306)
- փոխանցում Փուլ 1	9,101	(9,101)	-	-
- փոխանցում Փուլ 2	(20,235)	23,686	(3,451)	-
- փոխանցում Փուլ 3	(22,003)	(3,707)	25,710	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(16,454)	477	(2,017)	(17,994)
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում			(1,754)	(1,754)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,633,716**	**30,176**	**36,129**	**5,700,021**

2024թ.

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Գյուղատնտեսական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	9,429,773	32,646	75,131	9,537,550
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	7,051,609	83,169	4,500	7,139,278
Մարված ակտիվներ	(7,669,990)	(57,852)	(65,960)	(7,793,802)
- փոխանցում Փուլ 1	16,902	(11,353)	(5,549)	-
- փոխանցում Փուլ 2	(70,666)	89,838	(19,172)	-
- փոխանցում Փուլ 3	(101,818)	(2,515)	104,333	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	7,558	-	203	7,761
Զուտ վերականգնում տարվա ընթացքում	-	-	9,775	9,775
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,663,368**	**133,933**	**103,261**	**8,900,562**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Այլ վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,534,091	2,763	11,464	2,548,318
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	4,672,945	12,314	400	4,685,659
Մարված ակտիվներ	(1,595,115)	(3,867)	(13,134)	(1,612,116)
- փոխանցում Փուլ 2	(7,779)	7,779	-	-
- փոխանցում Փուլ 3	(13,074)	(2,763)	15,837	-
- Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	4,338	-	122	4,460
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,386)	(5,386)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,595,406**	**16,226**	**9,303**	**5,620,935**

Գյուղատնտեսական և այլ վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2025թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Գյուղատնտեսական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	130,283	8,987	44,247	183,517
- փոխանցում Փուլ 1	3,992	(3,026)	(966)	-
- փոխանցում Փուլ 2	(844)	5,798	(4,954)	-
- փոխանցում Փուլ 3	(1,466)	(2,686)	4,152	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(83,571)	(5,790)	55,043	(34,318)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	109,035	1,752	11,839	122,626
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում			(24,326)	(24,326)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**157,429**	**5,035**	**85,035**	**247,499**

	2025թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Այլ վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	81,458	1,437	9,156	92,051
- փոխանցում Փուլ 1	832	(832)	-	-
- փոխանցում Փուլ 2	(276)	4,144	(3,868)	-
- փոխանցում Փուլ 3	(309)	(486)	795	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(28,474)	(3,222)	11,993	(19,703)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	28,535	10,094	16,660	55,289
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում			(1,754)	(1,754)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**81,766**	**11,135**	**32,982**	**125,883**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Գյուղատնտեսական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	140,255	1,192	27,713	169,160
- փոխանցում Փուլ 1	4,648	(361)	(4,287)	-
- փոխանցում Փուլ 2	(1,030)	7,008	(5,978)	-
- փոխանցում Փուլ 3	(1,585)	(97)	1,682	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(92,501)	(3,645)	13,036	(83,110)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	80,496	4,890	2,306	87,692
Զուտ վերականգնում տարվա ընթացքում	-	-	9,775	9,775
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**130,283**	**8,987**	**44,247**	**183,517**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Այլ վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	38,839	385	8,409	47,633
- փոխանցում Փուլ 2	(110)	110	-	-
- փոխանցում Փուլ 3	(189)	(385)	574	-
- Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(16,244)	94	5,487	(10,663)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	59,162	1,233	72	60,467
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,386)	(5,386)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**81,458**	**1,437**	**9,156**	**92,051**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված 1,540,944 հազար դրամ համախառն գումարով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,539,274 հազար ՀՀ դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը հանդիսանում է ապահովություն վարկային կազմակերպություններից ստացված վարկերի և 5,979,089 հազար ՀՀ դրամ համախառն գումարով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,933,527 հազար ՀՀ դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը՝ ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերի դիմաց (տե՛ս Ծանոթագրություն 21):

Ինչպես նշված է Ծանոթագրություն 29-ում, 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է Ծանոթագրություն 32-ում:

Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է Ծանոթագրություն 28-ում:

17 Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր

	2025թ.	**2024թ.**
Մասնավոր ձեռնարկություններ	526,599	615,888
Ֆիզիկական անձինք	497,130	351,402
Անհատ ձեռնարկատերեր	889,566	714,287
	1,913,295	**1,681,577**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(40,418)	(25,993)
Ընդամենը ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ	**1,872,877**	**1,655,584**

Ֆինանսական վարձակալության գծով գծով զուտ ներդրումների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2025թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,679,447	2,130	-	1,681,577
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	804,580	-	-	804,580
Մարված ակտիվներ	(557,603)	(1,728)	(5,223)	(564,554)
- փոխանցում Փուլ 1	520	(520)	-	-
- փոխանցում Փուլ 2	(6,087)	6,087	-	-
- փոխանցում Փուլ 3	(22,114)	(1,610)	23,724	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(8,451)	(25)	168	(8,308)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,890,292**	**4,334**	**18,669**	**1,913,295**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,209,320	7,496	2,333	1,219,149
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	879,111	-	-	879,111
Մարված ակտիվներ	(412,180)	(8,465)	-	(420,645)
- փոխանցում Փուլ 2	(766)	3,099	(2,333)	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	3,962	-	-	3,962
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,679,447**	**2,130**	**-**	**1,681,577**

Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումների ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2025թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	25,934	59	-	25,993
- փոխանցում Փուլ 1	11	(11)	-	-
- փոխանցում Փուլ 2	(87)	87	-	-
- փոխանցում Փուլ 3	(333)	(48)	381	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(7,391)	193	10,029	2,831
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	11,594	-	-	11,594
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**29,728**	**280**	**10,410**	**40,418**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	18,061	814	1,322	20,197
- փոխանցում Փուլ 2	(11)	1,333	(1,322)	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(3,853)	(2,088)	-	(5,941)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	11,737	-	-	11,737
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**25,934**	**59**	**-**	**25,993**

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով համախառն դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետների հետևյալն է.

	2025թ.			
	Մինչև 1 տարի	**1 -5 տարի**	**5 տարուց ավել**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ	761,357	1,603,055	78,364	2,442,776
Չվաստակված ֆինանսական եկամուտ	(223,623)	(296,030)	(9,828)	(529,481)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը	**537,734**	**1,307,025**	**68,536**	**1,913,295**

				2024թ.
	Մինչև 1 տարի	1 -5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ	605,879	1,517,387	43,137	2,166,403
Չվաստակված ֆինանսական եկամուտ	(199,031)	(279,529)	(6,266)	(484,826)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը	**406,848**	**1,237,858**	**36,871**	**1,681,577**

Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Շինարարություն	470,926	432,228
Տրանսպորտ և կապ	196,856	236,187
Բուսաբուծություն	503,364	409,416
Անասնապահություն	70,482	71,179
Առևտուր	298,059	206,484
Արդյունաբերություն	289,614	220,707
Այլ	83,994	105,376
Ընդամենը ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը	**1,913,295**	**1,681,577**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի լիզինգառու (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որոնց ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

Ինչպես նշված է Ծանոթագրություն 29-ում, 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ում:

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է Ծանոթագրություն 32 և-ում:

18 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Շենքեր, շինություններ	Համակարգչային սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**775,485**	**277,875**	**113,749**	**153,415**	**39,540**	**151,861**	**1,511,925**
Ավելացում	4,295	19,927	11,950	22,685	-	9,995	68,852
Օտարում	-	(2,989)	**(1,262)**	**(12,428)**	**-**	**-**	(16,679)
Վերաչափում	-	-	-	-	-	102,902	102,902
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**779,780**	**294,813**	**124,437**	**163,672**	**39,540**	**264,758**	**1,667,000**
2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**779,780**	**294,813**	**124,437**	**163,672**	**39,540**	**264,758**	**1,667,000**
Ավելացում	-	15,691	3,490	28,510	5,250	27,259	80,200
Օտարում	-	(147)	-	(10,260)	-	-	(10,407)
Վերաչափում	-	-	-	-	-	(63,987)	(63,987)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**779,780**	**310,357**	**127,927**	**181,922**	**44,790**	**228,030**	**1,672,806**
Կուտակված մաշվածություն							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**48,181**	**199,895**	**69,593**	**130,756**	**31,046**	**105,577**	**585,048**
Տարվա ծախս	25,926	19,886	8,886	10,952	2,587	34,499	102,736
Օտարում	-	(2,989)	(1,164)	(12,428)	-	-	(16,581)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**74,107**	**216,792**	**77,315**	**129,280**	**33,633**	**140,076**	**671,203**
2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**74,107**	**216,792**	**77,315**	**129,280**	**33,633**	**140,076**	**671,203**
Տարվա ծախս	26,107	21,978	9,035	11,209	2,000	33,681	104,010
Օտարում	-	(147)	-	(10,260)	-	-	(10,407)
Վերաչափում	**-**	**-**	**-**	**-**	**-**	(39,217)	(39,217)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**100,214**	**238,623**	**86,350**	**130,229**	**35,633**	**134,540**	**725,589**
Հաշվեկշռային արժեք							
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**705,673**	**78,021**	**47,122**	**34,392**	**5,907**	**124,682**	**995,797**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**679,566**	**71,734**	**41,577**	**51,693**	**9,157**	**93,490**	**947,217**

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 321,796 հազար ՀՀ դրամ (2024թ. 318,595 հազար ՀՀ դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2025թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության սեփականություն հանդիսացող անշարժ գույքը գրավադրված է մեկ բանկից ստացված վարկի համար (2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկերից ստացված վարկերի համար) (տե՛ս Ծանոթագրություն 21):

Պայմանագրային պարտավորություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությանը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռք բերման գծով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

19 Բռնագանձված ակտիվներ

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ տարվա ընթացքում սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Անշարժ գույք	19,193	26,717
Այլ գույք	-	2,268
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**19,193**	**28,985**

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Կազմակերպության քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Կազմակերպությունը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

20 Այլ ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	56,852	66,857
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**56,852**	**66,857**
Ֆինանսական վարձակալության նպատակով ձեռք բերվելիք ակտիվների կանխավճարներ	22,119	26,033
Կանխավճարներ մատակարարներին	749	354
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	29,836	37,204
Արագամաշ առարկաներ	3,558	3,462
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**56,262**	**67,053**
Ընդամենը այլ ակտիվներ	**113,114**	**133,910**

Այլ ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում:

21 Վարկեր և փոխառություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	6,966,873	7,486,300
Վարկեր պետական ոչ առևտրային կազմակերպություններից	2,235,791	2,140,463
Վարկեր բանկերից	1,588,285	642,509
Վարկեր բանկերից հետգնման պայմանագրերով	-	752,122
Վարկեր վարկային կազմակերպություններից	1,513,615	1,600,068
Վարկային գծեր բանկերից	242,361	373
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	2,354,459	786,643
Ժամկետային փոխառություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններից	119,754	79,801
Ընդամենը վարկեր և փոխառություններ	**15,021,138**	**13,488,279**

Վարկեր ՀՀ կենտրոնական բանկից ներառում են վարկեր ստացված KfW զարգացման բանկի կողմից «ՀՀ գյուղատնտեսության Ոլորտի Աջակցման Ծրագրի», ՓՄՁ Աջակցման Ծրագրի վարկավորման շրջանակներում, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված վարկային ծրագրի շրջանակներում, Ասիական Զարգացման բանկի կողմից «Կանանց Ձեռներեցության Ոլորտի Աջակցման և Զարգացման Ծրագրի» շրջանակներում: Վարկերը տրվում են գյուղատնտեսական և մյուս տնտեսության ճյուղերում վարկեր տրամադրելու նպատակով և ապահովված են Կազմակերպության կողմից ենթավարկառուներին տրամադրված վարկերի ստացման իրավունքի զիջումով (տե՛ս Ծանոթագրություն 16):

ՀՀ պետական ոչ առևտրային կազմակերպություններից ստացված վարկերը ներառում են Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնից (նախկին Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան ծրագիր), «Գյուղական ֆինանսավորման կառույց-ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից ստացված փոխառություններ:

Վարկեր բանկերից ներկայացնում է BANK IM BISTUM ESSEN eG-ից և European Investment Bank-ից ներգրավված վարկը: Վարկը տրամադրվել է միկրո,փոքր, միջին և ցածր եկամտաբերությամբ ձեռնարկություններին վարկավորելու նպատակով:

Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներկայացնում է MIKROFINANZFONDS-ից և FS Impact Fund-ից ստացված վարկը:

2025թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ բանկից ստացված վարկերն ապահովված են Կազմակերպության անշարժ գույքի գրավադրմամբ (2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկերից ստացված վարկերը) (տե՛ս Ծանոթագրություն 18):

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2024թ.՝ նույնպես):

22 Թողարկված պարտքային արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Թողարկված պարտատոմսեր	1,224,260	1,224,087
Ընդամենը թողարկված պարտատոմսեր	**1,224,260**	**1,224,087**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
02/05/2024	ՀՀ դրամ	100,000	12,000	12.25	02/11/2026	1,200,000

Տարվա ընթացքում Կազմակերպությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2024թ.՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2024թ.՝ ոչինչ):

Կազմակերպության պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում:

23 Ստորադաս փոխառություն

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Միջազգային ֆինանսական կազմակերպությունից ստացված ստորադաս փոխառություն	888,975	888,441
Ընդամենը ստորադաս փոխառություն	**888,975**	**888,441**

2020թ. ընթացքում Կազմակերպությունը «Զարգացման Ֆրանսիական գործակալություն»-ից ստացել է 838,440 հազար դրամի ստորադաս փոխառություն, 12.75% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ժամկետը սահմանված է 15 հուլիսի 2030թ:

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկային համաձայնագիր, որը Կազմակերպության անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Կազմակերպության մնացած պարտավորությունների նկատմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2024թ.՝ ոչինչ):

24 Այլ պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Մատակարարներին վճարվելիք գումարներ	19,043	8,827
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	54,677	43,330
Այլ ֆինանսական պարտավորություններ	12,115	45,314
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**85,835**	**97,471**
Պարտավորություններ՝ անդամների հանդեպ կապիտալի համալրման հետ կապված	28,779	53,386
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	21,677	30,032
Վճարվելիք այլ հարկեր	50,870	-
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**101,326**	**83,418**
Ընդամենը այլ պարտավորություններ	**187,161**	**180,889**

25 Կանոնադրական կապիտալ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 1,525,623 հազ. դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,455,857 հազ. դրամ): Կազմակերպությունը ունի 11,279 անդամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,839 անդամ):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կանոնադրական կապիտալի 561,252 հազ. դրամը կամ 36.9%-ը կազմում է «Գյուղ Կորպ աջակցության» հիմնադրամի փայմասնակցությունը (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գյուղ Կորպ աջակցության» հիմնադրամի փայմասնակցությունը կազմում է 561,252 հազ. դրամը կամ 38.6%): Մյուս անդամների յուրանքաչյուրի փայմասնակցության չափը չի գերազանցում 1%-ը:

Կազմակերպության յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ ունեցած փայմասնակցության (փայերի քանակի) չափից:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված փայմասնակցություններ չեն եղել:

2025թ և 2024թ. փայատերերի ժողովի ընթացքում Կազմակերպությունը շահաբաժիններ չի հայտարարել:

26 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Կազմակերպությանը ներկայացվող դատական հայցերի առումով Կազմակերպության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա: Հետևաբար Կազմակերպության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Քանի դեռ Կազմակերպությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Պայմանագրային պարտավորություններ

Ֆինանսական վարձակալություն տրամադրելու նպատակով ձեռք բերվելիք գույքի գծով պայմանագրային պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 22,111 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 28,661 հազար ՀՀ դրամ):

27 Վարձակալություններ

Վարձակալության գծով պարտավորություններ

Կազմակերպությունը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի գրասենյակային տարածքների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Կազմակերպությունը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս Ծանոթագրություն 18):

Գույքի վարձակալությունները երկարաժամկետ են և ունեն մինչև 10 տարի վարձակալության ժամկետ: Վարձակալության վճարները ֆիքսված են:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Կազմակերպությունը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Կազմակերպությանն արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Կազմակերպությունը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

	2025թ.	2024թ.
Հունվարի 1-ի դրությամբ	135,188	50,810
Ավելացում	27,259	9,995
Վերաչափում	(27,111)	102,902
Տոկոսի կուտակում	15,130	14,411
Վճարումներ	(44,873)	(42,930)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**105,593**	**135,188**

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տողում:

Վարձակալության գծով պարտավորությունների վերաչափումները ներկայացված են նաև Ծանոթագրություն 33-ում:

2025թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 12.7% (2024թ.՝ 12.7%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չզեղջված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է Ծանոթագրություն 32.3-ում:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Կազմակերպությունն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով (Ծանոթագրություն 11):

28 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Կազմակերպության կապակցված կողմերն են՝ նրա փայատերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Կազմակերպությունը չունի վերջնական վերահսկող անձ:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

	2025թ.	2024թ.
	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
Հաճախորդներին տրված վարկեր		
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ,	390,926	296,727
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	134,768	180,841
Տարվա ընթացքում մարված վարկեր	(106,752)	(86,642)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	**418,942**	**390,926**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(6,709)	(6,368)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**412,233**	**384,558**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր		
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	6,235	7,565
Տարվա ընթացքում տրամադրված	800	-
Տարվա ընթացքում մարված	(2,068)	(1,330)
Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ	**4,967**	**6,235**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(73)	(94)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,894**	**6,141**
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	**20,618**	**18,198**
Տոկոսային եկամուտ ֆինանսական վարձակալության գծով	**754**	**905**
Պարտքային կորուստների գծով ծախս	**(320)**	**(1,709)**
Հասարակական կապերի գծով ծախսեր	**(9,200)**	**(11,400)**

Կապակցված անձանց տրամադրված վարկերը վճարման ենթակա են 1-12 տարվա ընթացքում և դրանց միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 2-31.9% (2024թ.՝ 2-31.9%): Ցածր տոկոսադրույքով վարկերը սկզբնապես ճանաչվել են կիրառելով շուկայական տոկոսադրույքներ և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են իրական արժեքով:

Կապակցված անձանց տրամադրված ֆինանսական վարձակալության գծով գումարները ենթակա են վճարման 3-6 տարվա ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 12-13.4% (2024թ.՝ 12-13.4%):

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	205,872	170,742
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**205,872**	**170,742**

29 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

29.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

	31 դեկտեմբերի 2025թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	290,762	-	290,762	290,762
Ներդրումային արժեթղթեր	-	1,246,420	-	1,246,420	1,231,120
Հաճախորդներին տրված վարկեր	-	15,858,384	-	15,858,384	15,925,438
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	-	1,872,877	-	1,872,877	1,872,877
Այլ ակտիվներ	-	56,852	-	56,852	56,852

	31 դեկտեմբերի 2025թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	-	15,021,138	-	15,021,138	15,021,138
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,233,468	-	1,233,468	1,224,260
Ստորադաս փոխառություն	-	888,975	-	888,975	888,975
Վարձակալության գծով պարտավորություններ	-	105,593	-	105,593	105,593
Այլ պարտավորություններ	-	85,835	-	85,835	85,835

	31 դեկտեմբերի 2024թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	256,328	-	256,328	256,328
Ներդրումային արժեթղթեր	-	600,749	-	600,749	600,749
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	727,336	-	727,336	727,336
Հաճախորդներին տրված վարկեր	-	14,157,023	-	14,157,023	14,245,929
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	-	1,655,584	-	1,655,584	1,655,584
Այլ ակտիվներ	-	66,857	-	66,857	66,857
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	-	13,488,279	-	13,488,279	13,488,279
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,246,860	-	1,246,860	1,224,087
Ստորադաս փոխառություն	-	888,441	-	888,441	888,441
Վարձակալության գծով պարտավորություններ	-	135,188	-	135,188	135,188
Այլ պարտավորություններ	-	97,471	-	97,471	97,471

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և

պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով:

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Վարկեր և փոխառություններ

Այս պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող գործիքների համար առաջարկվող դրույքաչափերը:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

29.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

31 դեկտեմբերի 2025թ.

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	(11,194)	-	(11,194)
Ընդամենը	**-**	**(11,194)**	**-**	**(11,194)**
Զուտ իրական արժեք	**-**	**(11,194)**	**-**	**(11,194)**

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Կազմակերպությունն օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Կազմկաերպության կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Կազմակերպության կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային սվոփ պայմանագրերից:

30 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Կազմակերպությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի

օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

				31 դեկտեմբերի 2024թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր բանկերից հետգնման պայմանագրերով (Ծանոթագրություն 15, 21)	752,122	-	752,122	(727,336)	-	24,786
Ընդամենը	**752,122**	**-**	**752,122**	**(727,336)**	**-**	**24,786**

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն արժեքները և դրանց զուտ արժեքները, որոնք ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ և բացահայտվել են վերոնշյալ աղյուսակներում, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ չափվում են ամորտիզացված արժեքով:

31 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների:

Կազմակերպության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 32.3-ում:

31 դեկտեմբերի 2025թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	290,762	-	290,762	-	-	-	290,762
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	29,998	29,998	1,201,122	-	1,201,122	1,231,120
Հաճախորդներին տրված վարկեր	398,059	5,138,281	5,536,340	9,755,783	633,315	10,389,098	15,925,438
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	39,586	486,789	526,375	1,279,414	67,088	1,346,502	1,872,877
Այլ ակտիվներ	56,852	-	56,852	-	-	-	56,852
	785,259	**5,655,068**	**6,440,327**	**12,236,319**	**700,403**	**12,936,722**	**19,377,049**
Պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	938,373	3,186,728	4,125,101	10,526,657	369,380	10,896,037	15,021,138
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,224,260	1,224,260	-	-	-	1,224,260
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	11,194	11,194	-	-	-	11,194
Ստորադաս փոխառություն	51,178	-	51,178	837,797	-	837,797	888,975
Վարձակալության գծով պարտավորություններ	2,873	31,474	34,347	57,986	13,260	71,246	105,593
Այլ պարտավորություններ	85,835	-	85,835	-	-	-	85,835
	1,078,259	**4,453,656**	**5,531,915**	**11,422,440**	**382,640**	**11,805,080**	**17,336,995**
Զուտ դիրք	**(293,000)**	**1,201,412**	**908,412**	**813,879**	**317,763**	**1,131,642**	**2,040,054**
Կուտակված ճեղքվածք	**(293,000)**	**908,412**		**1,722,291**	**2,040,054**		

31 դեկտեմբերի 2024թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	256,328	-	256,328	-	-	-	256,328
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	600,749	600,749	-	-	-	600,749
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	370,368	370,368	356,968	-	356,968	727,336
Հաճախորդներին տրված վարկեր	345,294	5,266,262	5,611,556	7,871,582	762,791	8,634,373	14,245,929
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	34,085	366,474	400,559	1,218,724	36,301	1,255,025	1,655,584
Այլ ակտիվներ	66,857	-	66,857	-	-	-	66,857
	702,564	**6,603,853**	**7,306,417**	**9,447,274**	**799,092**	**10,246,366**	**17,552,783**
Պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	910,893	3,544,757	4,455,650	7,547,724	1,484,905	9,032,629	13,488,279
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	24,087	24,087	1,200,000	-	1,200,000	1,224,087
Ստորադաս փոխառություն	50,454	-	50,454	279,329	558,658	837,987	888,441
Վարձակալության գծով պարտավորություններ	3,209	35,415	38,624	96,564	-	96,564	135,188
Այլ պարտավորություններ	97,471	-	97,471	-	-	-	97,471
	1,062,027	**3,604,259**	**4,666,286**	**9,123,617**	**2,043,563**	**11,167,180**	**15,833,466**
Զուտ դիրք	**(359,463)**	**2,999,594**	**2,640,131**	**323,657**	**(1,244,471)**	**(920,814)**	**1,719,317**
Կուտակված ճեղքվածք	**(359,463)**	**2,640,131**		**2,963,788**	**1,719,317**		

32 Ռիսկի կառավարում

Կազմակերպության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Կազմակերպությունն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Կազմակերպության շահութաբերության կայունության ապահովման գործում, և Կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր

հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Կազմակերպությունը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Կազմակերպության կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Տնօրինության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Կազմակերպության Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Գլխավոր գործադիր տնօրեն

Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի իրականացման և վերահսկման համար: Պատասխանատու է Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Պատասխանատվություն է կրում նաև Կազմակերպության իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի կառավարման համար:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում վարկերի տրամադրման գործընթացում ռիսկերի կառավարման համար:

Ներքին աուդիտ

Կազմակերպության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը Ընդհանուր ժողովի կողմից հաստատված աշխատանքային պլանին համապատասխան աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, ով ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Կազմակերպության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է խորհրդին:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը իրականացվում է հաշվի առնելով Կազմակերպության գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Կազմակերպությունը, ինչպես նաև Կազմակերպության համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Կազմակերպությունը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Կազմակերպության ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես ակնկալվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Կազմակերպությունը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Կազմակերպության կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Կազմակերպության գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Կազմակերպությունը, ինչպես նաև Կազմակերպության համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Կազմակերպությունը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Կազմակերպությունը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Կազմակերպության բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Կազմակերպության բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Կազմակերպության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Կազմակերպության քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը:

32.1 Պարտքային ռիսկ

Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Կազմակերպությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Կազմակերպության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Կազմակերպությունը այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Կազմակերպության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Կազմակերպության ՌԿՎ պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Կազմակերպության ղեկավարությանը:

32.1.1 Պարտքային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Կազմակերպության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված հանձնառությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վարկանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 32.1.2-ում:

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2025թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	290,762	-	-	290,762
Զուտ հաշվեկշռային արժեք	**290,762**	**-**	**-**	**290,762**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Բարձր	1,231,120	-	-	1,231,120
Զուտ հաշվեկշռային արժեք	**1,231,120**	**-**	**-**	**1,231,120**

Ներքին վարկանիշեր

	31 դեկտեմբերի 2025թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Գյուղատնտեսական վարկեր				
Բարձր	10,331,269	-	-	10,331,269
Ստանդարտ	2,096	95,571	-	97,667
Ցածր	-	8,230	-	8,230
Չաշխատող	-	-	161,633	161,633
Համախառն հաշվեկշռային արժեք	**10,333,365**	**103,801**	**161,633**	**10,598,799**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(157,429)	(5,035)	(85,035)	(247,499)
Զուտ հաշվեկշռային արժեք	**10,175,936**	**98,766**	**76,598**	**10,351,300**
Այլ վարկեր				
Բարձր	5,623,805	-	-	5,623,805
Ստանդարտ	9,911	22,900	-	32,811
Ցածր	-	7,276	-	7,276
Չաշխատող	-	-	36,129	36,129
Համախառն հաշվեկշռային արժեք	**5,633,716**	**30,176**	**36,129**	**5,700,021**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(81,766)	(11,135)	(32,982)	(125,883)
Զուտ հաշվեկշռային արժեք	**5,551,950**	**19,041**	**3,147**	**5,574,138**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
Բարձր	1,890,292	-	-	1,890,292
Ստանդարտ	-	4,334	-	4,334
Չաշխատող	-	-	18,669	18,669
Համախառն հաշվեկշռային արժեք	**1,890,292**	**4,334**	**18,669**	**1,913,295**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(29,728)	(280)	(10,410)	(40,418)
Զուտ հաշվեկշռային արժեք	**1,860,564**	**4,054**	**8,259**	**1,872,877**
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	56,852	-	-	56,852
Զուտ հաշվեկշռային արժեք	**56,852**	**-**	**-**	**56,852**

Ներքին վարկանիշեր

	31 դեկտեմբերի 2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	256,328	-	-	256,328
Զուտ հաշվեկշռային արժեք	**256,328**	**-**	**-**	**256,328**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Բարձր	600,749	-	-	600,749
Զուտ հաշվեկշռային արժեք	**600,749**	**-**	**-**	**600,749**
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Բարձր	727,336	-	-	727,336
Զուտ հաշվեկշռային արժեք	**727,336**	**-**	**-**	**727,336**
Գյուղատնտեսական վարկեր				
Բարձր	8,658,826	-	-	8,658,826
Ստանդարտ	4,542	128,061		132,603
Ցածր	-	5,872		5,872
Չաշխատող	-	-	103,261	103,261
Համախառն հաշվեկշռային արժեք	**8,663,368**	**133,933**	**103,261**	**8,900,562**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(130,283)	(8,987)	(44,247)	(183,517)
Զուտ հաշվեկշռային արժեք	**8,533,085**	**124,946**	**59,014**	**8,717,045**
Այլ վարկեր				
Բարձր	5,590,456	-	-	5,590,456
Ստանդարտ	4,950	16,226	-	21,176
Չաշխատող	-	-	9,303	9,303
Համախառն հաշվեկշռային արժեք	**5,595,406**	**16,226**	**9,303**	**5,620,935**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(81,458)	(1,437)	(9,156)	(92,051)
Զուտ հաշվեկշռային արժեք	**5,513,948**	**14,789**	**147**	**5,528,884**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
Բարձր	1,679,447	-	-	1,679,447
Ստանդարտ	-	2,130	-	2,130
Չաշխատող	-	-	-	-
Համախառն հաշվեկշռային արժեք	**1,679,447**	**2,130**	**-**	**1,681,577**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(25,934)	(59)	-	(25,993)
Զուտ հաշվեկշռային արժեք	**1,653,513**	**2,071**	**-**	**1,655,584**

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	66,857	-	-	66,857
Զուտ հաշվեկշռային արժեք	**66,857**	**-**	**-**	**66,857**

32.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Կազմակերպության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ)):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Կազմակերպությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Կազմակերպությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Կազմակերպությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Կազմակերպությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Կազմակերպությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են

փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան):Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Կազմակերպության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Կազմակերպությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

		2025թ.	2024թ
	Վարկանիշ	12-ամսյա PD –ի միջակայք	12-ամսյա PD –ի միջակայք
Գյուղատնտեսական վարկեր	Բարձր	1.02-2.27%	1.25-2.32%
	Ստանդարտ	1.02-10.08%	1.25-9.85%
	Ոչ ստանդարտ	41.24-50.96%	60.37-61.02%
	Չաշխատող	100%	100%
Այլ վարկեր	Բարձր	1.02-2.27%	1.25-2.32%
	Ստանդարտ	1.02-8.29%	2.32-9.85%
	Ոչ ստանդարտ	50.96-72.64%	-
	Չաշխատող	100%	100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Կազմակերպության գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

		2025թ.	2024թ.
	Վարկանիշ	12-ամսյա PD	12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.03%	0.001-0.023%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.05-5.63%	0.040-3.137%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	10.08%	5.403-27.625%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Կազմակերպությունը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Կազմակերպությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի մեծությունը
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Պարտազանցման սահմանում և «առողջացում»

Կազմակերպությունը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների նպատակով բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են, բացառությամբ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի, փոխառությունների և պարտքային ներդրումային արժեթղթերի, որոնց պայմանագրային վճարումները 30 օր ժամկետանց են:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Կազմակերպությունը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Կազմակերպությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն պարտազանցման ենթարկված է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,

- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերածևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- Կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Կազմակերպության քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում պարտազանցման սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Կազմակերպության՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Կազմակերպությունը վերանայված կամ վերաֆինանսավորված վարկերը, որը պայմանավորված է վարկառուի վատ ֆինանսական վիճակով, դիտարկում է դեֆոլտի ենթարկված:

Կազմակերպությունը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ կանխատեսվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են պարտազանցումից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի

վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Կազմակերպության պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է Ծանոթագրություն 4.6(գ)-ի գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Կազմակերպությունը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Կազմակերպությունը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները:Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Կազմակերպությունն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- Սպառողական գների ինդեկս,
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ,
- Տնտեսական ակտիվության ցուցանիշ,
- ԱՄՆ դոլարի փոխարժեք
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

32.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

32.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- Գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները,
- Շարժական գույքը՝ բեռնատար և մարդատար ավտոմեքենաներ, գյուղատնտեսական տեխնիկա, սարքավորումներ:
- ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի դեպքում՝ երաշխիքներ:

Վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Կազմակերպությունը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ և երաշխավորություններ է պահանջում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Անշարժ գույք	5,206,811	4,705,334
Երաշխավորություններ	9,119,249	8,426,041
Շարժական գույք և այլ հիմնական միջոցներ	546,996	442,731
Գրավով չապահովված վարկեր	1,425,764	947,391
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**16,298,820**	**14,521,497**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի համախառն հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

2025 և 2024թթ.-ի դեկեմբերի 31-ի դրությամբ ապահովվածություն չունեցող վարկերը տրամադրված են երրորդ անձանց երաշխավորությամբ:

32.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

32.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Կազմակերպության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2025թ.		2024թ.	
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսաբեր ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները	-	6.88	-	7.43
Հաճախորդներին տրված վարկեր	14.22	11.34	14.82	13.68
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	14.51	16.2	14.68	15.06
Տոկոսակիր պարտավորություններ				
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	8.1	-	8.2	-
Վարկեր պետական ոչ առևտրային կազմակերպություններից	5.5	4.2	5.3	4.1
Վարկեր բանկերից	8.9	7.4	13.7	6.8
Վարկեր բանկերից հետգնման պայմանագրերով	-	-	8.8	-
Վարկեր վարկային կազմակերպություններից	9.7	-	9.6	-
Վարկային գծեր բանկերից	13.6	-	12.9	-
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	-	7.8	-	7.8
Ժամկետային փոխառություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններից	7.1	-	6.9	-
Ստորադաս փոխառություն	13.2	-	13.16	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	12.25	-	12.25	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար/եվրո	+5	24,040	+5	59,191
ԱՄՆ դոլար/եվրո	(5)	(24,040)	(5)	(59,191)

Կազմակերպության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	31 դեկտեմբերի 2025թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	216,702	73,715	345	290,762
Ներդրումային արժեթղթեր	-	1,231,120	-	1,231,120
Հաճախորդներին տրված վարկեր	13,325,575	2,599,863	-	15,925,438
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	1,512,924	359,953	-	1,872,877
Այլ ակտիվներ	56,063	789	-	56,852
Ընդամենը	**15,111,264**	**4,265,440**	**345**	**19,377,049**
Պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	11,238,266	3,782,872	-	15,021,138
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,224,260	-	-	1,224,260
Ստորադաս փոխառություններ	888,975	-	-	888,975
Վարձակալության գծով պարտավորություններ	105,593	-	-	105,593
Այլ պարտավորություններ	84,068	1,767	-	85,835
Ընդամենը	**13,541,162**	**3,784,639**	**-**	**17,325,801**
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	**800,856**	**(812,050)**	**-**	**(11,194)**
Զուտ դիրք 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,370,958**	**(331,249)**	**345**	**2,040,054**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**14,879,039**	**2,673,327**	**417**	**17,552,783**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**14,343,962**	**1,489,504**	**-**	**15,833,466**
Զուտ դիրք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**535,077**	**1,183,823**	**417**	**1,719,317**

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն: Ոչ փոխարկելի արժույթն է ռուսական ռուբլին:

32.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Կազմակերպությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Կազմակերպությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Կազմակերպության հետ մասնավորապես:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս Ծանոթագրություն 31-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

31 դեկտեմբերի 2025թ

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	954,795	3,931,878	11,928,103	392,676	17,207,452	15,021,138
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,347,000	-	-	1,347,000	1,224,260
Ստորադաս փոխառություն	53,890	53,011	1,213,131	-	1,320,032	888,975
Վարձակալության գծով պարտավորություններ	3,442	37,864	73,640	22,400	137,346	105,593
Այլ պարտավորություններ	116,667	-	-	-	116,667	85,835
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**1,128,794**	**5,369,753**	**13,214,874**	**415,076**	**20,128,497**	**17,325,801**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	-	800,856	-	-	800,856	
Արտահոսք	-	(812,050)	-	-	(812,050)	(11,194)

	31 դեկտեմբերի 2024թ					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	919,831	4,183,219	8,835,366	1,553,417	15,491,833	13,488,279
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	147,000	1,347,000	-	1,494,000	1,224,087
Ստորադաս փոխառություն	53,890	53,011	707,670	612,362	1,426,933	888,441
Վարձակալության գծով պարտավորություններ	3,820	42,020	121,280	-	167,120	135,188
Այլ պարտավորություններ	97,471	-	-	-	97,471	97,471
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**1,075,012**	**4,425,250**	**11,011,316**	**2,165,779**	**18,677,357**	**15,833,466**

32.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Կազմակերպության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Կազմակերպության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Կազմակերպության Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Կազմակերպության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Կազմակերպության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

33 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Կազմակերպության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Վարկեր և փոխառություններ	Թողարկված արժեթղթեր	Վարձակալության գծով պարտավորություններ	Ստորադաս փոխառություններ	Պարտավորություններ անդամների հանդեպ՝ կապիտալի համալրման հետ կապված	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**12,094,174**	**-**	**50,810**	**887,997**	**70,752**	**13,103,733**
Մուտքեր	14,701,477	1,200,000	-	-	68,129	15,969,606
Ելքեր	(13,274,462)	-	(42,930)	-	-	(13,317,392)
Կապիտալի համալրում	-	-	-	-	(85,495)	(85,495)
Վարձակալության գծով պարտավորությունների վերաչափում	-	-	112,897	-	-	112,897
Փոխարժեքային տարբերություն	(26,434)	-	-	-	-	(26,434)
Հաշվեգրված տոկոսներ	(6,476)	24,087	14,411	444	-	32,466
Հաշվեկշռային արժեք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,488,279**	**1,224,087**	**135,188**	**888,441**	**53,386**	**15,789,381**
Մուտքեր	16,138,310	-	-	-	45,159	16,183,469
Ելքեր	(14,350,466)	-	(44,873)	-	-	(14,395,339)
Կապիտալի համալրում	-	-	-	-	(69,766)	(69,766)
Վարձակալության գծով պարտավորությունների զուտ վերաչափում	-	-	148	-	-	148
Փոխարժեքային տարբերություն	(95,608)	-	-	-	-	(95,608)
Հաշվեգրված տոկոսներ	(159,377)	173	15,130	534	-	(143,540)
Հաշվեկշռային արժեք 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**15,021,138**	**1,224,260**	**105,593**	**888,975**	**28,779**	**17,268,745**

Կազմակերպությունը դասակարգում է վճարված տոկոսները (բացառությամբ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունների) որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

34 Կապիտալի համարժեքություն

Կազմակերպությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Կազմակերպության կապիտալը վերահսկվում է օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Կազմակերպության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Կազմակերպության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Կազմակերպությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու համար:

Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավող (թողարկող) վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը:

Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է սուբորդինացված փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային ռիսկի գնահատման:

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտի չենթարկված	
	31 դեկտեմբերի 2025թ.	**31 դեկտեմբերի 2024թ.**
Հիմնական կապիտալ	2,909,144	2,259,603
Լրացուցիչ կապիտալ	670,752	838,440
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	**3,579,896**	**3,398,043**
Ռիսկով կշռված ակտիվներ	18,639,583	16,742,602
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**19.2%**	**20.3%**

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կանխիկ ձևով արտարժույթի առուվաճառք իրականացնող, ինչպես նաև արժեթուղթ թողարկող վարկային կազմակերպությունների համար սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

35 Սեգմենտային հաշվետվություններ

Կազմակերպության գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամուտը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Կազմակերպությունը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Կազմակերպության ակտիվները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի փայատերերին և խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի՝ (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 4.624.6-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ Ծանոթագրություն 33.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՄ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Կազմակերպության՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Կազմակերպության՝ ՖՀՄՄ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՄ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Կազմակերպության՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Կազմակերպության փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Կազմակերպության կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Կազմակերպության ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:

- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Կազմակերպության համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Կազմակերպության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք

աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Նարինե Աճեմյան է:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նարինե Աճեմյան
Աուդիտի պատասխանատու

25 ապրիլի, 2025թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	5	2,163,814	1,781,193
Այլ տոկոսային եկամուտ	5	209,595	100,655
Տոկոսային ծախսեր	5	(1,094,495)	(887,036)
Զուտ տոկոսային եկամուտներ		**1,278,914**	**994,812**
Զուտ առևտրային վնաս	6	(11,143)	(13,576)
Եկամուտներ ստացված շնորհներից	7	789	941
Ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ (վնաս)		(16,006)	36,375
Պարտքային կորուստների գծով (ծախս) ծախսի հակադարձում	9	(60,182)	43,592
Այլ գործառնական եկամուտ	8	24,677	27,040
Զուտ գործառնական եկամուտ		**1,217,049**	**1,089,184**
Անձնակազմի գծով ծախսեր	10	(614,636)	(560,996)
Այլ ծախսեր	11	(365,678)	(308,865)
Շահույթ մինչև հարկումը		**236,735**	**219,323**
Շահութահարկի գծով ծախս	12	(55,272)	(34,570)
Տարվա շահույթ		**181,463**	**184,753**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**181,463**	**184,753**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 76-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	256,328	174,018
Հակադարձ հետգնման պայմանագրեր	14	-	284,168
Ներդրումային արժեթղթեր	15	600,749	86,671
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	15	727,336	895,121
Հաճախորդներին տրված վարկեր	16	14,245,929	11,869,075
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	17	1,655,584	1,198,952
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	18	995,797	926,877
Բռնագանձված ակտիվներ	19	28,985	30,261
Շահութահարկի գծով կանխավճար		-	9,357
Այլ ակտիվներ	20	133,910	176,286
Ընդամենը՝ ակտիվներ		**18,644,618**	**15,650,786**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	21	13,488,279	12,094,174
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	1,224,087	-
Ստորադաս փոխառություն	23	888,441	887,997
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	24	-	789
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		26,036	-
Հետաձգված հարկային պարտավորություն	12	11,814	4,892
Վարձակալության գծով պարտավորություններ	28	135,188	50,810
Այլ պարտավորություններ	25	180,889	189,198
Ընդամենը՝ պարտավորություններ		**15,954,734**	**13,227,860**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	26	1,455,857	1,370,362
Չբաշխված շահույթ		1,234,027	1,052,564
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**2,689,884**	**2,422,926**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**18,644,618**	**15,650,786**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ-ի ապրիլի 25-ին:

Արմեն Գաբրիելյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Հրաչուհի Հովհաննիսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 76-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,370,362**	**1,052,564**	**2,422,926**
Կանոնադրական կապիտալի ավելացում	85,495	-	85,495
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**85,495**	**-**	**85,495**
Տարվա շահույթ	-	181,463	181,463
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**181,463**	**181,463**
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,455,857**	**1,234,027**	**2,689,884**
Հաշվեկշիռը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,293,236**	**867,811**	**2,161,047**
Կանոնադրական կապիտալի ավելացում	77,126	-	77,126
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**77,126**	**-**	**77,126**
Տարվա շահույթ	-	184,753	184,753
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**184,753**	**184,753**
Հաշվեկշիռը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,370,362**	**1,052,564**	**2,422,926**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 76-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	2,340,326	1,815,904
Վճարված տոկոսներ	(1,062,029)	(889,414)
Զուտ վճարներ արտարժույթով գործառնություններից	(11,143)	(20,881)
Այլ ստացված եկամուտ	23,420	28,050
Աշխատակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ	(878,248)	(765,407)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**412,326**	**168,252**
(Ավելացում) նվազում գործառնական ակտիվներում		
Հակադարձ հետգնման պայմանագրեր	277,020	(271,316)
Հաճախորդներին տրված վարկեր	(2,412,642)	344,651
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	(467,863)	(704,214)
Այլ ակտիվներ	42,415	(55,809)
Ավելացում (նվազում) գործառնական պարտավորություններում		
Այլ պարտավորություններ	8,807	34,514
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը	**(2,139,937)**	**(483,922)**
Վճարված շահութահարկ	(12,957)	(51,991)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(2,152,894)**	**(535,913)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների առք	(58,857)	(9,814)
Հիմնական միջոցների վաճառք	3,096	-
Արժեթղթերի ձեռքբերում	(356,375)	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(412,136)**	**(9,814)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ	14,701,477	15,189,791
Մարված վարկեր և փոխառություններ	(13,274,462)	(14,949,115)
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,200,000	-
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրման համար	68,129	83,123
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(42,930)	(38,190)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**2,652,214**	**285,609**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	**87,184**	**(260,118)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	174,018	427,371
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(4,874)	6,765
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (Ծանոթագրություն 13)	**256,328**	**174,018**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 76-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի գյուղատնտեսական վարկերի տրամադրումն է անհատներին և իրավաբանական անձանց: Վարկային կազմակերպությունը վարկեր է տրամադրում և այլ ֆինանսական ծառայություններ է մատուցում առավելապես ՀՀ մարզերում՝ գյուղացիական տնտեսություններին:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՄ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ 2007թ-ին և գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Կազմակերպությունը գրանցվել է 2007թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N20 արտոնագրային համարով:

Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է ք. Երևանում, իսկ թվով 10 մասնաճյուղերը գտնվում են ՀՀ տարբեր մարզերում: Կազմակերպության իրավաբանական հասցեն է ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16:

Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ.-ին կազմել է՝ 92 մարդ (2023թ.՝ 91):

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Կազմակերպությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Կազմակերպության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժութային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Կազմակերպության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

2.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Կազմակերպությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ըստ իրացվելիության՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվության համապատասխան հոդվածային տողի ակտիվների/պարտավորությունների մեծ մասը ստանալու/մարելու Կազմակերպության մտադրության և ակնկալվող կարողության վրա: Հաշվետու ամսաթվից (ընթացիկ) հետո 12 ամսվա և հաշվետու ամսաթվից (ոչ ընթացիկ) հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում ակտիվների/պարտավորությունների ստացման կամ մարման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Կազմակերպությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- *«Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում»* (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- *«Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ»* (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- *«Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Կազմակերպության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Կազմակերպության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից և ներկայացված են ստորև.

- *«Փոխանակելիության բացակայություն»* (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»*
- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

Ղեկավարության կանխատեսմամբ՝ բացառությամբ ստորև նշված ստանդարտների, որոնք գտնվում են գնահատման գործընթացում, այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ)

2024թ. մայիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՄԽ) հրապարակել է փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման վերաբերյալ, որոնք փոփոխել են ՖՀՄՄ 9-ը և ՖՀՄՄ 7-ը:

Պահանջները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման հնարավորությամբ և վերաբերում են՝

- էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարմանը և
- ֆինանսական ակտիվների՝ ներառյալ կայուն զարգացման հետ կապված ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերի գնահատմանը:

Կազմակերպությունը գտնվում է նոր փոփոխությունների ազդեցության գնահատման գործընթացում:

ՖՀՄՄ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

ՖՀՄՄ 18-ը փոխարինում է ՀՀՄՄ 1-ին՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ուժի մեջ է մտնում 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններից հետո: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

Ընկերությունները պետք է դասակարգեն բոլոր եկամուտներն ու ծախսերը շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում հինգ՝ մասնավորապես՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, դադարեցված գործառնությունների և շահութահարկի կատեգորիաներով: Ընկերությունները պետք է ներկայացնեն նաև գործառնական շահույթի նոր ենթագումար: Ընկերությունների զուտ շահույթը չի փոխվի:

Ղեկավարության կողմից որոշված կատարողականի ցուցանիշները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից մեկ ծանոթագրությունում:

Տրամադրում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վերաբերյալ:

Բացի այդ, բոլոր կազմակերպությունները անուղղակի մեթոդով գործառնական դրամական միջոցների հոսքերը ներկայացնելիս պետք է օգտագործեն գործառնական շահույթի ենթագումարը՝ որպես դրամական միջոցների հոսքերի հաշվետվության ելակետ:

Կազմակերպությունը շարունակում է գնահատել նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես՝ կապված Կազմակերպության շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունների կառուցվածքի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունների և Ղեկավարության կողմից որոշված կատարողականի ցուցանիշներ համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ: Կազմակերպությունը նաև գնահատում է ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա ազդեցությունը, ներառյալ որպես «այլ» դասակարգված հոդվածների մասով:

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով: Ֆինանսական գործիքները ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով, ինչպես նաև իրական արժեքով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Կազմակերպությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական

և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ուղղակիորեն շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Յուրաքանչյուր արտարժութային գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90

4.4 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Կազմակերպությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ) - ում:

Այլ տոկոսային եկամուտ

Այլ տոկոսային եկամտի հաշվարկում անվանական տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն արժեքի նկատմամբ գծային հիմունքով:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՄ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՄ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Կազմակերպությունը նախ կիրառում է ՖՀՄՄ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՄ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՄ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

4.5 Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն

հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում Կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.6 Ֆինանսական գործիքներ

ա) Ճանաչում և սկզբնական չափում

Ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Կազմակերպության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

բ) Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ

վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Կազմակերպությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է՝

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Կազմակերպության ղեկավարությանը,
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Կազմակերպությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Կազմակերպությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Կազմակերպությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Կազմակերպության պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և

- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Կազմակերպությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով:

գ) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տե՛ս նաև Ծանոթագրություն 4.6(գ)) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակայինօգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Կազմակերպության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Կազմակերպությունը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոփով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Կազմակերպությունը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Կազմակերպությունը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

դ) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Կազմակերպությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ)), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Կազմակերպությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս Ծանոթագրություն 4.6(զ)), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ե) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Կազմակերպության առևտրային գործունեության ընթացքում:

զ) Արժեզրկում

Կազմակերպությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- փոխատվության հանձնառություններ

- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Կազմակերպությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Կազմակերպությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է Ծանոթագրություն 33.1.2-ում:

Վերոնշյալի հիման վրա՝ Կազմակերպությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Կազմակերպությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Կազմակերպությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Կազմակերպությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են Ծանոթագրություն 33.1.2-ում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ Ծանոթագրություն 4.6(գ)), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասկան ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Կազմակերպության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,

- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Կազմակերպությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,
- փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Կազմակերպությունը գնահատում է փոխատվության հանձնառության ամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Կազմակերպությունը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին՝ Կազմակերպությունը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
  - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Կազմակերպությունը պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Այդ նպատակով Կազմակերպությունը գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները՝ հիմնվելով ակնկալվող վճարումների ներկա արժեքի վրա՝ պարտատիրոջ կրած պարտքային կորուստները փոխհատուցելու համար: Նվազեցումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Կազմակերպությունը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Կազմակերպության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.6.1 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են բանկերում հաշիվներից և այլ կարճաժամկետ պահանջներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6.2 Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6.3 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում շահույթում կամ վնասում՝

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և հակադարձում
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս:

4.6.4 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և

ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.7 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Կազմակերպությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Կազմակերպությանը,
- Կազմակերպությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Կազմակերպությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Կազմակերպությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Կազմակերպությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Կազմակերպությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Կազմակերպության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Կազմակերպությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Կազմակերպությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Կազմակերպությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Կազմակերպության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Կազմակերպությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Կազմակերպությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Կազմակերպությունը որպես վարձատու

Որպես վարձատու՝ Կազմակերպությունը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

Վարձակալության մեկնարկն այն ամսաթիվն է, երբ վարձակալն իրավունք ունի օգտվել վարձակալած ակտիվը օգտագործելու իր իրավունքից: Դա վարձակալության սկզբնական ճանաչման ամսաթիվն է: Ֆինանսական վարձակալության մեկնարկից հետո Կազմակերպությունը ճանաչում է վարձակալության զուտ ներդրումը, որը ստացվելիք նվազագույն վարձավճարն է, որը զեղչվում է վարձակալության ենթադրվող տոկոսադրույքով: Համախառն ներդրման և ներկայիս արժեքի միջև տարբերությունը գրանցվում է որպես ֆինանսական վարձակալության չվաստակված եկամուտ:

Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են զուտ ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ:

Երբ վարձակալման պայմանագրերի դադարեցման արդյունքում Կազմակերպության տիրապետության տակ է անցնում վարձակալության առարկան, այդ ակտիվները չափվում են իրացման զուտ արժեքի և պատմական ամորտիզացված արժեքների նվազագույնով:

4.8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.33
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-10	10-100
Տնտեսական գույք	5-8	12.5-20
Փոխադրամիջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.9 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ մինչև 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ: (Համակարգչային ծրագրերի մշակման գծով ծախսերը (օրինակ՝ դիզայն և նոր կամ նորացված ծրագրի թեսթավորում) ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, երբ Կազմակերպությունը կարողանում է ցուցադրել ոչ նյութական ակտիվի ստեղծման տեխնիկական հնարավորությունն այնպես, որ այն հնարավոր լինի վաճառքի կամ օգտագործման, իր մտադրությունը ստեղծելու ոչ նյութական ակտիվ և այն օգտագործելու կամ վաճառելու, իր ունակությունը օգտագործելու կամ վաճառելու ոչ նյութական ակտիվը, այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու հնարավոր տնտեսական օգուտներ, աշխատանքներն ավարտելու բավարար միջոցների առկայություն և դրանց հստակ գնահատում: Ծրագրային ապահովման գծով այլ ծախսերը ճանաչվում են դրանց ծագման պահին:)

4.10 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.11 Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Եկամուտներին վերաբերվող շնորհները պետք է ճանաչվեն շահույթում այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

4.12 Վարկեր, փոխառություններ և թողարկված պարտքային արժեթղթեր

Վարկերը և փոխառությունները, որոնք ներառում են ՀՀ կենտրոնական բանկից և այլ կազմակերպություններից ստացված վարկերը և փոխառությունները, և թողարկված պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.13 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալը բաղկացած է փայատերերի բաժնեմասերից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

4.14 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Կազմակերպության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4.14.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Կազմակերպությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս Ծանոթագրություն 4.6(բ)):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբերող չափանիշների սահմանում

Կազմակերպությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

4.14.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս Ծանոթագրություն 30):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Կազմակերպությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս Ծանոթագրություն 33.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս Ծանոթագրություն 4.6(զ)):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս Ծանոթագրություն 27:

5 Զուտ տոկոսային եկամուտ և ծախս

	2024թ.	2023թ.
Արդյունավետ տոկոադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	2,065,967	1,690,398
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,229	8,207
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	77,642	73,645
Հակադարձ հետգնման պայմանագրեր	10,976	8,943
Ընդամենը արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	**2,163,814**	**1,781,193**
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	209,595	100,655
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտ	**2,373,409**	**1,881,848**

Վարկեր և փոխառություններ	825,471	717,963
Վարձակալության գծով պարտավորություններ	14,411	4,273
Ստորադաս փոխառություն	109,988	108,331
Տոկոսային ծախսեր հետգնման պայմանագրերից	47,039	56,469
Տոկոսային ծախսեր թողարկված տոկոսային արժեթղթերից	97,586	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախս	**1,094,495**	**887,036**
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	**1,278,914**	**994,812**

6 Զուտ առևտրային վնաս

	2024թ.	2023թ.
Արտարժույթի առք ու վաճառքից առաջացած զուտ վնաս	(6,196)	(11,417)
Ածանցյալ գործիքներից զուտ վնաս	(4,947)	(2,159)
Ընդամենը զուտ առևտրային վնաս	**(11,143)**	**(13,576)**

7 Եկամուտ ստացված շնորհներից

	2024թ.	2023թ.
Ակտիվներին վերաբերող շնորհներ (Ծանոթագրություն 24)	789	941
Ընդամենը եկամուտ շնորհներից	**789**	**941**

8 Այլ եկամուտներ

	2024թ.	2023թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	9,792	17,057
Այլ միջնորդավճարներ ապահովագրական ընկերություններից	3,397	-
Հիմնական միջոցների վաճառքից զուտ օգուտներ	1,257	-
Այլ եկամուտներ	10,231	9,983
Ընդամենը այլ եկամուտներ	**24,677**	**27,040**

9 Պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)

					2024թ.
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր	16	30,913	2,572	20,901	54,386
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	17	7,884	(2,088)	-	5,796
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)		**38,797**	**484**	**20,901**	**60,182**

					2023թ.
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր	16	(58,229)	(1,749)	4,693	(55,285)
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	17	9,557	814	1,322	11,693
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)		**(48,672)**	**(935)**	**6,015**	**(43,592)**

10 Անձնակազմի գծով ծախսեր

	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ, ներառյալ դրանց վերաբերող հարկերը	611,557	558,251
Անձնակազմի վերապատրաստման ծախսեր	3,079	2,745
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**614,636**	**560,996**

11 Այլ ծախսեր

	2024թ.	2023թ.
Մաշվածություն և ամորտիզացիա	100,995	91,885
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	48,176	35,121
Տնտեսական ապրանքներ և կոմունալ ծառայություններ	22,919	19,308
Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսեր	9,552	10,089
Վարկերի տրամադրման գծով ծախսեր	20,095	18,321
Համակարգչային ծրագրերի գծով ծախսեր	16,663	12,106
Ապահովագրություն	13,977	19,701
Բանկային ծառայությունների վճարներ	3,299	3,479
Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր	10,962	10,639
Կապի և տեղեկատվության ծառայություններ	11,686	8,880
Գործուղման ծախսեր	13,866	10,881
Մասնագիտական ծառայություններ	10,520	8,400
Պահառության գծով ծախսեր	8,784	-
Շահութահարկից բացի այլ հարկեր և տուրքեր	12,395	12,607
Գովազդի և հասարակական կապերի գծով ծախսեր	27,639	13,318
Գրասենյակային ծախսեր	3,157	2,967
Անդամավճարներ	4,177	3,839
Ներկայացուցչական ծախսեր	7,813	6,590
Այլ ակտիվների իրացումից վնասներ	-	124
Այլ	19,003	20,610
Ընդամենը այլ ծախսեր	**365,678**	**308,865**

12 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	46,681	19,000
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	1,669	-
Հետաձգված հարկի գծով ծախս	6,922	15,570
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**55,272**	**34,570**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2023թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	236,735		219,323	
Շահութահարկ	42,612	18	39,478	18
Չնվազեցվող ծախսեր	8,108	3	1,640	1
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	2,881	1	(6,548)	(3)
Նախորդ տարիների շահութահարկի ճշտում	1,669	1	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**55,270**	**23**	**34,570**	**16**

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ՝

				2024թ.	
	2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավո-րություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(824)	363	(461)	-	(461)
Հաճախորդներին տրված վարկեր	(13,748)	(3,570)	(17,318)	-	(17,318)
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	3,635	1,044	4,679	4,679	-
Հիմնական միջոցներ	(8,328)	(14,114)	(22,442)	-	(22,442)
Այլ ակտիվներ	(4,881)	(1,461)	(6,342)	-	(6,342)
Վարկեր և փոխառություններ	3,714	(5,776)	(2,062)	-	(2,062)
Վարձակալության գծով պարտավորություն	9,146	15,188	24,334	24,334	-
Այլ պարտավորություններ	6,394	1,404	7,798	7,798	-
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	**(4,892)**	**(6,922)**	**(11,814)**	**36,811**	**(48,625)**

	2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	2023թ. Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավո-րություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(769)	(55)	(824)	-	(824)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,426)	(12,322)	(13,748)	-	(13,748)
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	1,531	2,104	3,635	3,635	-
Հիմնական միջոցներ	(8,548)	220	(8,328)	-	(8,328)
Այլ ակտիվներ	(2,065)	(2,816)	(4,881)	-	(4,881)
Վարկեր և փոխառություններ	4,538	(824)	3,714	3,714	-
Վարձակալության գծով պարտավորություն	11,183	(2,037)	9,146	9,146	-
Այլ պարտավորություններ	6,234	160	6,394	6,394	-
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	**10,678**	**(15,570)**	**(4,892)**	**22,889**	**(27,781)**

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկային հաշիվներ	256,046	173,746
Այլ կարճաժամկետ պահանջներ	282	272
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**256,328**	**174,018**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 225,215 հազար դրամ գումարով (88%) բանկային հաշիվները տեղաբաշխված են մեկ բանկում, (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 160,223 հազար դրամ (92%) չորս բանկերում):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում:

14 Հակադարձ հետգնման պայմանագրեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հակադարձ հետգնման պայմանագրեր ՀՀ բանկերի հետ	-	284,168
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	**284,168**

Հակադարձ հետգնման պայմանագրերով տրամադրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

	2023	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական արժեթղթեր	336,753	284,168
Ընդամենը գնված ակտիվներ և հետգնման պայմանագրերով տրամադրված վարկեր	**336,753**	**284,168**

15 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	600,749	86,671
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**600,749**	**86,671**

Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	727,336	895,121
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**727,336**	**895,121**

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ բանկերում, Կազմակերպության պարտազանցման բացակայության դեպքում գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով, բայց գործընկերոջ կողմից պայմանագրի ժամկետի ավարտին արժեթղթերը հետ վերադարձնելու պայմանով: Կազմակերպությունը սահմանել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերն ու հատույցները և հետևաբար, չի ապաճանաչում դրանք: Գրավադրված արժեթղթերի դիմաց հաշվառվող պարտավորությունները ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստները աննշան են, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	3.95 - 7.15	2025-2029	7.15	2025

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Կազմակերպությունը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող:

16 Հաճախորդներին տրված վարկեր

	31 դեկտեմբերի 2024թ.			31 դեկտեմբերի 2023թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Գյուղատնտեսական վարկեր						
Բուսաբուծություն	4,144,642	(85,510)	4,059,132	4,130,324	(67,305)	4,063,019
Անասնապահություն	4,686,806	(96,898)	4,589,908	5,318,158	(100,467)	5,217,691
Ձկնաբուծություն	69,114	(1,109)	68,005	89,068	(1,388)	87,680
	8,900,562	**(183,517)**	**8,717,045**	**9,537,550**	**(169,160)**	**9,368,390**
Այլ վարկեր						
Առևտուր	1,454,569	(32,496)	1,422,073	1,073,669	(17,589)	1,056,080
Արդյունաբերություն	112,687	(2,761)	109,926	105,597	(2,030)	103,567
Սպառողական	3,600,226	(49,055)	3,551,171	1,103,733	(18,804)	1,084,929
Ֆինանսական հատված	119,275	(2,069)	117,206	-	-	-
Այլ	334,178	(5,670)	328,508	265,319	(9,210)	256,109
	5,620,935	**(92,051)**	**5,528,884**	**2,548,318**	**(47,633)**	**2,500,685**
Ընդամենը	**14,521,497**	**(275,568)**	**14,245,929**	**12,085,868**	**(216,793)**	**11,869,075**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավներից ձեռքբերում (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Կազմակերպությունը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 10,899 հազար դրամ: Կազմակերպությունը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի վարկառու (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որին տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

Գյուղատնտեսական և այլ վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Գյուղատնտեսական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	9,429,773	32,646	75,131	9,537,550
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	7,051,609	83,169	4,500	7,139,278
Մարված ակտիվներ	(7,669,990)	(57,852)	(65,960)	(7,793,802)
- փոխանցում Փուլ 1	16,902	(11,353)	(5,549)	-
- փոխանցում Փուլ 2	(70,666)	89,838	(19,172)	-
- փոխանցում Փուլ 3	(101,818)	(2,515)	104,333	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	7,558	-	203	7,761
Զուտ վերականգնում տարվա ընթացքում	-	-	9,775	9,775
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,663,368**	**133,933**	**103,261**	**8,900,562**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Այլ վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,534,091	2,763	11,464	2,548,318
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	4,672,945	12,314	400	4,685,659
Մարված ակտիվներ	(1,595,115)	(3,867)	(13,134)	(1,612,116)
- փոխանցում Փուլ 2	(7,779)	7,779	-	-
- փոխանցում Փուլ 3	(13,074)	(2,763)	15,837	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	4,338	-	122	4,460
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,386)	(5,386)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,595,406**	**16,226**	**9,303**	**5,620,935**

	2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Գյուղատնտեսական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	10,340,351	117,182	188,498	10,646,031
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	6,850,903	16,840	17,094	6,884,837
Մարված ակտիվներ	(7,766,990)	(68,341)	(130,822)	(7,966,153)
- փոխանցում Փուլ 1	83,811	(41,536)	(42,275)	-
- փոխանցում Փուլ 2	(22,892)	24,060	(1,168)	-
- փոխանցում Փուլ 3	(41,744)	(15,374)	57,118	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(13,666)	(185)	(821)	(14,672)
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(12,493)	(12,493)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,429,773**	**32,646**	**75,131**	**9,537,550**

	2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Այլ վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,678,826	6,809	66,152	1,751,787
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,072,379	3,000	6,106	2,081,485
Մարված ակտիվներ	(1,219,963)	(532)	(25,299)	(1,245,794)
- փոխանցում Փուլ 1	16,850	(5,204)	(11,646)	-
- փոխանցում Փուլ 3	(7,716)	(1,201)	8,917	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(6,285)	(109)	-	(6,394)
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(32,766)	(32,766)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,534,091**	**2,763**	**11,464**	**2,548,318**

Գյուղատնտեսական և այլ վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Գյուղատնտեսական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	140,255	1,192	27,713	169,160
- փոխանցում Փուլ 1	4,648	(361)	(4,287)	-
- փոխանցում Փուլ 2	(1,030)	7,008	(5,978)	-
- փոխանցում Փուլ 3	(1,585)	(97)	1,682	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(92,501)	(3,645)	13,036	(83,110)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	80,496	4,890	2,306	87,692
Զուտ վերականգնում տարվա ընթացքում	-	-	9,775	9,775
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**130,283**	**8,987**	**44,247**	**183,517**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Այլ վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	38,839	385	8,409	47,633
- փոխանցում Փուլ 2	(110)	110	-	-
- փոխանցում Փուլ 3	(189)	(385)	574	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(16,244)	94	5,487	(10,663)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	59,162	1,233	72	60,467
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,386)	(5,386)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**81,458**	**1,437**	**9,156**	**92,051**

	2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Գյուղատնտեսական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	184,408	5,272	64,755	254,435
- փոխանցում Փուլ 1	16,916	(1,913)	(15,003)	-
- փոխանցում Փուլ 2	(386)	933	(547)	-
- փոխանցում Փուլ 3	(838)	(975)	1,813	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(140,330)	(2,812)	(13,422)	(156,564)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	80,485	687	2,610	83,782
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(12,493)	(12,493)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**140,255**	**1,192**	**27,713**	**169,160**

	2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Այլ վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	32,749	238	29,915	62,902
- փոխանցում Փուլ 1	4,614	(199)	(4,415)	-
- փոխանցում Փուլ 3	(140)	(30)	170	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(24,169)	(9)	8,908	(15,270)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	25,785	385	6,597	32,767
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(32,766)	(32,766)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**38,839**	**385**	**8,409**	**47,633**

2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված 1,539,274 հազար դրամ համախառն գումարով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 657,851 հազար ՀՀ դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը հանդիսանում է ապահովություն վարկային կազմակերպություններից ստացված վարկերի և 6,933,527 հազար ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,837,082 հազար ՀՀ դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը՝ ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերի դիմաց (տե՛ս Ծանոթագրություն 21):

Ինչպես նշված է Ծանոթագրություն 30-ում, 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է Ծանոթագրություն 33-ում:

Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է Ծանոթագրություն 29-ում:

17 Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր

	2024թ.	2023թ.
Մասնավոր ձեռնարկություններ	615,888	439,346
Ֆիզիկական անձինք	351,402	271,233
Անհատ ձեռնարկատերեր	714,287	508,570
	1,681,577	**1,219,149**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(25,993)	(20,197)
Ընդամենը ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ	**1,655,584**	**1,198,952**

Ֆինանսական վարձակալության գծով գծով զուտ ներդրումների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

				2024թ.
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,209,320	7,496	2,333	1,219,149
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	879,111	-	-	879,111
Մարված ակտիվներ	(412,180)	(8,465)	-	(420,645)
- փոխանցում Փուլ 2	(766)	3,099	(2,333)	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	3,962	-	-	3,962
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,679,447**	**2,130**	**-**	**1,681,577**

				2023թ.
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	505,827	-	-	505,827
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	887,981	7,496	2,333	897,810
Մարված ակտիվներ	(293,282)	(836)	(344)	(294,462)
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	108,794	836	344	109,974
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,209,320**	**7,496**	**2,333**	**1,219,149**

Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումների ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	**18,061**	**814**	**1,322**	**20,197**
- փոխանցում Փուլ 2	(11)	1,333	(1,322)	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(3,853)	(2,088)	-	(5,941)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	11,737	-	-	11,737
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**25,934**	**59**	**-**	**25,993**

	2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	8,504	-	-	8,504
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(3,684)	-	-	(3,684)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված ակտիվների գծով	13,241	814	1,322	15,377
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**18,061**	**814**	**1,322**	**20,197**

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով համախառն դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետների հետևյալն է.

	2024թ.			
	Մինչև 1 տարի	**1 -5 տարի**	**5 տարուց ավել**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ	605,879	1,517,387	43,137	2,166,403
Չվաստակված ֆինանսական եկամուտ	(199,031)	(279,529)	(6,266)	(484,826)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը	**406,848**	**1,237,858**	**36,871**	**1,681,577**

	2023թ.			
	Մինչև 1 տարի	1 -5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ	392,650	1,173,121	27,282	1,593,053
Չվաստակված ֆինանսական եկամուտ	(141,307)	(227,048)	(5,549)	(373,904)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը	**251,343**	**946,073**	**21,733**	**1,219,149**

Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Շինարարություն	432,228	253,447
Տրանսպորտ և կապ	236,187	171,573
Բուսաբուծություն	409,416	359,400
Անասնապահություն	71,179	76,114
Առևտուր	206,484	147,929
Արդյունաբերություն	220,707	129,490
Այլ	105,376	81,196
Ընդամենը ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ՝ նախքան արժեզրկման գծով պահուստը	**1,681,577**	**1,219,149**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի լիզինգառու (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որոնց ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

Ինչպես նշված է Ծանոթագրություն 30-ում, 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է Ծանոթագրություն 33-ում:

18 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Շենքեր, շինություններ	Համակարգչային սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	775,485	282,437	109,505	159,125	38,666	129,263	1,494,481
Ավելացում	-	-	8,940	-	874	-	9,814
Վերաչափում	-	-	-	-	-	22,598	22,598
Օտարում	-	(4,562)	(4,696)	(5,710)	-	-	(14,968)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**775,485**	**277,875**	**113,749**	**153,415**	**39,540**	**151,861**	**1,511,925**
Ավելացում	4,295	19,927	11,950	22,685	-	9,995	68,852
Օտարում	-	(2,989)	**(1,262)**	**(12,428)**	**-**	**-**	(16,679)
Վերաչափում	-	-	-	-	-	102,902	102,902
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**779,780**	294,813	124,437	163,672	39,540	264,758	**1,667,000**
Կուտակված մաշվածություն							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	22,275	184,408	65,350	125,007	28,366	81,715	507,121
Տարվա ծախս	25,906	20,049	8,689	10,699	2,680	23,862	91,885
Օտարում	-	(4,562)	(4,446)	(4,950)	-	-	(13,958)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**48,181**	**199,895**	**69,593**	**130,756**	**31,046**	**105,577**	**585,048**
Տարվա ծախս	25,926	19,886	8,886	10,952	2,587	34,499	102,736
Օտարում	-	(2,989)	(1,164)	(12,428)	-	-	(16,581)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**74,107**	**216,792**	**77,315**	**129,280**	**33,633**	**140,076**	**671,203**
Հաշվեկշռային արժեք							
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**727,304**	**77,980**	**44,156**	**22,659**	**8,494**	**46,284**	**926,877**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**705,673**	**78,021**	**47,122**	**34,392**	**5,907**	**124,682**	**995,797**

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված և ամորտիզացված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 318,595 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 269,715 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության սեփականություն հանդիսացող անշարժ գույքը գրավադրված է երկու բանկերից ստացված վարկերի համար (2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես) (տե՛ս Ծանոթագրություն 21):

Պայմանագրային պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությանը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռք բերման գծով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

19 Բռնագանձված ակտիվներ

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ տարվա ընթացքում սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Անշարժ գույք	26,717	27,993
Այլ գույք	2,268	2,268
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**28,985**	**30,261**

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Կազմակերպության քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Կազմակերպությունը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները:

20 Այլ ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	66,857	53,580
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**66,857**	**53,580**
Ֆինանսական վարձակալության նպատակով ձեռք բերվելիք ակտիվների կանխավճարներ	26,033	101,644
Կանխավճարներ մատակարարներին	354	1,001
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	37,204	16,771
Արագամաշ առարկաներ	3,462	3,290
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**67,053**	**122,706**
Ընդամենը այլ ակտիվներ	**133,910**	**176,286**

Այլ ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում:

21 Վարկեր և փոխառություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	7,486,300	7,400,117
Վարկեր պետական ոչ առևտրային կազմակերպություններից	2,140,463	1,945,074
Վարկեր բանկերից	642,509	1,024,146
Վարկեր բանկերից հետգնման պայմանագրերով	752,122	908,224
Վարկեր վարկային կազմակերպություններից	1,600,068	593,945
Վարկային գծեր բանկերից	373	149,782
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	786,643	-
Ժամկետային փոխառություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններից	79,801	72,886
Ընդամենը վարկեր և փոխառություններ	**13,488,279**	**12,094,174**

Վարկեր ՀՀ կենտրոնական բանկից ներառում են վարկեր ստացված KfW զարգացման բանկի կողմից «ՀՀ գյուղատնտեսության Ոլորտի Աջակցման Ծրագրի», ՓՄՁ Աջակցման Ծրագրի վարկավորման շրջանակներում, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված վարկային ծրագրի շրջանակներում, Ասիական Զարգացման բանկի կողմից «Կանանց Ձեռներեցության Ոլորտի Աջակցման և Զարգացման Ծրագրի» շրջանակներում: Վարկերը տրվում են գյուղատնտեսական և մյուս տնտեսության ճյուղերում վարկեր տրամադրելու նպատակով և ապահովված են Կազմակերպության կողմից ենթավարկառուներին տրամադրված վարկերի ստացման իրավունքի զիջումով (տե՛ս Ծանոթագրություն 16):

ՀՀ պետական ոչ առևտրային կազմակերպություններից ստացված վարկերը ներառում են Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնից (նախկին Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան ծրագիր), «Գյուղական ֆինանսավորման կառույց-ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից ստացված փոխառություններ:

Վարկեր բանկերից ներկայացնում է BANK IM BISTUM ESSEN eG-ից ներգրավված վարկը: Վարկը տրամադրվել է միկրո,փոքր, միջին և ցածր եկամտաբերությամբ ձեռնարկություններին վարկավորելու նպատակով:

Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներկայացնում է MIKROFINANZFONDS-ից ստացված վարկը:

2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու բանկից ստացված վարկերն ապահովված են Կազմակերպության անշարժ գույքի գրավադրմամբ (2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ բանկից ստացված վարկը) (տե՛ս Ծանոթագրություն 18):

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2023թ.՝ նույնպես):

22 Թողարկված պարտքային արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Թողարկված պարտատոմսեր	1,224,087	-
Ընդամենը թողարկված պարտատոմսեր	**1,224,087**	**-**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
02/05/2024	ՀՀ դրամ	100,000	12,000	12.25	02/11/2026	1,200,000

Կազմակերպության պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Կազմակերպությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս:

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

23 Ստորադաս փոխառություն

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Միջազգային ֆինանսական կազմակերպությունից ստացված ստորադաս փոխառություն	888,441	887,997
Ընդամենը ստորադաս փոխառություն	**888,441**	**887,997**

2020թ. ընթացքում Կազմակերպությունը «Զարգացման Ֆրանսիական գործակալություն»-ից ստացել է 838,440 հազար դրամի ստորադաս փոխառություն, 12.75% տարեկան տոկոսադրույքով, որի մարման ժամկետը սահմանված է 15 հուլիսի 2030թ:

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկային համաձայնագիր, որը Կազմակերպության անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Կազմակերպության մնացած պարտավորությունների նկատմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2023թ.՝ նույնպես):

24 Ակտիվներին վերաբերվող շնորհներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	789	1,730
Եկամտի ճանաչում	(789)	(941)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**789**

25 Այլ պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Մատակարարներին վճարվելիք գումարներ	8,827	14,765
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	43,330	42,259
Այլ ֆինանսական պարտավորություններ	45,314	36,009
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**97,471**	**93,033**
Պարտավորություններ՝ անդամների հանդեպ կապիտալի համալրման հետ կապված	53,386	70,752
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	30,032	25,413
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**83,418**	**96,165**
Ընդամենը այլ պարտավորություններ	**180,889**	**189,198**

26 Կանոնադրական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 1,455,857 հազ. դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,370,362 հազ. դրամ): Կազմակերպությունը ունի 10,839 անդամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,234 անդամ):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կանոնադրական կապիտալի 561,252 հազ. դրամը կամ 38.6%-ը կազմում է «Գյուղ Կորպ աջակցության» հիմնադրամի փայմասնակցությունը (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գյուղ Կորպ աջակցության» հիմնադրամի փայմասնակցությունը կազմում է 561,252 հազ. դրամը կամ 41%): Մյուս անդամների յուրանքաչյուրի փայմասնակցության չափը չի գերազանցում 1%-ը:

Կազմակերպության յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ ունեցած փայմասնակցության (փայերի քանակի) չափից:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված փայմասնակցություններ չեն եղել:

2024թ և 2023թ. փայատերերի ժողովի ընթացքում Կազմակերպությունը շահաբաժիններ չի հայտարարել:

27 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար

մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Կազմակերպությանը ներկայացվող դատական հայցերի առումով Կազմակերպության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա: Հետևաբար Կազմակերպության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Քանի դեռ Կազմակերպությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ֆինանսական վարձակալություն տրամադրելու նպատակով ձեռք բերվելիք գույքի գծով պայմանագրային պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 28,661 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 30,812 հազար ՀՀ դրամ):

28 Վարձակալություններ

Վարձակալության գծով պարտավորություններ

Կազմակերպությունը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի գրասենյակային տարածքների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Կազմակերպությունը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս Ծանոթագրություն 18):

Գույքի վարձակալությունները երկարաժամկետ են և ունեն մինչև 5 տարի վարձակալության ժամկետ: Վարձակալության վճարները ֆիքսված են:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Կազմակերպությունը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Կազմակերպությանն արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Կազմակերպությունը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

	2024թ.	2023թ.
Հունվարի 1-ի դրությամբ	50,810	62,129
Ավելացում	9,995	-
Վերաչափում	102,902	22,598
Տոկոսի կուտակում	14,411	4,273
Վճարումներ	(42,930)	(38,190)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**135,188**	**50,810**

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տողում:

2024թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 12.7% (2023թ.՝ 12.1%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չզեղջված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է Ծանոթագրություն 33.3-ում:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Կազմակերպությունն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով (Ծանոթագրություն 11):

29 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Կազմակերպության կապակցված կողմերն են՝ նրա փայատերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Կազմակերպությունը չունի վերջնական վերահսկող անձ:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկեր և այլն:

	2024թ.	2023թ.
	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
Հաճախորդներին տրված վարկեր		
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ,	296,727	541,943
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	180,841	301,579
Տարվա ընթացքում մարված վարկեր	(86,642)	(546,795)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	**390,926**	**296,727**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(6,368)	(4,644)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**384,558**	**292,083**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր		
1 հունվարի դրությամբ	7,565	2,336
Տարվա ընթացքում տրամադրված	-	6,143
Տարվա ընթացքում մարված	(1,330)	(914)
Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ	**6,235**	**7,565**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(94)	(109)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,141**	**7,456**
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	**18,198**	21,285
Տոկոսային եկամուտ ֆինանսական վարձակալության գծով	**905**	859
Պարտքային կորուստների գծով (ծախս) հակադարձում	**(1,709)**	5,926
Հասարակական կապերի գծով ծախսեր	**(11,400)**	(11,200)

Կապակցված անձանց տրամադրված վարկերը վճարման ենթակա են 1-9 տարվա ընթացքում և դրանց միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 2-31.9% (2023թ.՝ 2-23.9%): Ցածր տոկոսադրույքով վարկերը սկզբնապես ճանաչվել են կիրառելով շուկայական տոկոսադրույքներ և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են իրական արժեքով:

Կապակցված անձանց տրամադրված ֆինանսական վարձակալության գծով գումարները ենթակա են վճարման 3-6 տարվա ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 12-13.4% (2023թ.՝ 12.2-13.4%):

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	170,742	168,405
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**170,742**	**168,405**

30 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

30.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

	31 դեկտեմբերի 2024թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	256,328	-	256,328	256,328
Հաճախորդներին տրված վարկեր	-	14,157,023	-	14,157,023	14,245,929
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	-	1,655,584	-	1,655,584	1,655,584
Ներդրումային արժեթղթեր	-	600,749	-	600,749	600,749
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	727,336	-	727,336	727,336
Այլ ակտիվներ	-	66,857	-	66,857	66,857

	31 դեկտեմբերի 2024թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	-	13,488,279	-	13,488,279	13,488,279
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,246,860	-	1,246,860	1,224,087
Ստորադաս փոխառություն	-	888,441	-	888,441	888,441
Վարձակալության գծով պարտավորություններ	-	135,188	-	135,188	135,188
Այլ պարտավորություններ	-	97,471	-	97,471	97,471

	31 դեկտեմբերի 2023թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	174,018	-	174,018	174,018
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	284,168	-	284,168	284,168
Հաճախորդներին տրված վարկեր	-	11,820,863	-	11,820,863	11,869,075
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	-	1,198,952	-	1,198,952	1,198,952
Ներդրումային արժեթղթեր	-	71,105		71,105	86,671
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	932,730	-	932,730	895,121
Այլ ակտիվներ	-	53,580	-	53,580	53,580
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություն	-	12,094,174	-	12,094,174	12,094,174
Ստորադաս փոխառություններ	-	887,997	-	887,997	887,997
Վարձակալության գծով պարտավորություններ	-	50,810		50,810	50,810
Այլ պարտավորություններ	-	93,033	-	93,033	93,033

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի

հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով:

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Վարկեր և փոխառություններ

Այս պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող գործիքների համար առաջարկվող դրույքաչափերը:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

31 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Կազմակերպությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

				31 դեկտեմբերի 2024թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր բանկերից հետգնման պայմանագրերով (Ծանոթագրություն 15, 21)	752,122	-	752,122	(727,336)	-	24,786
Ընդամենը	**752,122**	**-**	**752,122**	**(727,336)**	**-**	**24,786**

	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	31 դեկտեմբերի 2023թ. Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
ՀՀ բանկերի հետ հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթագրություն 14)	284,168	-	284,168	-	284,168	-
Ընդամենը	**284,168**	**-**	**284,168**	**-**	**284,168**	**-**
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր բանկերից հետգնման պայմանագրերով (Ծանոթագրություն 15, 21)	908,224	-	908,224	(895,121)	-	13,103
Ընդամենը	**908,224**	**-**	**908,224**	**(895,121)**	**-**	**13,103**

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն արժեքները և դրանց զուտ արժեքները, որոնք ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ և բացահայտվել են վերոնշյալ աղյուսակներում, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ չափվում են ամորտիզացված արժեքով:

32 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների:

Կազմակերպության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 33.3-ում:

31 դեկտեմբերի 2024թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	256,328	-	256,328	-	-	-	256,328
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	600,749	600,749	-	-	-	600,749
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	370,368	370,368	356,968	-	356,968	727,336
Հաճախորդներին տրված վարկեր	345,294	5,266,262	5,611,556	7,871,582	762,791	8,634,373	14,245,929
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	34,085	366,474	400,559	1,218,724	36,301	1,255,025	1,655,584
Այլ ակտիվներ	66,857	-	66,857	-	-	-	66,857
	702,564	**6,603,853**	**7,306,417**	**9,447,274**	**799,092**	**10,246,366**	**17,552,783**
Պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	910,893	3,544,757	4,455,650	7,547,724	1,484,905	9,032,629	13,488,279
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	24,087	24,087	1,200,000	-	1,200,000	1,224,087
Ստորադաս փոխառություն	50,454	-	50,454	279,329	558,658	837,987	888,441
Վարձակալության գծով պարտավորություններ	3,209	35,415	38,624	96,564	-	96,564	135,188
Այլ պարտավորություններ	97,471	-	97,471	-	-	-	97,471
	1,062,027	**3,604,259**	**4,666,286**	**9,123,617**	**2,043,563**	**11,167,180**	**15,833,466**
Զուտ դիրք	**(359,463)**	**2,999,594**	**2,640,131**	**323,657**	**(1,244,471)**	**(920,814)**	**1,719,317**
Կուտակված ճեղքվածք	**(359,463)**	**2,640,131**		**2,963,788**	**1,719,317**		

	31 դեկտեմբերի 2023թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	174,018	-	*174,018*	-	-	-	174,018
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	284,168	*284,168*	-	-	-	284,168
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	18,427	*18,427*	68,244	-	*68,244*	86,671
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	895,121	*895,121*	-	-	-	895,121
Հաճախորդներին տրված վարկեր	339,354	5,656,415	*5,995,769*	5,681,240	192,066	*5,873,306*	11,869,075
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	23,258	223,921	*247,179*	930,400	21,373	*951,773*	1,198,952
Այլ ակտիվներ	53,580	-	*53,580*	-	-	-	53,580
	590,210	**7,078,052**	***7,668,262***	**6,679,884**	**213,439**	***6,893,323***	**14,561,585**
Պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	18,815	5,179,530	*5,198,345*	5,924,517	971,312	*6,895,829*	12,094,174
Ստորադաս փոխառություն	49,887	-	*49,887*	-	838,110	*838,110*	887,997
Վարձակալության գծով պարտավորություններ	2,434	13,859	*16,293*	34,517	-	*34,517*	50,810
Այլ պարտավորություններ	93,033	-	*93,033*	-	-	-	93,033
	164,169	**5,193,389**	***5,357,558***	**5,959,034**	**1,809,422**	***7,768,456***	**13,126,014**
Զուտ դիրք	**426,041**	**1,884,663**	***2,310,704***	**720,850**	**(1,595,983)**	***(875,133)***	**1,435,571**
Կուտակված ճեղքվածք	**426,041**	**2,310,704**		**3,031,554**	**1,435,571**		

33 Ռիսկի կառավարում

Կազմակերպության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Կազմակերպությունն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Կազմակերպության շահութաբերության կայունության ապահովման գործում, և Կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Կազմակերպությունը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Կազմակերպության կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Տնօրինության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Կազմակերպության Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Գլխավոր գործադիր տնօրեն

Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի իրականացման և վերահսկման համար: Պատասխանատու է Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Պատասխանատվություն է կրում նաև Կազմակերպության իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի կառավարման համար:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում վարկերի տրամադրման գործընթացում ռիսկերի կառավարման համար:

Ներքին աուդիտ

Կազմակերպության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը Ընդհանուր ժողովի կողմից հաստատված աշխատանքային պլանին համապատասխան աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, ով ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Կազմակերպության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է խորհրդին:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը իրականացվում է հաշվի առնելով Կազմակերպության գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Կազմակերպությունը, ինչպես նաև Կազմակերպության համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Կազմակերպությունը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Կազմակերպության ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես ակնկալվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Կազմակերպությունը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Կազմակերպության կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Կազմակերպության գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Կազմակերպությունը, ինչպես նաև Կազմակերպության համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Կազմակերպությունը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Կազմակերպությունը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Կազմակերպության բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Կազմակերպության բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Կազմակերպության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Կազմակերպության քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը:

33.1 Պարտքային ռիսկ

Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Կազմակերպությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Կազմակերպության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Կազմակերպությունը այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Կազմակերպության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Կազմակերպության ՌԿՎ պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Կազմակերպության ղեկավարությանը:

33.1.1 Պարտքային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Կազմակերպության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված հանձնառությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 33.1.2-ում:

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2024թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	256,328	-	-	256,328
Զուտ հաշվեկշռային արժեք	**256,328**	**-**	**-**	**256,328**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Ստանդարտ	600,749	-	-	600,749
Զուտ հաշվեկշռային արժեք	**600,749**	**-**	**-**	**600,749**

Ներքին վարկանիշեր

	31 դեկտեմբերի 2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Ստանդարտ	727,336	-	-	727,336
Զուտ հաշվեկշռային արժեք	**727,336**	**-**	**-**	**727,336**
Գյուղատնտեսական վարկեր				
Բարձր	8,658,826	-	-	8,658,826
Ստանդարտ	4,542	128,061		132,603
Ցածր	-	5,872		5,872
Չաշխատող	-	-	103,261	103,261
Համախառն հաշվեկշռային արժեք	**8,663,368**	**133,933**	**103,261**	**8,900,562**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(130,283)	(8,987)	(44,247)	(183,517)
Զուտ հաշվեկշռային արժեք	**8,533,085**	**124,946**	**59,014**	**8,717,045**
Այլ վարկեր				
Բարձր	5,590,456	-	-	5,590,456
Ստանդարտ	4,950	16,226	-	21,176
Չաշխատող	-	-	9,303	9,303
Համախառն հաշվեկշռային արժեք	**5,595,406**	**16,226**	**9,303**	**5,620,935**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(81,458)	(1,437)	(9,156)	(92,051)
Զուտ հաշվեկշռային արժեք	**5,513,948**	**14,789**	**147**	**5,528,884**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
Բարձր	1,679,447	-	-	1,679,447
Ստանդարտ	-	2,130	-	2,130
Չաշխատող	-	-	-	-
Համախառն հաշվեկշռային արժեք	**1,679,447**	**2,130**	**-**	**1,681,577**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(25,934)	(59)	-	(25,993)
Զուտ հաշվեկշռային արժեք	**1,653,513**	**2,071**	**-**	**1,655,584**
Այլ ֆինանսական ակտիվներ				
Բարձր վարկանիշ	66,857	-	-	66,857
Զուտ հաշվեկշռային արժեք	**66,857**	**-**	**-**	**66,857**

Ներքին վարկանիշեր

	31 դեկտեմբերի 2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	174,018	-	-	174,018
Զուտ հաշվեկշռային արժեք	**174,018**	**-**	**-**	**174,018**

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հակադարձ հետգնման պայմանագրեր				
Ստանդարտ	284,168	-	-	284,168
Զուտ հաշվեկշռային արժեք	**284,168**	**-**	**-**	**284,168**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Ստանդարտ	86,671	-	-	86,671
Զուտ հաշվեկշռային արժեք	**86,671**	**-**	**-**	**86,671**
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Ստանդարտ	895,121	-	-	895,121
Զուտ հաշվեկշռային արժեք	**895,121**	**-**	**-**	**895,121**
Գյուղատնտեսական վարկեր				
Բարձր	9,428,339	-	-	9,428,339
Ստանդարտ	1,434	32,411	-	33,845
Ցածր	-	235	-	235
Չաշխատող	-	-	75,131	75,131
Համախառն հաշվեկշռային արժեք	**9,429,773**	**32,646**	**75,131**	**9,537,550**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(140,255)	(1,192)	(27,713)	(169,160)
Զուտ հաշվեկշռային արժեք	**9,289,518**	**31,454**	**47,418**	**9,368,390**
Այլ վարկեր				
Բարձր	2,534,091	-	-	2,534,091
Ստանդարտ	-	2,763	-	2,763
Չաշխատող	-	-	11,464	11,464
Համախառն հաշվեկշռային արժեք	**2,534,091**	**2,763**	**11,464**	**2,548,318**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(38,839)	(385)	(8,409)	(47,633)
Զուտ հաշվեկշռային արժեք	**2,495,252**	**2,378**	**3,055**	**2,500,685**
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր				
Բարձր	1,209,320	-	-	1,209,320
Ստանդարտ	-	7,496	-	7,496
Չաշխատող	-	-	2,333	2,333
Համախառն հաշվեկշռային արժեք	**1,209,320**	**7,496**	**2,333**	**1,219,149**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(18,061)	(814)	(1,322)	(20,197)
Զուտ հաշվեկշռային արժեք	**1,191,259**	**6,682**	**1,011**	**1,198,952**
Այլ ֆինանսական ակտիվներ				
Բարձր վարկանիշ	53,580	-	-	53,580
Զուտ հաշվեկշռային արժեք	**53,580**	**-**	**-**	**53,580**

33.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Կազմակերպության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ)):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Կազմակերպությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Կազմակերպությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Կազմակերպությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Կազմակերպությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Կազմակերպությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան):Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Կազմակերպության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Կազմակերպությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

		2024թ.	2023թ
	Վարկանիշ	12-ամսյա PD –ի միջակայք	12-ամսյա PD –ի միջակայք
Գյուղատնտեսական վարկեր	Բարձր	1.25-2.32%	1.65%-2.07%
	Ստանդարտ	1.25-9.85%	1.65%-6.19%
	Ոչ ստանդարտ	60.37-61.02%	64.22%
	Չաշխատող	100%	100%
Այլ վարկեր	Բարձր	1.25-2.32%	1.65%-2.07%
	Ստանդարտ	2.32-9.85%	4.54%
	Չաշխատող	100%	100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Կազմակերպության գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

		2024թ.	2023թ.
	Վարկանիշ	12-ամսյա PD	12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.023%	0.001-0.028%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.040-3.137%	0.047-2.813%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	5.403-27.625%	4.695-21,841%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Կազմակերպությունը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,

- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Կազմակերպությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի մեծությունը
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Պարտազանցման սահմանում և «առողջացում»

Կազմակերպությունը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների նպատակով բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են, բացառությամբ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի, փոխառությունների և պարտքային ներդրումային արժեթղթերի, որոնց պայմանագրային վճարումները 30 օր ժամկետանց են:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Կազմակերպությունը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Կազմակերպությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն պարտազանցման ենթարկված է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- Կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Կազմակերպության քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում պարտազանցման սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի

մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Կազմակերպության՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Կազմակերպությունը վերանայված կամ վերաֆինանսավորված վարկերը, որը պայմանավորված է վարկառուի վատ ֆինանսական վիճակով, դիտարկում է դեֆոլտի ենթարկված:

Կազմակերպությունը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ կանխատեսվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են պարտազանցումից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին

մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Կազմակերպության պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է Ծանոթագրություն 4.6(գ)-ի գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Կազմակերպությունը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Կազմակերպությունը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները:Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Կազմակերպությունն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- Սպառողական գների ինդեկս,
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ,
- Տնտեսական ակտիվության ցուցանիշ,
- ԱՄՆ դոլարի փոխարժեք
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

33.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

33.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- Գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները,
- Շարժական գույքը՝ բեռնատար և մարդատար ավտոմեքենաներ, գյուղատնտեսական տեխնիկա, սարքավորումներ:
- ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի դեպքում՝ երաշխիքներ:

Վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Կազմակերպությունը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ և երաշխավորություններ է պահանջում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Անշարժ գույք	4,705,334	4,806,495
Երաշխավորություններ	8,426,041	5,944,905
Շարժական գույք և այլ հիմնական միջոցներ	442,731	413,916
Գրավով չապահոված վարկեր	947,391	920,552
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**14,521,497**	**12,085,868**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի համախառն հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների

գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

2024 և 2023թթ.-ի դեկեմբերի 31-ի դրությամբ ապահովվածություն չունեցող վարկերը տրամադրված են երրորդ անձանց երաշխավորությամբ:

33.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

33.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Կազմակերպության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2024թ.			2023թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	-	-	-	5	-
Հաճախորդներին տրված վարկեր	14.82	13.68	-	14.28	11.34	-
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	14.68	15.06	-	14.05	14.16	
Ներդրումային արժեթղթեր	-	6.28	-	-	7.33	-

	2024թ.			2023թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր պարտավորություններ						
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	8.2	-	-	7.26	-	-
Վարկեր պետական ոչ առևտրային կազմակերպություն-ներից	5.3	4.1	-	4.9	4	-
Վարկեր ստացված բանկերից	13.7	6.8	-	13.72	6.8	-
Վարկեր բանկերից հետգնման պայմանագրերով	8.8	-	-	11.2	-	-
Վարկային գծեր բանկերից	12.9	-	-	13.2	-	-
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	-	7.8	-	-	-	-
Վարկեր վարկային կազմակերպություններից	9.6	-	-	9.4	-	-
Ժամկետային փոխառություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններից	6.9	-	-	6.9	-	-
Ստորադաս փոխառություն	13.16	-	-	13.16	-	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	12.25	-	-	-	-	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+5	59,191	+5	53,432
ԱՄՆ դոլար	(5)	(59,191)	(5)	(53,432)

Կազմակերպության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	31 դեկտեմբերի 2024թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,130	234,781	417	256,328
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	600,749	-	600,749
Հետգնման պայմանագրերով գրավադրված Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	727,336	-	727,336
Հաճախորդներին տրված վարկեր	13,356,323	889,606	-	14,245,929
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	1,434,729	220,855	-	1,655,584
Այլ ակտիվներ	66,857	-	-	66,857
Ընդամենը	**14,879,039**	**2,673,327**	**417**	**17,552,783**
Պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	11,998,943	1,489,336	-	13,488,279
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,224,087	-	-	1,224,087
Ստորադաս փոխառություններ	888,441	-	-	888,441
Վարձակալության գծով պարտավորություններ	135,188	-	-	135,188
Այլ պարտավորություններ	97,303	168	-	97,471
Ընդամենը	**14,343,962**	**1,489,504**	**-**	**15,833,466**
Զուտ դիրք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**535,077**	**1,183,823**	**417**	**1,719,317**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**12,259,878**	**2,301,707**	**-**	**14,561,585**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**11,892,941**	**1,233,073**	**-**	**13,126,014**
Զուտ դիրք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**366,937**	**1,068,634**	**-**	**1,435,571**

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն: Ոչ փոխարկելի արժույթն է ռուսական ռուբլին:

33.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Կազմակերպությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև

սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Կազմակերպությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Կազմակերպության հետ մասնավորապես:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս Ծանոթագրություն 32-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

31 դեկտեմբերի 2024թ

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	919,831	4,183,219	8,835,366	1,553,417	15,491,833	13,488,279
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	147,000	1,347,000	-	1,494,000	1,224,087
Ստորադաս փոխառություն	53,890	53,011	707,670	612,362	1,426,933	888,441
Վարձակալության գծով պարտավորություններ	3,820	42,020	121,280	-	167,120	135,188
Այլ պարտավորություններ	97,471	-	-	-	97,471	97,471
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**1,075,012**	**4,425,250**	**11,011,316**	**2,165,779**	**18,677,357**	**15,833,466**

	31 դեկտեմբերի 2023թ					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	21,149	5,723,323	6,577,685	1,197,025	13,519,182	12,094,174
Ստորադաս փոխառություն	53,304	53,304	428,483	998,450	1,533,541	887,997
Վարձակալության գծով պարտավորություններ	2,687	16,542	43,333	-	62,562	50,810
Այլ պարտավորություններ	93,033	-	-	-	93,033	93,033
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**170,173**	**5,793,169**	**7,049,501**	**2,195,475**	**15,208,318**	**13,126,014**

33.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Կազմակերպության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Խմբի/Կազմակերպության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Կազմակերպության Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Կազմակերպության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը

քննարկվում են Կազմակերպության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

34 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Կազմակերպության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Վարկեր և փոխառություններ	Թողարկված արժեթղթեր	Վարձակալության գծով պարտավորություններ	Ստորադաս փոխառություններ	Պարտավորություններ անդամների հանդեպ՝ կապիտալի համալրման հետ կապված	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,815,414	-	62,129	888,651	64,755	12,830,949
Մուտքեր	15,189,791	-	-	-	83,123	15,272,914
Ելքեր	(14,949,115)	-	(38,190)	-	-	(14,987,305)
Կապիտալի համալրում	-	-	-	-	(77,126)	(77,126)
Վարձակալության գծով պարտավորությունների վերաչափում	-	-	22,598	-	-	22,598
Փոխարժեքային տարբերություն	38,084	-	-	-	-	38,084
Հաշվեգրված տոկոսներ	-	-	4,273	(654)	-	3,619
Հաշվեկշռային արժեք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**12,094,174**	**-**	**50,810**	**887,997**	**70,752**	**13,103,733**
Մուտքեր	14,701,477	1,200,000	-	-	68,129	15,969,606
Ելքեր	(13,274,462)	-	(42,930)	-	-	(13,317,392)
Կապիտալի համալրում	-	-	-	-	(85,495)	(85,495)
Վարձակալության գծով պարտավորությունների վերաչափում	-	-	112,897	-	-	112,897
Փոխարժեքային տարբերություն	(26,434)	-	-	-	-	(26,434)
Հաշվեգրված տոկոսներ	(6,476)	24,087	14,411	444	-	32,466
Հաշվեկշռային արժեք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,488,279**	**1,224,087**	**135,188**	**888,441**	**53,386**	**15,789,381**

Կազմակերպությունը դասակարգում է վճարված տոկոսները (բացառությամբ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունների) որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

35 Կապիտալի համարժեքություն

Կազմակերպությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Կազմակերպության կապիտալը վերահսկվում է օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Կազմակերպության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Կազմակերպության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ

Կազմակերպությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու համար:

Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավող (թողարկող) վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը:

Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է սուբորդինացված փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային ռիսկի գնահատման:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտի չենթարկված	
	31 դեկտեմբերի 2024թ.	**31 դեկտեմբերի 2024թ.**
Հիմնական կապիտալ	2,259,603	2,204,251
Լրացուցիչ կապիտալ	838,440	335,376
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	**3,398,043**	**2,539,627**
Ռիսկով կշռված ակտիվներ	16,742,602	13,041,270
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**20.3%**	**19.5%**

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կանխիկ ձևով արտարժույթի առուվաճառք իրականացնող, ինչպես նաև արժեթուղթ թողարկող վարկային կազմակերպությունների համար սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

36 Սեգմենտային հաշվետվություններ

Կազմակերպության գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամուտը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Կազմակերպությունը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Կազմակերպության ակտիվները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ ԱԿ
ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

-- --------- 20--թ.

ՓԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ ԱԿ

.....

(թողարկողի անվանումը)

Կորպորատիվ անվանական, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր

.....

(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է՝ --.--.-20--թ., ԿԲ նախագահի թիվ --- որոշմամբ), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են Փարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ-ում, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16 հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ

(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված):

1.	Թողարկողը՝	Փարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ
2.	Երաշխավորողը՝	-
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)՝	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը՝	Ենթակա է որոշման «Փարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր	Մանրամասն ներկայացված է Ծրագրային Ազդագրի 2.3.2 կետում՝ «Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն»: Ծրագրային ազդագրին կարելի է ծանոթանալ «Փարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ ինտերնետային կայքում՝ www.fca.am:

	թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	
6.	Թողարկման արժույթ՝	ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
8.	Անվանական արժեքը՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը՝	Համապատասխան Թողարկման ծավալի և անվանական արժեքի, այսինքն՝ Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
12.	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր՝	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը՝	Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի 2026 թվականի հուլիսի 20-ի թիվ 05 որոշում
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը՝	փաստացի/փաստացի
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
20.	Ջրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով

Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը՝	անվանական արժեքով
23.	Մարման արժեքի փոփոխությունը	Չի նախատեսվում
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն՝	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն՝	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	

Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87, 85-րդ տարածք
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն՝	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրի
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկությունների այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))՝	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Թողարկողը տասը աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Պարտատոմսերի թողարկմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:
30.	Արժեթղթերի վարկանիշը՝	Ոչ կիրառելի
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը՝	Ենթակա է որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Արմեն Գաբրիելյան	**«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Գլխավոր գործադիր տնօրեն**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)